անգլերեն լեզվով բիզնես ծրագիրը, դիմեցի «Ամերիա» կազմակերպությանը եղած տվյալների և իրենց ուսումնասիրության արդյունքում գրեցին բիզնես ծրագիր և ներկայացրեցին վարկային կոմիտեին: Մի քանի օրից «Ամերիաբանկ»-ի վարկային կոմիտեն հաստատեց մեր վարկը 12 տոկոսով, 12 միլիոն ԱՄՆ դոլար՝ 10 տարի մարման ժամկետով և մեկ տարի առավելագույն մայր գումարը չփակելու պայմանով: Բանկից ասել են, որ բերեն նկարների մեջ եղած գույքերի օրիգինալ վկայականները և կադաստրից միասնական տեղեկանքները: Ինքն ասել է Փայլակին, որը շատ է ուրախացել և մի անգամից տխրել ասելով, որ այդ գույքերի մեջ կան գույքեր, որոնք գրավադրված են ուրիշ բանկերում: Ինքը շատ է վիրավորվել, քանի որ Փայլակը խաբել է իրեն ասելով, որ Արգավանդում փեսայի անունով հողատարածք ունի, որը վաճառել և կանխավճար է վերցրել, որ սկզբից գրավադրեն իր գործարանը Գաջեգործների հասցեում գտնվող, որը ազատ է և այդ գումարով փակենք իր պարտքերը, որը շատ արագվերադարձնի, որ բիզնեսը չտուժի: Երբ իր աշխատողներ Արփի Բայանը գնացել և ստուգել է, պարզվել է, որ Փայլակի պարտքերը «Զարգացմանբանկ»-ում և «HSBC»-ի բանկում կազմում է 756.000 ԱՄՆ դոլար: Բացի այդ հարկերը, որոնք արդեն դասակարգվել էին և հարկադիր կատարման հետ պրոբլեմներ էին սկսվել, քանի որ Փայլակը ուներ շատ պարտքեր և գույքահարկի, գազի, ջրի, լույսի և անձնական պարտքեր, որոնց ընդհանուր գումարը հասել էր 875.000 ԱՄՆ դոլարի: Ինքը ընթացքում շատ վիրավորվել է, փորձել է հրաժարվել այդ վարկից ասելով հնարավոր է ուրիշ գույքեր ներկայացնենք, բայց բանկը ասել է որ վարկը արդեն հաստատված է այդ գրավների առկայության դեպքում: Հասկացել է, որ եթե հրաժարվի լավ չի լինի, քանի որ ինքը շատ լավ վարկային կենսագրություն ունի և բավականին գումար է ծախսել: Հետագայում պարզվել է, որ Փայլակի գույքերը ինքնական, ապօրինի և խնդրահարույց գույքեր են, որոնք չունեն նույնիսկ կադաստրային ձևակերպումներ: Այդ մասին դատարանում վկայել է նաև Փայլակ Հայրապետյանի իրավախորհրդատու և գործերի կառավարիչ Սասուն Նապարյանը: Գույքերը շատ խնդիրներ ունեին, որոնց մի մասը Փայլակի հետ կապ չունեին, միայն ձեռքը դրել է վրան, բայց հողերը սեփական չէին, հարևանների հետ համաձայնության խնդիրներ ուներ, ձևակերպված չէին ժառանգության խնդիրները, միայն Քոչար 4/9 շենքի տակի 2038 քմ.

հողատարածքը, որը հարևանությամբ էր շենքի 2 հարկերը պատկանում էին օտար մարդկանց «Ղավիթ» ՍՊ անունով, որոնց Փայլակը խոստացել էր գնել և ստիպված է եղել նրանց կանխավճար տալ 49.000 ԱՄՆ դոլար, որպեսզի տան համաձայնություն^a Քոչարի 4/9 շենքը գրավ դնելու համար: Մի խոսքով ինքը հասկացել է, թե Փայլակն ինչու չկարողանալով վաճառել իր գույքերը, թաղվել էր մեծ պարտքերի մեջ և բավականին մեծ ծախսերի ու խնդիրների հետ էր կապված այդ գույքերը բերել իրավական տեսքի: Մինչ այս ամենը, ինքն ու Սերգեյ Տրիկազյուկը գնացել են Կիպրոս, որտեղ ինքը ծանոթացել է Նիկոզիայում փաստաբանական գրասենյակի ղեկավար Մակիսի հետ: Այնտեղ քննարկել են իրենց ծրագրերը, ասել, որ ցանկանում են բացել «ABS» անունով մի հոլդինգ, որը նշանակում է «Արմենիա, Բելառուսիա և Սիերա Լեոնե»: Նա ասել է, որ լավ կլինի 66 տոկոս բաժնեմասը կազմող ֆիրման ունենա մի լոկալ անուն և խորհուրդ տվել այն անվանել «Վիլսպերա Հոլդինգ», ասելով, որ կարող են այդ պայմաններով մի աշխատանքային պայմանագիր գրել, կնքել համատեղ ձեռնարկության վերաբերյալ պայմանագիր: Ինքն ու Սերգեյը որոշել են մինչ կրկին Կիպրոս գալը, մի սևագիր նախագիծ կազմել, որը հաջորդ գալուց փաստաբան Մակիսը կստուգի և ֆիրմաները բացելուց հետո պայմանագիրը կստորագրեն: Փաստաբանին ասել են, որ Կիպրոսում

-11-

բացվող ֆիրման պետք է գնի Աֆրիկայի «Գլոբալ Կարատ հոլդինգը»: Փաստաբան Մակիսը հավանել է իրենց ծրագիրը, իսկ իրեն առանձին խորհուրդ տվել, որ լինի հանքարդյունաբերության բիզնեսի մեջ 66 տոկոսի փայտատեր, քանի որ այն իր մեջ ռիսկ է պարունակում և որ լավ կլինի իրեն հետ «Վիլսպերա Հոլդինգը» բացելուց հետո լինեն հայտնի մարդկանց անուններ ոտնձգություններից զերծ մնալու նպատակով: Ինքը և Սերգեյը այնտեղ եղած ժամանակ մի սևագիր նախագիծ են գրել, համատեղ ձեռնարկության վերաբերյալ պայմանագիր, որը մինչ այդ էլ էլեկտրոնային փոստով արդեն ձեռնարկել էին: Ինքը արդեն փայտատեր էր Աֆրիկյան «Գլոբալ Կարատ» կազմակերպությունում և փոխանցել էր 150.000 ԱՄՆ դոլար «Արդշինինվեստ» բանկով 2009թ. դեկտեմբերի 4–ին, 50.000 ԱՄՆ դոլար «Անելիք» բանկով 2010թ. փետրվարի 2–ին և 50.000 ԱՄՆ դոլար «Անելիք» բանկով 2010թ. փետրվարի 5–ին: 2010թ. հուլիսի 8–ին իր աշխատող Արփի Բայանի հետ մեկնել են Կիպրոս, հանդիպել Սերգեյ Տրիկազյուկին, Ալեքսանդր Վալչուկովսկուն և նրանց հետ միասին գնացել Նիկոզիա: Տեսնելով փաստաբան Մակիսին, գրուցել են անելիքների մասին, նրան ցույց են տվել սևագիր նախագիծը համատեղ ձեռնարկության վերաբերյալ, նա և Արփի Բայանը որոշ փոփոխություն և ուղղումներ է արել, որից հետո 2010թ. հուլիսի 15–ին ստորագրել են, իսկ «ABS Գլոբալ» ֆիրմայի մեջ ինքը և Սերգեյը դարձել են համատնօրեններ: Տեղում որոշել են, որպեսզի Սերգեյն իր հետ դառնա համատնօրեն, քանի որ Սերգեյը պետք է հիմնականում զբաղվեր տեխնիկայի առաքումով և լիզինգային ծրագրով: Կիպրոսում կազմակերպություն բացելը ոչ թե նպատակ է եղել խուսափել հարկերից, այլ ունենալ կազմակերպություն մի երկրում, որտեղ կա ծովային ճանապարհ, որտեղից կարելի է հասնել Ատլանտյան օվկիանոս, որի ափերից մեկում գտնվում է Սիերա Լեոնե երկիրը: 2010թ. հուլիսի 18–ին, ինքը Արփի Բայանը, Սերգեյ Տրիկազյուկը, Ալեքսանդր Վալչուկովսկին և Ինգա Նոսիկավան, որը Սերգեյի կազմակերպություններից մեկի ղեկավարն էր, եկել են Հայաստան, որտեղ օդանավակայանում իր աշխատակիցների հետ միասին, իրենց դիմավորել է Փայլակ Հայրապետյանը և Սասուն Նազարյանը: Աֆրիկայից Երևան էր եկել նաև Ռուբեն Մկրտչյանը և իրենց էր սպասում: Հաջորդ օրը իրենք բոլորով, Փայլակի հետ միասին գնացել են Սևան և երկու օր մնացել Փ.Հայրապետյանին պատկանող հյուրանոցում: Այնտեղ էին Փայլակ Հայրապետյանը, Սասուն Նազարյանը, Փայլակի կինը, Սասունի կինը և խնամին Գագիկ Ղարիբյանը, ինքը կնոջ հետ, Սերգեյ Տրիկազյուկը, Ալեքսանդր Վալչուկովսկին /Սաշան/, Ռուբեն Մկրտչյանը և Ինգա Նոսիկավան: Երկու օր իրենք քննարկել են Աֆրիկայի իրենց հանքարդյունաբերության ծրագիրը, թե ինչ տեխնիկաներ են հարկավոր, ինչ լվացող մեքենաներ և այլն: Ինքը ներկայացրել է Փայլակ Հայրապետյանին, որ իր հայաստանյան գործընկերն է 70/30 փայաբաժնով, որ բացի իր ներդրումները վարկ են վերցրել նաև

Հայրապետյանի գույքով: Երեկոները Ռուբենը և Փայլակը հեռանում էին գնալով տեսնելու Ռուբենի հարազատներին և հաջորդ օրը առավոտյան հայտնվում էին: Բազում ծրագրերի շուրջ գրուցելով և ջերմ մթնոլորտի պայմաններում որոշել են, քանի որ մեզ է միացել Փայլակ Հայրապետյանը, ընդարձակել աֆրիկյան բիզնեսը բացելով լրացուցիչ լագերներ և վարձակալելով նոր տարածքներ, ժամանակ առ ժամանակ հանդիպել Հայաստանում և որոշումներ կայացնելով բացել շատ աշխատատեղեր: Հայաստանում մնացել է միայն Ռուբենը, իսկ մյուսները մեկնել են: Փայլակը և Ռուբենը ամեն օր միասին էին և զանգում էին, որ չանհանգստանամ, պարզապես այցելում էին Ռուբենի բարեկամներին: Ընթացքում ինքը Փայլակի գույքերը կարգի բերելով գրավ էր դնում, որտեղ իրենց համաձայնությունն էին տալիս Փայլակը, կինը, տղան, երկու

-12-

հարսերը և խնամին Գագիկ Ղարիբյանը: Բանկն էլ իր հերթին պետք է գումարներ տար 2 կամ 3 փուլերով, քանի որ բիզնես ծրագրի մարքեթինգային պլան բաժնում նախատեսված էր Աֆրիկայի հիմնական գործը սկսել 2010թ. հուլիս ամսի վերջին, քանի որ բանկը հիմնական գումարները պետք է տար 2010թ. հուլիսի սկզբին: «Ամերիաբանկ»-ը մեզ պետք է վարկ տրամադրեր մեծ փայաբաժիններով, սակայն տրամադրել է 10 փուլերով 1 տարվա ընացքում, որը շատ է խանգարել բիզնես ծրագրի իրականացմանը: Նաև տարբեր պատճառաբանություններով 12 տոկոսը հետագայում դարձրել է 15 տոկոս և չտրամադրել խոստացած 1.300.000 ԱՄՆ դոլարը: Այդ ամենի արդյունքում իրենց բիզնես ծրագիրը չի աշխատել և ինքը ստիպված ^aէ եղել լիզինգի համար փոխանցած 3.333.285 ԱՄՆ դոլար գումարը հետ պահանջել Սերգեյից, որը 10 միլիոնանոց լիզինգային ծրագրի 30 տոկոսն է կազմել, որպես կանխավճար: Ընթացքում շատ անհասկանալիորեն վատացավ բանկի և իր փոխհարաբերությունները, չնայած ինքը պարտաճանաչորեն փակում էր բանկի տոկոսները, կատարելով պահանջվող ծախսերը: Մեկ տարի չանցած բանկը հետ պահանջեց տրամադրած վարկը, չնայելով այն փաստին, որ իրենց կողմից պահանջված 18 միլիոն դոլարի /գնահատված իրենց կողմից/ լիզինգային գրավների փոխարեն իրենք տրամադրել էին ավելի քան 21 միլիոն լիզինգային արժեքի գրավներ, որը գնահատվել էր իրենց կողմից նշանակված «Ալտավիա» կազմակերպության կողմից: Աֆրիկայում ծախսելով իր անձնական գումարները, ինքը բիզնեսը անիվների վրա է դրել, քանի որ եկամուտները ակնհայտ էին: Հասցրել էի Երևանում հիմնադրել և բացել «Մետաքս Գոլդ» ադամանդի և ոսկու բորսան, որը ամեն օր ռեկլամում էին հեռուստատեսությամբ: «Մետաքս Գոլդ» բորսան նույնպես նախատեսված է եղել իրենց բիզնես պլանում: «Մետաքս Գոլդ» բորսայի ներսի և հարդարման աշխատանքները, բոլոր վաճառատեղաները պատրաստում էր Փայլակ Հայրապետյանն իր գործարանում, որի համար նախապես վճարել է: 2011թ. սկզբներին ինքը մեկնել է Բեյրութ, գնելու մի հզոր հորատող մեքենա, որի կարիքը շատ ունեին: Բեյրութում պատահական ծանոթացել է մի արաբ շելխի հետ, որն ինչպես պարզվեց, հյուրանոց էր կառուցում Սիերա Լեոնեում: Շելխը ասել է, որ շատ է լսել իր մասին և անսպասելիորեն իրեն առաջարկել համագործակցել, ասելով, որ ինքն իր գիտելիքներն օգտագործի լավ պաշարներով հողատարածքներ ձեռք բերելու համար, իսկ տեխնիկա, որոնք պետք կլինեն, ինքը կտրամադրի: Մի քանի հանդիմուններից հետո, Դուբայում և Աբուդաբիյում, որտեղ գտնվել է նրան պատկանող այդ տեխնիկաների սարքավորումների բազաները, որոշել են համագործակցել: Հետո Շելխը 2011թվականի կեսերին եկել է Աֆրիկա, իր մասնագետների հետ ուսումնասիրել իրենց լագերների աշխատանքները, հողատարածքների մեջ պարունակող պաշարները և շատ ոգևորվել: Հետագայում նրա պահանջով նրա տնօրենը ստուգել է իրենց կազմակերպության փաստաթղթերը և իրենք Շելխի հետ պայմանագիր են կնքել երկու կողմերի անելիքների և պարտականությունների մասին: 2011թ. օգոստոս – սեպտեմբեր ամիսներին, ինքը Շելխին Հայաստան է հրավիրել ծանոթացնելով Փայլակ Հայրապետյանի հետ, ասելով, որ իր գործընկերն է Հայաստանում 70/30 փայաբաժնով: Փայլակի հրավերով իրենք գնացել են Սևան և երկար գրուցել հետագա անելիքների մասին: Շելխը պատմել է, որ Աֆրիկայի համար Կանադայի Սեպրո և Ֆոլկոն

գործարաններում պատվիրել է ոսկի և ադամանդ լվալու մեքենաներ, որը ժամում լվանում է 100 տոննա գրավել /հող/: Իրենք պատմել են, որ բանկը վարկի գումարի 1.300.000 ԱՄՆ դոլարը չի տվել, որը նախատեսված է եղել վաճառող մեքենա գնելու համար, սակայն փորձում են ինքնուրույն պատրաստել: Շեյխը ասել է, որ կհանձնարարի
-13-

իր տնօրեններին, որ էլեկտրոնային փոստով ուղարկեն հատուկ ծրագիր, որով կարող են հեշտությամբ պատրաստել այդ վաճառող մեքենան: Հետագայում վերադառնալով, Շեյխի տնօրենը^a Տարեկը ուղարկել է գծագրեր, որի օգնությամբ Փայլակի գործարանում կառուցել են այդ մեքենան: Պատրաստելու ընթացքում Հայաստան է եկել տնօրենը Տարեկը, որը ստուգել է մեքենայի պատրաստման ընթացքը և շատ հավանել: Հետագայում 2012թ. մարտի 2-ին Փայլակը գաղտնի պայմանագիր է կնքել Ռուբենի հետ և իրեն մեղադրանք ներկայացնելով մեքենան գաղտնի ուղարկել է Սիեռա Լեոնե, որպես իր «Ակվամարին Լայթ» ֆիրմայի ներդրում: Աֆրիկայում էլ անձրևային շրջանում ստիպել է, որ այդ 30 տոննա քաշ ունեցող մեքենան տեղափոխեն, որի ընթացքում լազերի ճանապարհին աշխատողը մնացել էր տակը և մահացել: Սևանում Փայլակը ծանոթացրեց իր թոռան Փայլակ Հովհաննեսի Հայրապետյանի հետ, ասելով, որ իր ժառանգորդն է: Շեյխը Հայաստանում ծանոթացել է իր և Հայրապետյանի հնարավորությունների հետ, տեսել իր գործարանները, «Մետաքս Գոլդ» բորսան և ասել, որ խոստացիր, որ նույնը կկառուցեն միասին իր երկրում: Փայլակը մի օր իրեն ասել է, որ պարտքեր ունի նաև «ԵԵ» բանկում և խնդրել մի բան մտածել: Ինքը շատ է զարմացել, երբ իր խնդրանքով գնացել են բանկ և պարզվել է, որ նրա պարտքը անցել է բոլոր սահմանները և գտնվում է սեփականաշնորհման հանձնաժողովում, պարտքերը հասել էին մոտ 1.5 միլիոնի ԱՄՆ դոլարի: Նույն ճանապարհով Փայլակն իր համագյուղացի ինչ-որ Սամվել անունով մեկի միջոցով իբրև բամբակ բերելու պատրվակով, գրավ էր դրել Արգավանում գտնվող իր տրիկոտաժի գործարանները, հետո բիզնեսն իր ասելով ծախսովել էր: Այցի ընթացքում ինքը դիմել է բանկի ղեկավարներից մեկին Սլավիկ Մուքանյանին և նա բացատրել է, որ շատ ուշ է, միայն գումար է պետք հարցը լուծելու համար: Փայլակը ամեն օր կռվել է իր հետ, պնդելով, որ ինքը փակի «ԵԵ» բանկում եղած պարտքը: Նա ամեն օր կռվել և ասել է, որ «Ամերիկաբանկ»-ի վարկը չփակի և գումարները տա իրեն գրավները թողնելով բանկին, եսում էր նույնիսկ տոկոսը մի փակի, ափսոս են այդ գումարները, տուր ինձ: Ինքը շատ վիրավորվել և հասկացել է, որ Փայլակն է խառնել իր և բանկի հարաբերությունները, որպեսզի բանկի հետ թշնամանա և գումարները, որը պետք է փակի բանկին, տա իրեն^a մոռանալով գրավները: 2011թ. հուլիսի 5-ին Սիեռա Լեոնեի «Գլոբալ Հոլդինգ»-ը վաճառել է 100 տոկոս բաժնեմասերը Կիպրոսյան «ABS զլոբալ հոլդինգ»-ին, որտեղ վաճառողներն էին Անդրեյ Գոլդևսկին և Ռուբեն Մկրտչյանը^a 50-50 փայաբաժիններով, որոնք Սերգեյ Տրիկազյուկի դրածո մարդիկ էին: Բաժնեմասերի վաճառքը տեղի է ունեցել պետ ռեզիստրի ներկայացուցչի ներկայությամբ, որտեղ թվով երկու բաժնետոմսերի փոխանցման առուվաճառքի պայմանագրերը ստորագրել են Ռուբեն Մկրտչյանը 50 տոկոս փայաբաժնի փոխանցում, Անդրեյ Գոլդևսկին 50 տոկոս փայաբաժնի փոխանցում, փաստաբան Լոռնառդ Թեյլոր, ֆինանսական տնօրեն և քարտուղար Ֆրենկի Կորոման և ներկայացուցիչ Բենգուռան, իսկ Կիպրոսի «ABS Գլոբալ»-ի կողմից այն ընդունել է իր հետ համատնօրեն Սերգեյ Տրիկազյուկը: «ABS Գլոբալ»-ը դարձել է Սիեռա Լեոնեում գործող «Գլոբալ կարատ», «GMC – Գլոբալ» հոլդինգների ակցիաների, գույքի, հողատարածքների և ամբողջ ունեցվածքի տերը, որտեղ փայատերեր էին Սերգեյ Տրիկազյուկը 14 տոկոս, Ալեքսանդր Վալչուկովսկին 10 տոկոս, Ռուբեն Մկրտչյանը 10 տոկոս և ինքը Աշոտ Սուքիսյանը 66 տոկոս փայաբաժիններով: Ամեն մեկը բաժնետեր էր կազմակերպություններով: Իր փոխանցած միջոցներով Աֆրիկայում շատ տեխնիկաներ են գնել, ինչպես նաև շահագործման նպատակով վարձակալել են երկարաժամկետ շատ հողատարածքներ: Ինքը հաճախ

-14-

բանկերից ոսկու ծուլակտորներ է գնել, ստիպված որոշ զեղչերով, գնված

գնից էլ պակաս է վաճառել, որպեսզի փակի բանկում ունեցած պարտավորությունները, քանի որ արգելված էր վարկային միջոցներից տոկոսներ փակել կամ ինչպես բանկին ասել գումար տվեք Փայլակ Հայրապետյանի այլ բանկերում ունեցած պարտքերը փակելու համար: Ինքը համարձակորեն երբեմն գնացել է մինուտով քայլերի, վստահ լինելով Սիեռա Լեոնեում իր հիմնադրած բիզնեսի վրա, որն արդեն հունի մեջ էր ընկել: 2011թ. վերջերից և 2012թ. սկզբին եկել են Շեյխի ուղարկած տեխնիկաների մեծ մասը, Աֆրիկայում շատ վատ է սկսել իրեն պահել Ռուբեն Մկրտչյանը և իր փեսա Էմիլ Մարգարյանը, որոնք գողությանը էին զբաղվում, չէին վճարում տեղացի շատ աշխատողների: Գողության մասին հարցը բարձրացրել է իր խնամի Վահան Հարությունյանը, ով իր խնդրանքով եկել էր Ամերիկայից և ղեկավարում էր Աֆրիկայի լագերները: Մի խոսքով լուրջ պատերազմ էր սկսվել Հայաստանում Փայլակի իր դեմ, իսկ Աֆրիկայում Ռուբենը Վահանի, իրենց վարպետների և Շեյխի աշխատողների դեմ: Աֆրիկայում իրենց դեմ էին դուրս եկել Փայլակի կողմից ուղարկված վարպետները Գ.Ջանոյանը, Ղ.Ղուկասյանը, Ա.Հակոբյանը և ուրիշ մարդիկ, որոնց ինքը Աֆրիկա էր ուղարկել 2011թ. կեսերից հետո, Փայլակի խնդրանքով: Նույնիսկ երբ Աֆրիկայում լուրջ լարվածություն էր սկսվել և նրանք ունեին իր կողմից գնված թռիչքի և հետադարձի տոմսերը, Հայաստան չէին վերադառնում իույս ունենալով, որ բիզնեսը պետք է անցնի Փայլակի և Ռուբենի ձեռքը: Քանի որ իր դեմ քրեական գործ սկսելով Փայլակը մեկնել էր Աֆրիկա՝ Սասուն Նազարյանին նախապես գործուղելով, միասին մնացել էին երկու ամիս, տեղադրել լվացող մեքենան, Հայաստանից Փայլակի հետ մեկնած Սամվել և Մանվել վարպետների կողմից, որոնք մասնակցում էին Երևանում լվացող մեքենայի պատրաստման աշխատանքներին, որի գծափոր Շեյխն էր ուղարկել, իսկ մեքենան պատրաստվել էր իր միջոցով: Փայլակը նույնիսկ Աֆրիկայից գնացել էր Եվրոպա և հանիպել Սերգեյին, հանձնարարություններ ստանալով վերադարձել Աֆրիկա: Այդ մասին Փայլակը գրել է իր ցուցմունքներում, թե ինչպես է 2012թ. սեպտեմբերի 27-ին հանդիպել Սերգեյի հետ: Քանի որ վարկի բոլոր միջոցները գնացել էին Աֆրիկայի բիզնեսի զարգացմանը, «Մետաքս Գոլդ» բորսայի բացմանը, Փայլակի պարտքերի մարմանը, բանկերի տոկոսների և մայր գումարների մարմանը, ինքը սպասում էր 2012թ. սեպտեմբերի 1-ին, կազմակերպության ամբողջ կուտակված հումքը վաճառելուն, որի 66 տոկոսն իրեն էր պատկանում և պետք է ուղղեր բանկի տոկոսների մարմանը: Այդ մասին ինքը, Սերգեյը և Շեյխը ձեռագիր պայմանագիր էինք գրել, Սերգեյի տանը Լեհաստանում, 2012թ. մայիսի 5-ին: Նաև Շեյխը լագերների համար պարտավորվել էր ուղարկել 900.000 ԱՄՆ դոլար, որպեսզի ավելի արագանան: Շեյխի կողմից 900.000 ԱՄՆ դոլարը, ամբողջ կազմակերպության կուտակած հումքը և ոսկին Ռուբեն Մկրտչյանի օգնությամբ գողացել էր Սերգեյ Տրիկազյուկը և անհետացել: Իսկ իր դեմ Փայլակը մեղադրանք էր ներկայացրել, որի պատճառով ինքը հեռացել էր Հայաստանից մեկնելով Ղուբայ: Ապա զանգահարել է Չեռնո Սիսեին, շտապ եկել և միասին հանդիպել են Շեյխի հետ: Հանդիպման ժամանակ պարզվել է, որ իրենից թաքուն Փայլակը, Սերգեյը և Ռուբենը Շեյխի հետ էլ են հանդիպել և նրան այդ օրերի ընթացքում խաբել են կեղծ բաժնեմասերի բլանկներ տալով, իբրև իրեն ակցիաներ են վաճառել: Իր մասին էլ ասել են, որ ինքը և Փայլակը պատերազմում են և իր նկատմամբ հետախուզում է հայտարարված, որ ինքը հեռու մնա ավելորդ պրոբլեմներից: Շեյխը շատ վիրավորված և զայրացած խնդրել է մի ելք գտնել այդ թիմին գտնելու և դատի տալու համար: Ինքը և Չեռնոն մեկնել են Աֆրիկա, որտեղ Չեռնոն կանչել է իր

-15-

փաստաբանին, նրանք փաստացի ստուգել են և բանկերի փոխանցումները և կազմակերպության մեջ իր ներդրումները, որից հետո դիմել են դատարան: Սիեռա Լեոնեյի բարձրագույն դատարանը 16 միլիոնի պահանջ ներկայացրեց և 2012թ. հոկտեմբերի 9-ին որոշեց 3 օրվա մեջ այդ երաշխիքը չներկայացնելու դեպքում կալանավորել նրանց: Երեք օր հետո ձերբակալվեց Ռուբեն Մկրտչյանը, իսկ Անդրեյ Գոդլասկին հասցրել էր թաքնվել և փախչել: Այդ մասին գրեցին Աֆրիկայի հայտնի լրատվամիջոցները: Ինչպես նաև պարզվեց, որ երբ վաճառել են «GMC

Գլոբալ Հոլդինգ»-ը կանխամտածված չեն ներկայացրել պետական ռեզիստր, մտածելով, իրեն կմեկուսացնեն և Փայլակի հետ կաշխատեն: Փաստաբան Պամոնո Ֆուֆանան ասել է, որ այդ պայմանագիրը օրիգինալ է և ցանկացած պահի կարող են գրանցել ռեզիստրում: Գործարքը ավարտված է, բայց եթե գրանցեն կգրկվենք դատի տալու և վնասների վերականգնման իրավունքից: Այս մասին երբ Փայլակն իմացավ, Հայաստանի լրատվամիջոցներով սկսեցին գրել իբրև ինքը 400.000 ԱՄՆ դոլար գումար է տվել Փ.Հայրապետյանին վերացնելու համար: Երբ զանգահարեցի նրան, պարզվեց, որ նա Փարիզում է և շատ է վախեցել, որ կբացվի իր, Ռուբենի և Սերգեյի ծրագրած չարություններն իր դեմ: Այդ ժամանակ Փայլակն իրեն ասել է. «Տղա ջան ինձ ների, ես մեղք չունեմ որ Ռուբենը և Սերգեյը համոզել են մեծ փայաբաժին խոստանալով ամբողջ հոլդինգից»: Նրան ասել են, եթե Շեյխը և Աշոտը միասին ամբողջ բիզնեսից բան չի մնա և իր մասին պատմություններ են պատմել, իբրև Փայլակն իր աշխատողն է աշխատավարձով և ուրիշ շատ անամոթ և հնարովի պատմություններ: Այդ օրերին իր մոտ է եկել Աֆրիկայում Ռուսաստանի կոնսուլը Հուսեյն Բասման և շատ է խնդրել որպեսզի համաձայնվի Ռուբենին ազատ արձակեն, խոստանալով, որ ինքն էլ կօգնի, որ վնասները վերականգնվի: Կոնսուլը հայտնել է, որ Ռուբենը և Անդրեյը շատ թանկարժեք գրավ կներկայացնեն դատարանին, որպեսզի չփախնեն, միայն պետք է իր համաձայնությունը: Փաստաբան Պամոնոն ասեց կարելի է, եթե դուք երաշխավորեք գրավի հետ միասին: Մի քանի օրից գրավ դրեցին իրենց տունը, որը մեծ արժեք էր ներկայացնում և իրենց համաձայնությամբ Ռուբենին ազատ արձակեցին՝ չբացակայելու իրավունքով: Երբ մի քանի օր հետո վերջինիս իրավերով գնացել են կոնսուլի տուն, որպեսզի փաստաբաններով հանդիպեն և որոշեն ինչ պետք է անեն, այնտեղ Ռուբենի հետ հայտնվել է նաև Փայլակ Հայրապետյանը և սկսել լկտի հայիոյանքներով խոսել, ասելով. «Ռուբեն տղա, եթե այս բանակցությունների արդյունքում ինչ-որ մեկի վրա, ինչ-որ կազմակերպություն ձևակերպվի, խոստանում եմ արյուն թափել, որ աշխարհի թերթերը գրեն այդ մասին»: Ռուբենն էլ մեղքը զցելով Փայլակի վրա, ասում էր. «Լավ է դուք եք լսում այս խոսքերը» ավելացնելով, որ Փայլակը Հայաստանում ամեն օր գնացել է Ռուբենի հորեղբոր մոտ, որը ապրում է կինո հայրենիքի մոտ, Մանվել անունով և ասում, որ եթե Ռուբենն իրեն չօգնի Աֆրիկայի բիզնեսը ձևակերպեն Փայլակի անունով, ապա շատ վատ է լինելու: Այդ հանդիպման ընթացքում Ռուբենի փաստաբանը խոստովանեց, որ Սերգեյն իր փոխանցած գումարներից 2.3 միլիոն ԱՄՆ դոլար է փոխանցել Ռուբենին: Ռուբենն իր փաստաբանի հետ ընդունեցին այդ փաստը և թղթերը ստորագրեցին: Հանդիպման ընթացքում փաստաբան Լուուսառլ Թելլորը, որը «GMC Գլոբալ»-ի փաստաբանն է, ասեց, որ թույլ տվեք որպեսզի պետ ռեզիստրում գրանցենք «GMC Գլոբալ»-ի վաճառքը Կիպրոսի «ABS Գլոբալ»-ին, սակայն փաստաբանը հրաժարվել է ասելով, որ այդ պայմանագիրը վաղեմության ժամկետ չունի, իրենք էլ կարող են գրանցել, ասելով, որ դուք դեռ շատ վնասների փոխհատուցում պետք է տաք, որում անվերապահորեն ներառված կլինի ամբողջ ակտիվները և գույքը: Պարզ է

-16-

դառնում նաև, թե ինչու Փայլակը իր հետ աշխատանքային պայմանագիր չէր կնքում, որպեսզի ցանկացած պահին խարդախության մեղադրանքով իրեն հեռացնի բիզնեսից և քանի որ ինքը վարկառու է, իսկ նա գործատուն, մեխանիկորեն դառնում է բիզնեսի տերը: Ընթացքում իրեն շատերն էին ասում, որ Փայլակն այդ ձանապարհով շատ բիզնեսներ է խլել և գույքերի տեր դարձել: Փոխանակ Աֆրիկայում կանգներ իր կողքին, Փայլակը ապրում էր Ռուբենի տանը և երկու օր հետո բողոքներ էր գրել ոստիկանություն, դատարան և դատախազություն, ամեն ինչ անելով, որ իրեն ձերբակալեն, իսկ Հայաստան լուրեր է տարածել, որ եկել է Աֆրիկա, իրեն ձերբակալել է ու հեռացել: Սկսվել են դատական գործերի լուսմները, որտեղ ինքը դատի է տվել Ռուբենին, Անդրեյին, Սերգեյին և Ալեքսանդրին, իսկ Փայլակը իրեն է դատի տվել: Հինգամիս դատալսումների արդյունքում Աֆրիկայի բարձրագույն դատարանը որոշել է իր և Փայլակի գործը ձանաչել իրենց երկրի իրավասությունից դուրս, դատարանի ծախսերը պահանջելով Փայլակ Հայրապետյանից, որը փախել է դատարանից

Հայաստանում ասելով, որ դատը շահել է: Սիերա Լեոնեյի բարձրագույն դատարանը որոշում է կայացրել նաև, որ Ռուբեն Մկրտչյանը և Անդրեյ Գոլդևանին 2.3 միլիոն ԱՄՆ դոլարի փոխարեն պետք է 3 միլիոն ԱՄՆ դոլարի երաշխիք ներկայացնեն, անվերապահորեն ներառելով կազմակերպության հողատարածքները: Փաստաբանի առաջարկությամբ նաև կալանք է դրվել ամբողջ «GMC հոլդինգ»-ի, ինչպես նաև նրանց ունեցած ամբողջ ակտիվների և գույքերի վրա: Մինչև փաստաբան Պամոնո Ֆոֆանայի միջնորդությունը Աֆրիկա է եկել Շեյխը և իր համաձայնությամբ լազերներից տեղափոխել իր բերած տեխնիկաները: Շեյխը խնդրել է որպեսզի միջնորդի իր փաստաբանի միջոցով ինքն էլ դատի տա այդ բոլորին և իր փաստաբանի հետ պայմանավորվելով, ինքն էլ է բողոք ներկայացրել այդ թիմի դեմ: Երբ լրատվամիջոցները, թերթերը գրում էին այդ ամենի մասին, օրեցօր տարբեր մարդիկ էին հայտնվում և պատմում, թե ինչպես են նրանք շատ շատերին խաբել ամեն մեկն իր հերթին գործ հարուցելով Ռուբենի և մնացած թիմի դեմ: Աֆրիկայում իրեն հայտնի է դարձել, որ Փայլակը և Ռուբենը հին ծանոթներ են եղել և վաղուց են ցանկացել համագործակցել, պարզապես չեն ունեցել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Հասկացել է նաև, որ Չեռնո Սիսեյի հասցեին տարածվող լուրերը և չարագործությունները կրկին կազմակերպել էր Ռուբենը: Երբ Հայաստանում դադարեցրեցին 2013թվ. սկզբներին իր նկատմամբ քրեական հետապնդումը, Փայլակը փոխեց իր մարտավարությունը կապելով բիզնեսը հեղինակավոր մարդկանց անունների հետ, որպեսզի ներկայացնի հասարակությանը, այս աղմուկը քաղաքականացված տարբերակով: Ինքն իր կամքով է եկել և Կրաստանում տալով անձնագիրը պահանջել է որպեսզի իրեն հանձնեն Հայաստանի իրավապահներին, որպեսզի պատմի և բացահայտի ամբողջ եղելությունը: Իրեն առաջադրված մեղադրանքներում մեղավոր չէ: Ինչ խարդախության մասին է խոսքը, եթե Փայլակն է իր մոտ մարդիկ ուղարկել և առաջարկել որպեսզի համագործակցեն: Բազում մերժումներից հետո, առանց հրավերի հայտնվել է Էկոնոմիկայի նախարարության ժողովին, որպեսզի ծանոթանա իր հետ: Փ.Հայրապետյանն է նուտարական վավերացմամբ հավատարմագրեր տվել իր ընտանիքի անդամներով հանդերձ, որպեսզի ինքը գրավադնի նրա գույքերը «Պրոմեթեյ» և «Ամերիա» բանկերում: Քանի որ նրա գրավադրվող գույքերն ինքնակամ և ապօրինի, խնդրահարույց, առանց կադաստրային ձևակերպման գույքեր էին, որոնք իր խնդրանքով նաև դարձրել են իրավական կառույցներ և հողեր, սկզբից դարձրել են նախ իր անունով, հետո գրավադրեցով սկզբից փակել է այլ բանկերում իր ունեցած հսկայական ժանկետանց վարկերն ու անձնական պարտքերը, նաև գույքահարկի,

-17-

գազի, լույսի, ջրի տարիներ շարունակ կուտակված պարտքերը: Իհարկե Փայլակը խոստացել է վերադարձնել այդ գումարները, որպեսզի բիզնեսը սկզբնական ներդրումային փուլում չտուժեր, սակայն խաբել է: Նրա առաջարկով են որոշել աշխատել 70/30 փայաբաժնով Հայաստան եկած աղամանդի և ոսկու առաջացած շահույթից, քանի որ իր և կնոջ խնդրանքով չէր ցանկանում Աֆրիկայի գործերի մեջ մասնակից լինել: Փայլակն իր գործարանում Շեյխի ուղարկած գծագրերով լվացող մեքենան է պատրաստել, որից հետո գաղտնի պայմանագիր է գրել Ռուբենի հետ և առանց իր գիտության, «Ավվամարին Լայթ» ընկերությունով մեքենան տեղափոխել Աֆրիկա և մաքսագրեծել: Միասին հորատող մեքենա և պահեստամասեր են ուղարկել Աֆրիկա, միասին իր խնդրանքով ոչ թե վարկի տրամադրման օրերին, այլ վարկը ստանալուց հետո: Գեոլոգներ են ուղարկել Աֆրիկա, որոնց նա էր ծանոթացրել իր հետ: Միասին «Մետաքս Գոլդ» բորսան են հիմնադրել, որի ներսի կահավորանքը և վաճառատեղաններն Փայլակն է կառուցել իր գործարանում, նախապես իրենից ստանալով անհրաժեշտ ծախսերը և գումարները: Մինչ բիզնեսը սկսելը, Փայլակին ծանոթացրել է բոլոր գործընկերների հետ, ասելով, որ իր գործընկերն է 70/30 փայաբաժնով: Ծանոթացրել է ոչ միայն նրա, այլ նաև նրա տան անդամների, ինչպես նաև նրա իրավախորհրդատու Սասուն Նազարյանի և խնամի Գազիկ Ղարիբյանի հետ: 2010թ. հուլիսին նրան ծանոթացրել է Սերգեյ Տրիկազյուկի, Ալեքսանդր Վալչուկովսկու, Ռուբեն Մկրտչյանի, Ինգա Նոսիկավայի հետ, իսկ 2011թվ. օգոստոս–

սեպտեմբեր ամիսներին Շեյխի և նրա ընկերների, ինչպես նաև 2012թվ. Շեյխի տնօրեն Տարեկի հետ, որը եկել էր ուղարկած գծագրերով լվացող մեքենայի աշխատանքները ստուգելու և խորհուրդ տալու նպատակով: Բոլորը գիտեին, որ ինքն ու Փայլակ Հայրապետյանը գործընկերներ են: Ինչ փողերի լվացման մասին է խոսքը, եթե չկա խարդախություն, եթե բիզնեսի մեջ իր ներդրած գումարները ավելի շատ են, քան Փայլակի գույքերով վերցրած վարկերը: Միայն «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության թիվ. 1570011192370101 ԱՄՆ դոլարային հաշվից իր ելքերը կազմել են 14.806.181.67 /ընդամենը մուտքագրված 15.306.181.67 վերադարձված վարկ 500.000/ ԱՄՆ դոլար, այդ թվում ըստ համալիր փորձաքննությանը տրամադրած բանկային հաշիվների քաղվածքներում և «Ձորագյուղ» Ա/Կ-ի հաշվապահական հաշվառման փաստաթղթերում առկա տվյալներից երևում է, որ 2010–2012թվականների ընթացքում կատարված ծախսերը կազմում են 9078591006 ՀՀ դրամ ըստ 367 կուրսի 24.737.305 ԱՄՆ դոլար: «Ամերիաբանկ»-ի տնօրեն Գագիկ Սահակյանն իր ցուցմունքներով հայտնել է, որ «Ձորագյուղ» Ա/Կ-ին վարկը նպատակային է տրված և օգտագործված, քանի որ ստուգվել է KPMG համաշխարհային աուդիտի կողմից, որը նախապես ստուգվել է նաև ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: 27.05.2014թվականին «Ամերիաբանկ»-ի նախագահ Ա.Հանեսյանը նամակ է ուղարկել քննչական վարչություն նշելով, որ ոչ մի խախտում «Ձորագյուղ» Ա/Կ-ի կողմից չի հայտնաբերվել և արձանագրվել: Ինքը ոչ մի բիզնես ծրագրից չի շեղվել, այլ ճիշտ հակառակը ավելի նպատակային է օգտագործել ստացած վարկը և մեկ տարվա ընթացքում անիվների վրա է դրել Աֆրիկայի բիզնեսը, որտեղ սկսել է աշխատել երկու լազերներ և երրորդն էլ բացվելու վրա է եղել, եթե չխանգարեին, Հայաստանում էլ, Աֆրիկայում էլ հազարավոր աշխատատեղեր կբացվեին: Բացել է «Մետաքս Գոլդ» բորսան, որտեղ սկսել են գործել և գործարանները և վաճառքի արահները: Բացել է ձեռնարկություններ մասնավորապես Հայաստանում, Կիպրոսում, Դուբայում և Աֆրիկայում, այդ ամենը մեկ տարվա ընթացքում, իսկ վարկը տրված է եղել 10 տարով: «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության և «Ձորագյուղ» Ա/Կ-ի միջև

-18-

25.06.2010թվ. կնքած 002506 հիմնական պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերում նշվել է, որ «Վարկառու նպատակով է վարկն օգտագործել հիմնական և շրջանառու միջոցների ձեռքբերման, կրեդիտորական պարտքերի մարման, ընթացիկ ֆինանսատնտեսական գործունեության կազմակերպման նպատակով»: Ինչ փողերի լվացման մասին է խոսքը, քանի որ համալիր փորձաքննությունը տվել է «Ձորագյուղ» Ա/Կ-ում «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունից ստացված վարկային միջոցների ծախսերի վերաբերյալ առանձնացված հաշվառում չի տարվել, այդ գումարները միացվել է կոոպերատիվի այլ աղբյուրներից ստացված եկամուտների հետ և տնօրինվել է դրանց հետ համատեղ: «Ձորագյուղ» Ա/Կ-ի կողմից Կիպրոսի հանրապետությունում գրանցված «ABS GLOBAL LIMITED» «STR EMERALD» և «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերությունների հաշվեհամարներին մնացած գումարները միացվել են այդ ընկերությունների բանկային հաշիվներին այլ աղբյուրներից ստացված միջոցների հետ և տնօրինվել է դրանց հետ համատեղ: Կիպրոսի հանրապետությունում գրանցված «ABS GLOBAL LIMITED», «STR EMERALD» և «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերությունների կողմից 2010-2013թ. ընկած ժամանակահատվածում «Ձորագյուղ» Ա/Կ-ի բանկային հաշիվներին փոխանցած գումարների ծախսման վերաբերյալ առանձնացված հաշվառում չի տարվել, այդ գումարները միացվել է Կիպրոսի այլ աղբյուրներից ստացված եկամուտների հետ և տնօրինվել է դրանց հետ համատեղ: Դատահաշվապահական փորձաքննությամբ, զուտ տնտեսագիտական տեսանկյունից դիտվել է, որ բիզնես և ներդրումային ծրագրում նախանշած միջոցների օգտագործման ուղղությունները չեն հակասում վարկի տրամադրման նպատակներին, քանի որ վարկային պայմանագրով, դրա հիման վրա լրացուցիչ համաձայնագրերով «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության կողմից «Ձորագյուղ» Ա/Կ-ին ընդհանուր 9.700.000 ԱՄՆ դոլարի և 361.000.000 ՀՀ դրամի չափով վարկային միջոցները տրամադրվել են Հիմնական և շրջանառու միջոցների ձեռքբերման և ընթացիկ գործունեության

կազմակերպան» նպատակով, այսինքն չեն եղել վարկի օգտագործման կոնկրետ ուղղությունները: Իրեն մեղադրանք է ներկայացվել որպես հարկերից խուսափողի, որը իրականությանը չի համապատասխանում, քանի որ երկար տարիների բեղմնավոր աշխատանքի արդյունքում իրենք երբեք պարտքեր և հարկեր չեն ունեցել, այլ հակառակը միշտ կանխավճարներ և գերավճարներ են ունեցել: Միայն 2010-2011թթ. ընթացքում իրենց կազմակերպությունը 45.000 ԱՄՆ դոլար է վճարել: 2012թվ. հարկային հաշվետվություն ինքը չի հասցրել ներկայացնել, քանի որ բացակայել է Հայաստանից, ունենալով պրոբլեմներ բանկի, գործընկերների և Փայլակ Հայրապետյանի հետ, մեկնել է Սիերա Լեոնե: Բանկերից գնած ոսկու ծուլակտորները, որոնք վաճառել է, ազատված են եղել ավելացված արժեքի հարկից, իսկ եթե շահույթ չի ունեցել, ինչ շահութահարկի մասին է խոսքը: Այդ բանկային ծուլակտորները վաճառել է վնասով, որպեսզի փակի այլ բանկում Փայլակի ունեցած ժամկետանց պարտքերը և կատարի բանկում ունեցած նրա վարկային պարտավորությունները: Եթե նույնիսկ շահույթ էլ լիներ, այն չէր կարող գերազանցել 2000ԱՄՆ դոլարը, իսկ ինքը 2010-2011թթ. ընթացքում վճարել է 45000 ԱՄՆ դոլարի չափ հարկեր: «Ձորագյուղ» ԱԿ-ի հարկային պարտավորությունների վերաբերյալ հայտնում է, որ հարկային տեսչություն ներկայացված 2011թվ. շահութահարկի հաշվարկում արտացոլված 1.706.413 ՀՀ դրամը, որը ձևակերպվել է 2012թ. մնացորդ, ամենևին էլ փաստացի մնացորդ չի եղել: Իրականում 2012թ. այդքան մնացորդ չէր կարող լինել, քանի որ արտադրական կոոպերատիվը գործել է 2012թ.

-19-

առաջին մի քանի ամիսների ընացքում, այն էլ շատ չնչին ծավալներով: Իրականում այդ մնացորդի հանրագումարը չի համապատասխանել փաստացի մնացորդներին: Վարկային միջոցներով գնված ոսկին և թանկարժեք քարերը վաճառել են 2010-2011թ. ընթացքում: Դրանց մի մասի իրացումը տեղ է գտել հարկային տեսչությանը ներկայացրած հաշվետվություններում, մնացած մասն էլ իրացվել է ՀՀ ոսկու շուկաներում, ոսկու առք ու վաճառքով զբաղվող տարբեր անձանց առանց փաստաթղթային ձևակերպման: Այն իրացումները, որոնք հաշվապահությամբ ձևակերպված են եղել, դրանց վերաբերյալ կազմվել են հարկային համապատասխան փաստաթղթեր և ներկայացվել են հարկային հաշվետվություններ, իսկ այն իրացումներն, որոնք կատարվել են առանց փաստաթղթավորման, հաշվապահական ձևակերպում չեն ստացել և հաշվետվություններում ներկայացվել են որպես նախորդ տարիների մնացորդներ: Այսպիսով, շահութահարկի հաշվետվություններում տեղ գտած մնացորդները չեն արտացոլել իրական պատկերը, քանի որ յուրաքանչյուր տարվա սկզբում արտադրական կոոպերատիվում ապրանքանյութական արժեքների մնացորդներ գրեթե չեն եղել: Դա էլ իր հերթին նշանակում է, որ 2010-2011թ.թ. ընթացքում գնված ոսկու ծուլակտորները 2012թ. և դրանից հետո ընկած ժամանակահատվածի ընթացքում չեն վաճառվել, քանի որ ինչպես 2010թ., այնպես էլ 2011թ. ընթացքում գնված ոսկին վաճառվել է այդ նույն թվականի ընթացքում, որպեսզի կատարվեր ձեռնարկատիրական գործունեության հետ կապված անհրաժեշտ ծախսերը: Բացի այդ, վարկը փուլերով տրամադրելու պայմաններում «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունն իրականացրել է մոնիթորինգ, որի համար անհրաժեշտ է եղել ներկայացնել ոսկու ձեռք բերման կտրոններ և հաշիվ ապրանքագրեր, որոնք կարող էին վկայել վարկի նպատակային օգտագործման մասին և նպաստեին փուլային վարկի հետագա մասնաբաժինների տրամադրմանը: Եթե ինքն այդ գումարներով ոսկի չգներ, ապա մտավախություն ուներ, որ բանկի կողմից վարկային միջոցներն ամբողջությամբ չէին տրամադրվի: Հաշվապահորեն ձևակերպված վաճառքները կատարվել է միանձնյա, որի մասին կազմակերպության աշխատակիցներին չի իրազեկել: Իսկ 2012թ. հաշվետվությունները հարկային տեսչություն չի ներկայացրել, քանի որ 2012թ. կեսերից բացակայել է Հայաստանից, ունենալով խնդիրներ գործընկերների, բանկի և Փայլակ Հայրապետյանի հետ: 2012թ. առաջին կիսամյակում հինգ փուլով 125.121, 126.012, 130.537, 98.776 և 183.766

ԱՄՆ դուլարի ոսկյա զարդերը Թուրքմենստան է ուղարկել այնտեղից տարբեր անձանց կողմից տրված պատվերների հիման վրա: Երբ առերեսման նպատակով Փ.Հայրապետյանը երկու անգամ բանտ է եկել, շարունակ փորձել է իրեն համոզել և ասել է, որ եթե ուզում ես տուն գնալ, ասա որ բանկին 600.000 ԱՄՆ դուլար կաշառք ես տվել և մի քանի օր հետո հաշվի տանն ես: Այդ իսկ պատճառով տեսնելով, որ չի համաձայնվում մասնակից դառնալ նրա գրապարտություններին, երկու անգամ էլ առերեսումը վերածել է լուրջ վիճաբանության: Հենց այդ էր պատճառը, որ առերեսումները վերջացել էին, սակայն Փայլակը լրատվամիջոցներով խոսում էր, որ դեռ տեղի չի ունեցել: Փայլակի կողմից դատարանում էլ շատ ստեր են հնչեցվել

1. Փայլակին Էկոնոմիկայի նախարարության ժողովին չեն հրավիրել, այլ ինքն է եկել սեփական նախաձեռնությամբ, որը վկայեց վկա Գագիկ Քոչարյանը: Ժողովի մասնակիցները ոչ թե 23 հոգի են եղել, այլ 9–11–ը:
2. Նախարար Ներսես Երիցյանը հայտնել է, որ իրեն Մոսկվա չի գործուղել և իր կողմից ոչ մի ծրագիր չի առաջարկվել: «Սվիսթանկ»ը իրենց վարկ չի առաջարկել:

-20-

3. Նախկին վարչապետը ժողովին ներկա չի եղել:

4. Փայլակը հայտնել է, որ Սերգեյին ու Ռուբենին նախորդ չի ճանաչել, իսկ Սասուն Նազարյանը գրել է, որ վարկի ստանալու օրերին՝ 2010թ. Հայաստանում հանդիպել է Ռուբեն Մկրտչյանին և Սերգեյ Տրիկազյուկին:

5. Ասում էր իր պարտքը չեն փակել:

6. Ասում էր Սերգեյ Տրիկազյուկի հետ չի հանդիպել:

7. Ասում էր, որ 2012թ. հունիս ամսին ՀՀ ոստիկանությունում չի գրել, որ ինքը և նա փայտերեր են:

8. Ասում էր, որ 70/30 ով իրենք են որոշել համագործակցել:

9. Ասում էր, որ 2012թ. մարտի 2-ին Ռուբեն Մկրտչյանի հետ պայմանագիր չի կապել:

10. Ասում էր, որ Ղուկաս Ղուկասյանին չեն թողել, որ Աֆրիկայից վերադառնա, իբրև եկել է վարորդական իրավունքով, սակայն գործում առկա է նրա անձնագրի պատճենը, որտեղ նշված է, որ 17.05.2013թ. դուրս է եկել Աֆրիկայից:

11. Ասում էր, որ 2012թ. օգոստոս – սեպտեմբեր ամիսներին Աֆրիկա լվացող մեքենա չի ուղարկել, նույնիսկ անձրևներին չէր կարելի այդ ծանր տեխնիկան տանել նավահանգստից լագեր, բայց իր նախաձեռնությամբ տեղափոխել են, որի ընթացքում մեքենայի տակ մարդ էր մնացել, ձգնվել և մահացել:

12. Ասում էր, որ Աֆրիկայում ոչինչ չունի և չի ուղարկել, այդ դեպքում ինչ էր ուզում իրենից Աֆրիկայում, որ ձևակերպեր իր ամուսնով և այդ առիթով գնացել է Աֆրիկա և փորձել, որ կեղծեն «GMC հոլդինգ»-ի բոլոր փաստաթղթերը: Ստիպել է Ռուբեն Մկրտչյանին և նա իր նամակում գրել է փաստաթղթերի ձևակերպումից հետո, որը դուք կհամաձայնեցնեք Ա.Սուքիասյանի հետ կամ քննչական մարմիններում, դատարանի վերջնական որոշումից հետո «GMC գլոբալ»-ի արտադրանքը Ա.Սուքիասյանի փայաբաժնի չափով նույնպես կտրամադրվի ձեզ: Գրված է ռուսերենով: Այսինքն, Փայլակը սպասում է, որպեսզի դատարանի միջոցով վերջնականորեն իրեն մեկուսացնի իր հիմնած բիզնեսից, դառնալով իր Սիերա Լեոնեի երկրում 66 տոկոսի փայաբաժնի տերը և ամենաշատը հենց Փայլակը գիտի, որ Աֆրիկայում ինքը մեծ ներդրումներ է կատարել, քանի որ իր աչքով է տեսել: Փորձում է նաև իր ներդրումները խառնել Շեյխի ներդրումների հետ, սակայն երբ Շեյխը եկել է, իրենք մեծ հնարավորություններով արդեն աշխատելիս են եղել և իր ներդրումները եղել են 2009թ., իսկ Շեյխը եկել է 2011թ. վերջերից, հիմնական տեխնիկաները Աֆրիկա ներմուծելով 2012թ. սկզբին: Պարզապես Փայլակը և Ռուբենը մտածել են, որ իր և Շեյխի համագործակցությունից հետո կմնաին մշուշում, բայց դա իրենց պիղծ կարծիքն է:

13. Ասում էր, որ Անյա Կոլինոյին չի ճանաչել, բայց սուտ է, ճանաչել են 30 տարուց ավելի: Անյա Կոլինոն նրա հետ եկել և նրա հետ էլ գնացել է ձիշտ նույն օրերին: Անյան էլ Փայլակի խաղի մեջ նախապես որոշված ֆիզուրա է:

14. Ասում էր, որ փողերը ստանալուց հետո 5 ամիս անց իմացել է, որ

խաբված է, այնինչ բանկը մեկ տարի շարունակ վարկ էր տալիս և ինքը իր ծանոթ գեոլոգներին ուղարկել է 1 տարի հետո: Հատկապես Ղ.Ղուկասյանին վարկը ստանալուց 13 ամիս հետո 2011թ. հուլիսի 24-ին: Իսկ մի քանիսը եկել են 2012թ., տոնել են նոր տարին և կրկին մեկնել աշխատելու Աֆրիկա, հատկապես Գրիշա Ջանոյանը, որին ծանոթացել է Փայլակի միջոցով և նրա առաջարկով:

15. Ասում էր հրաժարվել է վարկը փակել, սուտ է խոսում, քանի որ իրեն ստիպում

-21-

էր դեռ վարկը ստանալուց 1 տարի չանցած, իրեն տալ ամբողջ գումարը: Միաժամանակ փակելով բանկում ունեցած հսկայական ժամկետանոց վարկը, որից հետո շատ չարացել և սկսվել է այս ամենը: Փայլակը դատարանում էլ ասաց, որ ստիպել է, որ ամբողջ գումարը փակի, չնայած որ 10 տարով տրված վարկից անցել էր 1 տարուց քիչ, իսկ ինքը պարտաճանաչ վճարել է բանկի տոկոսները:

16. Սասուն Նագարյանը հայտնել է, որ Փ.Հայրապետյանն է առաջարկել ներդրում անել բիզնեսի մեջ: Հայտնել է, որ ինքն ու Փայլակը եկել են ժողովի օրը և Փայլակը բարձրացել և ծանոթացել է իր հետ, իսկ ինքը իրենց է սպասել դրսում: Հայտնել է, որ շատ պայմանագրեր է կազմել իր և Փայլակի համագործակցության վերաբերյալ, սակայն չի կնիքվել և ստորագրվել, հենց Փայլակը չի ստորագրել և հրաժարվել է պայմանագիր կազմել:

17. Փայլակը գրել է, որ իր միջնորդությամբ Գրիշա Ջանոյանը մեկուկես տարի աշխատել է Աշոտին պատկանող հանքերում:

18. Ասել է, որ Գ.Քոչարյանն իր օֆիսում մկրատով Աֆրիկայից բերված հումքի պակետն է բացել, բայց վկա Գ.Քոչարյանը դատարանում հայտնեց, որ նա նման բան չի արել:

19. Ինքը մինչև Փայլակի հետ ծանոթանալը վերջին անգամ ադամանդի հումք է բերել մեկ ամիս առաջ՝ 23.07.2009թ. 322.512 ԱՄՆ դոլարի 733.47 կարատ, բերել է Սիեռա Լեոնեյից, քանի որ մինչև իրենց ծանոթանալն ինքը Սիեռա Լեոնեի «Գլոբալ Կարատ Հոլդինգ»-ի 50 տոկոս փայատերն է եղել: Գրված է, որ սկսվում է ֆինանսական ստուգումը որտեղ ասվում է, որ «GLOBAL KARAT»-ի մեջ 50 տոկոս փայատեր է, որ վարկը նպատակային է և «Ավվամարին Լայթին» փոխանցվել է 140 միլիոն դրամ:

20. Նույնիսկ պնդում է, որ իր ծնողները մահացել են վարկ ստանալուց հետո, այնինչ մահացել էին վարկը ստանալուց 4-6 ամիս առաջ և փաստաբան ստիպված է եղել դատարան ներկայացնել մահվան վկայականները:

Եթե մինչ օրս չեն հարցաքննել Սերգեյ Տրիկազյուկին, Ալեքսանդր Վալչուկովսկուն, Անդրեյ Գոլդևսկուն և Ռուբեն Մկրտչյանին, Աֆրիկայի Սիեռա Լեոնեի երկրում համալիր փորձաքննություն չի կատարվել, ապա ինչ խարդախության կամ փողերի լվացման մասին է խոսքը: Փայլակ Հայրապետյանն ուղղակի իր գույքն է հետ ուզում, որն իր ունեցածի մի մասն է, իսկ ինքը ումից պահանջի իր ողջ կորցրածը, որը կյանքի ամբողջ ստեղծածն էր: Այսօր ընտանիքը վարձով է բնակվում, որին չի տեսել չորս տարի և արդեն 800 օր է բանտախցում է: Լավ կլիներ իրեն մեղադրելու փոխարեն օգնելին, որպեսզի այս ամենի համար պատասխան տան այն մարդիկ, ովքեր կազմակերպել են Փայլակ Հայրապետյանի հետ այս ամենը: Առաջադրված մեղադրանքներում իրեն մեղավոր չի ճանաչում: Ներկայացվել են այն ծախսերը, որոնք տեսանելի են և բանկային փոխանցումներում և իր կատարած ֆինանսական շարժերի ընթացքում, սակայն կան ծախսեր Աֆրիկայում և Հայաստանում, իրենց գործունեության հետ կապված ծրագրերում, որոնք ներառված չեն, այլ մասն են կազմում միայն իրենց սևագիր մատյաններում:

2009-2012թ.թ. ընթացքում կատարած ծախսերը, ինչպես Աֆրիկայի Սիեռա Լեոնեում, այնպես էլ Հայաստանում կազմել են 19.819.940 ԱՄՆ դոլար, «Ամերիաբանկ»-ից ստացված 10.700.000 ԱՄՆ դոլարի փոխարեն, որից փաստաթղթավորված է 17.293.780 ԱՄՆ դոլարը: 250.000 ԱՄՆ դոլար փոխանցվել է Սիեռա Լեոնեի «GLOBAL KARAT» կազմակերպությանը, որից 150.000 ԱՄՆ դոլարը «Արդշինինվեստ» բանկից 04.12.2009թ., 50 և 50.000 ԱՄՆ դոլարները «Անելիք» բանկից 2010թ. փետրվարի 2-ին և

-22-

փետրվարի 5-ին: 4.030.633 ԱՄՆ դոլար Կիպրոսում Սերգեյ Տրիկազյուկի մոտ մնացած, 2.046.000 ԱՄՆ դոլար «ABS Գլոբալ» Կիպրոսի բանկային հաշիվներից փոխանցում «GMC Գլոբալ» ՍՊԸ Աֆրիկայի Սիեռա Լեոնե: 80.000 ԱՄՆ դոլար Կիպրոսի «ABS Գլոբալ» ՍՊԸ-ից Աֆրիկայի «Գլոբալ Կարատ» ՍՊԸ-ին: 2.300.000 ԱՄՆ դոլար Սերգեյ Տրիկազյուկի կողմից փոխանցվել է Ռուբեն Մկրտչյանին, որը ապացուցվել է Սիեռա Լեոնեի բարձրագույն դատարանում: 1.382.843 ԱՄՆ դոլար Կիպրոսի «ABS Գլոբալ» ՍՊԸ-ից Աֆրիկայի «GMC Գլոբալ»-ին 25.10.2010թ., 23.02.2012թ փոխանցվել է Աֆրիկայի GT բանկ: 1.694.702 ԱՄՆ դոլար «Պրոմեթեյ» բանկին մայր գումար և տոկոսներ 2010-2011թ.թ.: 1.372.462 ԱՄՆ դոլար «Ամերիաբանկ»-ին փակված տոկոսներ 2010-2011թ.թ.: 5.907.300 ԱՄՆ դոլար վարկային և այլ միջոցների հաշվին կատարած ծախսերն ըստ համալիր փորձաքննության, այդ ծախսերը փաստաթղթավորված են 3.381.140 ԱՄՆ դոլարի չափով կամ 2.526.159 ԱՄՆ դոլարով պակաս: 756.000 ԱՄՆ դոլար Փայլակ Հայրապետյանի ՀՀ «Ջարգացման» և «HSBC» բանկերում փակված ժամկետանց վարկերի տույժ և տուգանքների մարում: 19.819.940 ԱՄՆ դոլար ընդամենը, որից փաստաթղթավորված է 17.293.780 կամ 2.526.160 ԱՄՆ դոլարով պակաս: Իր համար շատ անհասկանալի է թե ինչու «Ամերիաբանկ»-ը 12 տոկոսադրույքը դարձրեց 15 տոկոս: Խոստացված մեծ մասնաբաժնով վարկը տրամադրվեց փոքր մասնաբաժիններով և մեկ տարի չլրացած ամբողջ վարկը հետ պահանջեց, չտրամադրելով նախապես խոստացված 1.3 միլիոն ԱՄՆ դոլարի վարկը, այն դեպքում երբ ինքը պարտաճանաչ կատարել է իր վարկային պարտավորությունները և եթե ինքը նախապես տեղյակ լիներ դրա մասին, ապա այդ 1.3 մլն ԱՄՆ դոլարի չափով պակաս կներդներ իր բիզնես ծրագրերում (դատական նիստի արձանագրություն):

Դատաքննությամբ ձեռք բերված և հետազոտված ապացույցները. Տուժող Փայլակ Հայրոյի Հայրապետյանը դատարանին հայտնեց, որ 2009թ. լսել է ՀՀ Նախագահի ուղերձն այն մասին, որ ադամանդագործության ոլորտում Ռուսաստանի Դաշնության կողմից լինելու է շուրջ 500 միլիոն ԱՄՆ դոլարի պետական ներդրում, որից շուրջ 100 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրումը լինելու է ադամանդի հումքի տեսքով: Ինքը նշվածը լսելուց հետո սկսել է ոսկերչության և ադամանդի վերամշակման գործունեություն ծավալել, կատարել է շուրջ 5.000.000 ԱՄՆ դոլար գումարի ներդրում, այն է կառուցել է համապատասխան շենք-շինություններ, ձեռք բերել սարքավորումներ և այլն: Դրանից հետո այցելել է տվյալ ժամանակահատվածում ՀՀ Էկոնոմիկայի նախարարին, ով խմբի կազմում այցելել է իր արտադրամաս, որտեղ շուրջ 750 աշխատատեղ է նախատեսվել և որոշել են իրեն լիցենզավորեն, որպեսզի Ռուսաստանի Դաշնությունից հատկացնի նշված միջոցները: Նախարարի այցելությունից հետո իրեն է զանգահարել նախարարության աշխատակից Գազիկ Քոչարյանը և հրավիրել մասնակցելու ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից կազմակերպված ոսկերչության և ադամանդի վերամշակման բնագավառի գործարարների հանդիպմանը: Քանի որ ցանկացել է գործունեություն ծավալել նշված բնագավառում, ուստի ընդունել է առաջարկը և գնացել: Այնտեղ են գտնվել այն ժամանակվա ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը, արդյունաբերության վարչության պետ Գազիկ Քոչարյանը, նրանց կողքին նստած է եղել այն ժամանակ դեռևս իրեն անծանոթ, ամբաստանյալ Աշոտ Սուքիասյանը և տվյալ բնագավառի այլ գործարարներ:

Ամբաստանյալ Ա.Սուքիասյանը ներկայանալով որպես այդ բնագավառում բազմամյա փորձ ունեցող և Աֆրիկայում ադամանդի հանքեր ունեցող գործարար

-23-

հայտարարել է, որ կարող է Հայաստան ներմուծել ՌԴ-ից ստացվող հումքի արժեքից 30 տոկոս էժան զնով ադամանդի չմշակված հումք, ինչի համար անհրաժեշտ է 12 մլն ԱՄՆ դոլարի ներդրում: Նշված առաջարկն իրեն ու այլ գործարարներին հետաքրքրել է, որից հետո սկսել են քննարկել դրա պայմանները: Ընդմիջման ընթացքում Աշոտ Սուքիասյանը մոտենալով իրեն, ցանկություն է հայտնել ծանոթանալ, հայտնելով, որ իր հանգուցյալ եղբոր Լուսաբերի ընկերն է եղել: Այդ հանգամանքն իր մոտ

վատահոթություն է ներշնչել: Այնուհետև, Ա.Սուքիասյանը բոլորին հրավիրել է Երևանի Հ.Պարոնյան 14 հասցեում գտնվող իր «Ձորագյուղ» Ա/Կ–ի գրասենյակ, որտեղ նա ցույց է տվել Աֆրիկայում գործող, իբրև իրեն պատկանող հանքերի տեսագրությունները, որոնցում երևում էր, որ հանքերում աշխատանքներ են տարվում, ինչպես նաև ցույց է տվել հանքերի քարտեզներ: Դրանից շուրջ 20 օր անց, Ա.Սուքիասյանն իր գրասենյակում ցուցադրել է շուրջ 370 կարատ չնշակված ադամանդի հումք ասելով, որ այն ինքը Հայաստան է ներմուծել Սիեռա Լեոնե Հանրապետությունում գտնվող իր ադամանդի հանքերից: Այդ ընթացքում ամբաստանյալ Ա.Սուքիասյանն իրեն ներկայացել է որպես հայրենասեր, հավատացյալ անձնավորություն: Հումքի հետագա ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ադամանդները բավական բարձ որակի են, հաստատելով Աշոտ Սուքիասյանի ասածները: Հաշվի առնելով, որ նա եղել է իր հանգուցյալ եղբոր ընկերը, ինչպես նաև նրա կողմից ցույց տրված տեսագրությունները, քարտեզները և ադամանդի հումքը, հավատացել է նրան ու համաձայնվել ներդնել նշված գումարը, սակայն նախապես ասել է, որ չունի 12.000.000 ԱՄՆ դոլար, բայց ունի անշարժ գույքեր, որոնք կարող է գրավադնել և բանկից ստանալ համապատասխան գումարները: Նշված գրույցները հանդիսացել են իրենց համաձայնության սկիզբը: Այդ կապակցությամբ ինքը խորհրդակցության բոլոր մասնակիցներին հրավիրել է Սևան և հյուրասիրություն կազմակերպել, քանի որ նման ծավալի ներդրումների պարագայում ՀՀ–ում ստեղծվելու էր 10.000 աշխատատեղ: Դրանից հետո սկսվել են գործնական քայլեր իրեն, որդուն Վարդան Հայրապետյանին և խնամուն^ա Գագիկ Ղարիբջանին պատկանող «Ծովագարդի «Հայրապետ» հյուրանոցային համալիր» ՓԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի դիմաց ՀՀ բանկերից որևէ մեկից 12.000.000 ԱՄՆ դոլար վարկ ստանալուն ուղղված: Սկզբից փորձել են վարկ ստանալ «Արմսվիսբանկ» ՓԲ ընկերությունից, որտեղ իրենցից գործնական /բիզնես/ ծրագիր են պահանջել, որից հետո նոր միայն պետք է քննարկեր վարկավորման հարցը: Այնուհետև, մի որոշ ժամանակ անց ամբաստանյալ Ա.Սուքիասյանը զանգահարել է իրեն և հայտնել, որ «Արմսվիսբանկ» ՓԲ ընկերությունը չի կարողացել նման մեծ վարկ տրամադրել, սակայն ինքն ու այն ժամանակվա վարչապետ Տիգրան Սարգսյանը իբրև գտնվում են «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում, որտեղ համաձայնվել են տրամադրել 12.000.000 ԱՄՆ դոլարի վարկ, սակայն դրա համար անհրաժեշտ է, որպեսզի անշարժ գույքը տնօրինելու համար իր անվամբ լիազորագրեր տրվեն, որպեսզի ինքը հնարավորություն ունենա տվյալ գույքերը գրավադնելու բանկում և ստանալու 12.000.000 ԱՄՆ դոլար գումարը պատճառաբանելով, որ ադամանդի հանքերը պատկանում են իրեն և ինքն էլ պետք է կազմի «բիզնես» ծրագիր: Հավատալով ամբաստանյալ Ա.Սուքիասյանին, նրա անվամբ իրեն, որդուն^ա Վարդան Հայրապետյանին և խնամուն Գագիկ Ղարիբջանին և «Ծովագարդի «Հայրապետ» հյուրանոցային համալիր» ՓԲ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագարդ համայնքում գտնվող հյուրանոցային

-24-

համալիրը, նշված հյուրանոցային համալիրի տարածքում գտնվող երկու բնակելի թաղամասերը, Ջերմուկ քաղաքի Շահումյան 9 հասցեում գտնվող համալիրը, Երևանի Գաջեգործների 1–ին փողոցի 1 հասցեում գտնվող շինությունները, Այգեստանի 11 փողոցի թիվ. 77 հասցեում գտնվող տղայի սեփական տունը և Երևանի Հ.Քոչարի թիվ. 4 հասցեում գտնվող հասարակական նշանակության շինությունները և Հ.Քոչարի 2ա հասցեում գտնվող հասարակական շինությունները գրավ դնելու միջոցով տնօրինելու, վարձակալության հանձնելու վերաբերյալ լիազորագրեր են տվել: Ընդ որում Ջերմուկ քաղաքի Շահումյան 9 հասցեում գտնվող համալիրի համար տրված լիազորագրում, բացի գրավ դնելու իրավունքից նշվել է նաև, որ ամբաստանյալ Ա.Սուքիասյանը կարող է այդ գույքը վաճառել: Դրանից հետո, երբ գնահատող կազմակերպությունը նշված գույքերի շուկայական արժեքը գնահատել է ընդհանուր մոտ 31 միլիոն ԱՄՆ դոլար, «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունը նոր միայն համաձայնել է

տրամադրել վարկ: Գրավադնելուց հետո բանկն ամբաստանյալ Ա.Սուքիասյանին սկսել է տրամադրել վարկի գումարները^a մաս-մաս, սակայն թե դրանք ինչ նպատակով էին ծախսվում, ինքը չի իմացել, քանի որ վարկային միջոցները «Չորագյուղ» Ա/Կ-ի միջոցով տնօրինվել են ամբաստանյալ Ա.Սուքիասյանի կողմից: Երբ ինքը Ա.Սուքիասյանից հարցրել է, թե ինչ փուլում են գտնվում աշխատանքները, նա ամեն անգամ պատասխանել է, որ գործերն ընթանում են և ամեն ինչ նորմալ է: Ասել է նաև, որ վարկի գումարներով ձեռք է բերել տարբեր տրակտորներ, սարքավորումներ և այլ տեխնիկա, որոնք դեռ ձանապարհին են և դեռևս չեն հասել Սիերա Լեոնե:

Դրանից հետո, 2011թ. ընթացքում «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունից իմացել է, որ Աշոտ Սուքիասյանի կողմից վարկի տոկոսները չվճարելու և բանկի նկատմամբ ստանձնած պարտավորությունների չկատարելու պատճառով գրավադրված Երևանի Հր.Քոչարի 2ա հասցեի շենքը բռնագանձվում է, որի պատճառով բանկը կապնվել է իր և որդու հետ: Տեղի ունեցած զրույցից տեղեկացել են, որ ամբաստանյալ Ա.Սուքիասյանը չի սպասարկում բանկից վերցված գումարները, որի կապակցությամբ էլ բռնագանձվում է գրավադրված գույքը: Այդ տեղեկատվությունն ստանալուց հետո անմիջապես հանդիպել է ամբաստանյալ Ա.Սուքիասյանին և բացատրություն պահանջել նրանից, սակայն նա որևէ հիմնավոր պատճառ չի ներկայացրել հավելելով, որ ոչնչով չի կարող իրեն օգնել, հետագայում հեռացել է Հայաստանի Հանրապետությունից, իսկ գույքերն էլ աստիճանաբար անցել են բանկին: Ինքը բազմաթիվ անգամ խնդրել և առաջարկել է Ա.Սուքիասյանին միասին գնալ Աֆրիկա և նա ամեն անգամ խոստացել է, որ կգնան, սակայն ինչ-ինչ պատճառներով հետաձգել է միասին Աֆրիկա մեկնելը: Անհանգստանալով իր գույքի գրավադրմամբ ստացված միջոցների տնօրինման հանգամանքով, 2012թվականի սեպտեմբերի 2-ին կամ 3-ին, առանց Աշոտ Սուքիասյանին տեղեկացնելու, ինքը մեկնել է Սիերա Լեոնե Հանրապետություն տեղում հասկանալու, թե ինչ է կատարվում: Այնտեղ հանքեր շահագործող «GMC GLOBAL LIMITED» տնօրեն Ռուբեն Մկրտչյանը փոխանցել է իրեն, որ Աշոտ Սուքիասյանն իրականում իրենց ընկերությունում սեփականատեր չի հանդիսանում: «A.B.S. GLOBAL LIMITED» ընկերությունը նույնպես իրենց ընկերության սեփականությունն է և վերջինս համասեփականատեր չի հանդիսանում: Սիերա Լեոնե Հանրապետությունում տեղեկացել է նաև, որ «GMC GLOBAL LIMITED» ընկերությանը վերջին 2 տարվա ընթացքում որևէ նոր մեքենաներ ու սարքավորումներ ձեռք չի բերել: Այդ ամենից հետո հասկանալով, որ դարձել է ամբաստանյալ Ա.Սուքիասյանի հանցավոր գործողությունների գոհ, դիմել է Սիերա Լեոնեի և Հայաստանի Հանրապետության

-25-

իրավասու մարմիններին, քանի որ Աշոտ Սուքիասյանի հանցավոր գործողությունների արդյունքում կրել է ոչ թե նրա կողմից ստացած վարկի գումարի չափով գայթախյին վնաս, այլ վնաս է կրել գրավադրված ամբողջ գույքի չափով, որոնք տնօրինելու վերաբերյալ լիազորագրերն ամբաստանյալ Ա.Սուքիասյանն իրենից ձեռք է բերել խաբեությամբ նախապես իմանալով, որ չի կատարելու և հնարավորություն էլ չունի կատարել իր կողմից խոստացված բիզնես ծրագրերը, քանի որ ինչպես պարզ է դարձել հետագայում, նա չի ունեցել որևէ սեփական բիզնես Աֆրիկայում և հետևաբար այդ բիզնեսի համար ոչ մի սարքավորում ձեռք չի բերել և չէր էլ կարող ձեռք բերել: Այնտեղ հանդիպել է նաև ամբաստանյալ Ա.Սուքիասյանին, ով իրեն հայտնել է, որ փողերը չի տալու, որից հետո ինքը Ռուբեն Մկրտչյանի միջոցով դիմել է իրավապահ մարմիններին, ովքեր կալանավորել են ամբաստանյալին և ներկայացրել քննության: Այնտեղ երկու անգամ դատ է եղել, սակայն Ա.Սուքիասյանն այնտեղ ուներ շատ ծանոթություններ, ցանկանում էին իր վրա գործ սարքեին և ինքը Ռուբենի հորդորով վերադարձել է Հայաստան, իսկ այնտեղի իրավապահ մարմինները որոշել են, որ իրենց վեճը պետք է լուծվի Հայաստանի Հանրապետությունում: Վերադառնալով Հայաստան, ինքը դիմել է ինչպես իրավապահ մարմիններին, այնպես էլ լրատվամիջոցներին, որից հետո սկսվել է սույն քրեական գործը: 12.000.000 ԱՄՆ դոլար գումարի ներդրման չափը հնչեցվել է

Ա.Սուքիասյանի կողմից, հայտնելով, որ Սիերա Լեոնեի Հանրապետությունում ունի 150 հեկտար հանքեր, իսկ նշված գումարով պետք է ձեռք բերվեր կամ գնվեր ոսկի լվացող մեքենաներ և այլ սարքավորումներ հանքարդյունաբերությունը կազմակերպելու համար: Նախնական խոսակցությունների ընթացքում դիրքորոշումն այնպես էր, որ վարկը ստանալուց հետո երեք ամսվա ընթացքում սկսելու են աշխատել: Ամբաստանյալի պատճառաբանություններից մեկ էլ այն էր, որ վարկի ընդհանուր գումարից 1.300.000 ԱՄՆ դոլար գումարը չեն տրամադրել, որի կապակցությամբ էլ աշխատանքներն իբրև ավարտին չեն հասցրել: Ինքը նույնիսկ ցանկացել է օգնել Ա.Սուքիասյանին, որպեսզի հնարավորություն ունենա վերադարձնել իր գույքը և Աֆրիկա սարքավորումներ է ուղարկել Ա.Սուքիասյանին, սակայն ապարդյուն: Ամբաստանյալ Ա.Սուքիասյանը տարբեր ժամանակներում հայտնել է, որ որևէ գումար իրեն չի տալու: Հետագայում ծանոթանալով բանկում առկա բիզնես ծրագրին և գումարների ծախսման նպատակներին իրեն հասկանալի է դարձել, որ բանկից ստացված գումարները նպատակային չեն ծախսվել և իրեն ներկայումս պարզ է, որ ամբաստանյալ Ա.Սուքիասյանն ի սկզբանե ցանկացել է տիրանալ իր ունեցվածքին, որը կրել է կազմակերպված և հետևողական բնույթ: Տուժող Փ.Հայրապետյանը դատարանում 8.519.412.692 /ուր միլիարդ հինգ հարյուր տասնինը միլիոն չորս հարյուր տասներկու հազար վեց հարյուր ինսուներկու/ ՀՀ դրամի քաղաքացիական հայցի պահանջ ներկայացրեց և խնդրեց դատարանին նշված գումարն ամբողջությամբ բռնագանձել ամբաստանյալ Ա.Սուքիասյանից, որպես հանցագործության հետևանքով իրեն պատճառված գույքային վնասի հատուցում (դատական նիստի արձանագրություն): Տուժող Գագիկ Խորենի Ղարիբյանը դատարանին հայտնեց, որ մինչև դեպքերն ամբաստանյալ Ա.Սուքիասյանին չի ձանաչել, նրա հետ թշնամություն կամ բարեկամություն չի ունեցել, իսկ տուժող Փ.Հայրապետյանը հանդիսանում է իր խնամին: 2004թվականից հանդիսացել է Երևանի Հ.Քոչար փողոցի թիվ. 4/9 հասցեում գտնվող հասարակական նշանակության շինության սեփականատերը: 2010թվականին Փայլակ Հայրապետյանն իրեն խնդրել է, որպեսզի իր ծանոթ Աշոտ Սուքիասյանի

-26-

անվամբ տա նշված հասցեում գտնվող շինության տնօրինման վերաբերյալ լիազորագիր, որպեսզի նա հնարավորություն ունենա գույքը բանկում գրավադնելու, իսկ դրա արդյունքում ստացված գումարով միասին համատեղ գործունեություն իրականացնել, պատմելով ոսկու և ադամանդի արդյունաբերության գործունեություն ծավալելու մտադրության մասին: Ինքը չի մերժել Փ.Հայրապետյանին և վստահելով Աշոտ Սուքիասյանին, նրա անվամբ տվել է նշված հասցեում գտնվող շինության տնօրինման վերաբերյալ լիազորագիր: Դրանից հետո, տվյալ գույքը, ինչպես նաև Փ.Հայրապետյանին պատկանող և նրա տնօրինման տակ գտնվող այլ անշարժ գույքերի հետ միասին, ամբաստանյալ Ա.Սուքիասյանը գրավադրել է «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում, որի դիմաց պետք է բանկից ստանար 12 միլիոն ԱՄՆ դոլար գումարի չափով վարկ: Լիազորագիր տրամադրելուց հետո, գործընթացներին հետամուտ չի եղել, քանի որ լիովին վստահել է Փայլակ Հայրապետյանին: Շինությունը գրավադնելուց և վարկային միջոցներ ստանալուց հետո, 2012թվականի կեսերին Փայլակ Հայրապետյանից տեղեկացել է, որ ամբաստանյալ Ա.Սուքիասյանը խաբել է նրան և բանկից ստանալով վարկ այն բիզնես ծրագրով նախատեսված նպատակներով չի օգտագործել ու ծախսել: Հետագայում տեղեկացել է, որ Փ.Հայրապետյանը հանդիպումներ է ունեցել ինչպես Ա.Սուքիասյանի, այնպես էլ այլ մարդկանց հետ, սակայն ինքը նշված խոսակցություններին ներկա չի գտնվել և տեղյակ չէ, թե նրանք ինչ են քննարկել: Ինքը մանրամասնություններից տեղյակ չի եղել, քանի որ վստահ է եղել, որ Փ.Հայրապետյանը հետևողական անձ է: Իր գույքը եղել է շուրջ 5.000.000 ԱՄՆ դոլար գումարի չափով և գրավադրվել է միայն շինությունը, այլ ոչ թե այնտեղ գտնվող մնացած գույքը: Գույքը տնօրինելու մասին լիազորագիրն իր կողմից անձամբ տրվել է ամբաստանյալ Ա.Սուքիասյանին, իսկ լիազորել է վստահելով իր խնամուն

Փ.Հայրապետյանին, որին մինչ օրս էլ վստահում է: Ամբաստանյալ Ա.Սուքիասյանը խաբել է նաև իրեն, քանի որ լիազորագիր տրամադրելու ընթացքում Ա.Սուքիասյանն իրեն ասել է, որ բիզնես ծրագիրն իրականանալուց հետո վարկը կմարեն և գույքը կազատեն գրավից: Նշված անշարժ գույքը տարեկան շուրջ 12.000.000 ՀՀ դրամի շահույթ է ունեցել, որը ծախսվել է հիմնականում հարկերի, տուրքերի վրա: Միաժամանակ տուժող Գ.Ղարիբյանը դատարանում 5.722.356 ԱՄՆ դոլարին համարժեք 2.763.897.948 /երկու միլիարդ յոթ հարյուր վաթսուներեք հազար ութ հարյուր իննսունյոթ հազար ինը հարյուր քառասունութ/ ՀՀ դրամի քաղաքացիական հայցի պահանջ ներկայացրեց և խնդրեց դատարանին՝ նշված գումարն ամբողջությամբ բռնագանձել ամբաստանյալ Աշոտ Սուքիասյանից, որպես վերջինիս խաբեության հետևանքով իրեն պատճառված գույքային վնասի փոխհատուցում (դատական նիստի արձանագրություն):

Դատարանի կողմից հրապարակվեց տուժող Վարդան Փայլակի Հայրապետյանի նախաքննական ցուցմունքն այն մասին, որ հանդիսացել է Երևանի Այգեստանի 11–րդ փողոցի թիվ. 77 հասցեում գտնվող առանձնատան սեփականատերը: Իր հայրը Փայլակ Հայրապետյանը 2010թվականին խնդրել է, որ իր ծանոթ Աշոտ Սուքիասյանի անվամբ ինքը տա նշված շենքի տնօրինման լիազորագիր, որպեսզի վերջինս կարողանա գույքը բանկում գրավադնել և ստացված գումարով միասին համատեղ գործունեություն իրականացնեն: Վստահելով գործարքին, ինքը չի մերժել հորը և Աշոտ Սուքիասյանի անվամբ տվել է Երևանի Այգեստան 11–րդ փողոցի թիվ. 77 հասցեում գտնվող բնակելի տան տնօրինման գրավ դնելու վերաբերյալ լիազորագիր: Գույքը բանկում գրավադրվելուց հետո, հորից տեղեկացել է, որ Աշոտ Սուքիասյանը խաբել է իրենց և

-27-

«Ամերիաբանկ»-ից ստանալով շուրջ 10.700.000 ԱՄՆ դոլար գումարի վարկ այն բիզնես ծրագրով նախատեսված նպատակներով չի օգտագործել, այլ ծախսել է իր քնահաճությամբ, անձնական կարիքների համար:

Հատոր 2, գ.թ. 103 – 104:

Հատոր 10, գ.թ. 37 – 38:

2015թ. սեպտեմբերի 24–ի դատական նիստում, տուժող Վ.Հայրապետյանի ներկայացուցիչ Շ.Փիրուզյանը 623.403.360 /վեց հարյուր քսաներեք միլիոն չորս հարյուր երեք հազար երեք հարյուր վաթսուներեք/ ՀՀ դրամի քաղաքացիական հայցի պահանջ ներկայացրեց և խնդրեց դատարանին՝ նշված գումարն ամբողջությամբ բռնագանձել ամբաստանյալ Աշոտ Սուքիասյանից, որպես հանցագործության հետևանքով տուժող Վարդան Հայրապետյանին պատճառված գույքային վնասի փոխհատուցում (դատական նիստի արձանագրություն): Վկա Գագիկ Կառլենի Քոչարյանը դատարանին հայտնեց, որ աշխատում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունում, որպես վարչության պետ: Ամբաստանյալ Ա.Սուքիասյանին ճանաչում է 2008թվականից որպես գործարար «Ձորագյուղ» արտադրական կոոպերատիվի տնօրեն, իսկ տուժող Փ.Հայրապետյանին ճանաչում է շատ ավելի վաղ ժամանակից, նրանց հետ թշնամություն կամ բարեկամություն չունի: 2009թվականին մշակվել է ակնագործության և ոսկերչության զարգացման ծրագիր, որն ուղղված է եղել ոլորտի վրա ձգնաժամի ազդեցության նվազեցմանը: Ծրագիրը հավանության է արժանացել ՀՀ Կառավարության 2009թվականի օգոստոսի 20–ի թիվ. 34 արձանագրային որոշմամբ: Մասնավորապես տվյալ որոշմամբ հավանության է արժանացել ակնագործության և ոսկերչության զարգացման միջոցառումների ժամանակացույցը: Նշված միջոցառումների շրջանակներում, նախարարության կողմից մշակվել և ՀՀ Ազգային ժողով են ներկայացվել միջոցառումներով նախատեսված օրենսդրական ակտերի նախագծեր, բանակցություններ են իրականացվել ռուսական և իրանական կողմերի հետ ոսկերչական իրերի դրոշմների փոխադարձ ճանաչման հարցերով, ռուսական «Ալթոս» ընկերության հետ բանակցել է հայկական ընկերությունների ցանկի ավելացման և այդ ընկերության կողմից

հայկական ընկերություններին վաճառվող ադամանդների ծավալների ավելացման հարցի շուրջ: Նշված հարցերով նախարարությունում կայացել են մի շարք քննարկումներ, սակայն ներկայումս տևական ժամանակ է անցել և չի կարող հիշել կոնկրետ քանի քննարկում է տեղի ունեցել: Քննարկումներին մասնակցել են ոլորտի ընկերությունների ներկայացուցիչները: Քննարկումները կրել են զուտ աշխատանքային բնույթ և դրանց ընթացքի վերաբերյալ արձանագրություններ չեն կազմվել: Իսկ արդյունքներն արտացոլված են ընդունված համապատասխան օրենսդրական ակտերում: Ծրագրի շրջանակներում անցկացված քննարկումներին մասնակցող ընկերությունների ընտրությունը պայմանավորվել է նրանց տվյալ ոլորտում ներգրավվածության աստիճանով, հաշվի առնելով ադամանդների մշակման գործընթացում նրանց մասնակցությունը, ոսկերչության ոլորտում իրականացված գործունեությունը և ընդգրկված լինելը Հայաստանի ադամանդագործների և ոսկեգործների ասոցիացիայում: Որքանով հիշում է, քննարկումներին մասնակցել են ոլորտի 4–5 ընկերություններ, ինչպես նաև Հայաստանի ադամանդագործների և ոսկեգործների ասոցիացիայի կողմից կազմակերպված քննարկումներին մասնակցել են ասոցիացիայի -28-

այլ անդամներ: ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից կազմակերպվող քննարկումներին մասնակցել է նաև Փայլակ Հայրապետյանը և Աշոտ Սուքիասյանը: Քննարկմանը մասնակիցները հրավիրվել են բանավոր կերպով հեռախոսազանգերով: Աշոտ Սուքիասյանը մասնակցել է որպես ոլորտում գործող «Ձորագյուղ» արտադրական կոուպերատիվի ներկայացուցիչ: Նախարարության կողմից ընդհանուր առմամբ կազմակերպվել է մոտավորապես 4–5 քննարկում, որոնցից մեկի ժամանակ 2009թվականի աշնանը Աշոտ Սուքիասյանն առաջարկություն է ներկայացրել առ այն, որ Աֆրիկայի Սիերա Լեոնե Հանրապետությունում ունի ադամանդի հանքեր, որտեղից կարող է Հայաստան ներկրել ադամանդի հումք ռուսական «Ալթոսա» ընկերության կողմից առաջարկվող հումքի գնից ավելի ցածր գներով: Որոշ ժամանակ անց, նա իր ընկերության գրասենյակում ներկայացրել է իբրև իր հանքից արդյունաբերած ադամանդի հումք, որի արժեքի վերաբերյալ ընկերությունների տնօրենների կողմից կարծիքը բացասական լինելուց հետո, տվյալ հարցն այլևս չի բարձրացվել և չի քննարկվել: Ի հավաստումն այն բանի, որ նա Աֆրիկայում ունի հանքեր, Ա.Սուքիասյանն իր գրասենյակում ներկայացրել է տեսաերիզ և հանքի քարտեզ-հատակագիծ: Տեսաերիզը դիտվել է շատ մակերեսորեն: Այն վերաբերել է հանքի տարածքում նրա գտնվելու ինչ–որ ժամանակահատվածի, ցուցադրվել են նաև ինչ–որ շինություններ և ձեռքերով հումքի մաղի գործընթաց: Այլ տվյալներ, այդ թվում նաև փաստաթղթային, առ այն, որ հանքներն իրեն են պատկանում, ամբաստանյալ Ա.Սուքիասյանը չի ներկայացրել: Նա ասել է նաև, որ մեծ քանակով հումքի ներմուծում իրականացնելու համար կպահանջվեն համապատասխան ներդրումներ: Տուժող Փ.Հայրապետյանի և ամբաստանյալ Ա.Սուքիասյանի համագործակցության մասին, այն ժամանակ ինքը տեղեկացված չի եղել: Նախարարության խորհրդակցության սենյակը փոքր է և ամբիոն չունի, ուստի բոլոր մասնակիցները նստում են միմյանց կողք: Բացի այդ, մի քանի խորհրդակցություններ են եղել, որոնցից մեկն անցկացվել է Սևանում, տուժող Փ.Հայրապետյանի հրավերով: Հետագայում Ռուսաստանի Դաշնությունը մերժել է մշված վարկավորման մասին ՀՀ խնդրանքը և ծրագիրն այդքանով սահմանափակվել է: Կատարված բոլոր գործողությունների արդյունքում կայացվել են բազմաթիվ որոշումներ, որոնցով նվազեցվել է հարկերը և այլ, այնպես որ ՀՀ կառավարության կողմից իրականացվել է բազմածավալ աշխատանք: «Ձորագյուղ» Ա/Կ–ի գործունեությանը ծանոթ է եղել, քանի որ այդ ընկերությունը մյուս ընկերությունների պես ներկայացրել է համապատասխան հաշվետվություններ, որոնք իրենց կողմից ուսումնասիրվել են: Իրենց ժողովներին և քննարկումներին մասնակցել են մասնագետներ, որոնք հավանություն չեն տվել Աֆրիկայից ներկայացված հումքի որակին: Ա.Սուքիասյանն ադամանդի հումքը ՀՀ ներկրել է բացառապես օրինական ճանապարհով, քանի որ դրա համար սահմանված կարգ գոյություն ունի և

այլ ճանապարհ չկա: Բացի այդ, իրենց ժողովները կազմակերպվել են սահմանված ծրագրերի շրջանակներում, որը Ա.Սուքիասյանի կողմից ներկայացված հումքի հետ որևէ առնչություն չի ունեցել, այլ վերջինս մյուսների պես մասնակցել է քննարկումներին (դատական նիստի արձանագրություն):

Վկա Ղուկաս Արամայիսի Ղուկասյանը դատարանին հայտնեց, որ տուժող Փ.Հայրապետյանին ճանաչում է 2011թվականի ապրիլ ամսից: Վերջինիս հետ ծանոթացել է ընկերոջ Գրիշա Ջանոյանի միջոցով: Այդ ժամանակ վերջինս տեղեկացրել է իրեն, որ իր ծանոթ Փայլակ Հայրապետյանին Աֆրիկա ուղարկելու համար անհրաժեշտ է հորատող մեքենա: Ընկերոջ խնդրանքով հանդիպել է Փայլակ

-29-

Հայրապետյանին, ում հետ միասին 2011թվականի ապրիլ ամսին Թբիլիսի քաղաքից 25.000 ԱՄՆ դոլարով գնել է «ԶԻԼ-131» հենքի վրա ՄԳԵ-50 հորատող մեքենա-հաստոց, որը 2011թվ. մայիսի 27-ին կամ 28-ին Փոթի նավահանգստից ուղարկվել է Սիերա Լեոնե Հանրապետություն: Իր, Փ.Հայրապետյանի և ամբաստանյալ Ա.Սուքիասյանի հետ ձեռք բերված նախնական համաձայնության հիման վրա, այդ մեքենայի վրա աշխատելու համար 2011թվ. հուլիսի 24-ին մեկնել է Սիերա Լեոնե Հանրապետություն: Այնտեղ իրեն դիմավորել է Սերգեյ Տրիկոպուկի «Գլոբալ Կարատ» ընկերության աշխատակից Անժեն, ով իրեն տեղավորել է արդեն կազմակերպված ճամբարում և ինքը սկսել է տարբեր աշխատանքներ կատարել, այդ թվում աշխատել է գնված հորատող մեքենայով: Աշխատանքի ընդունվելու հետ կապված, ամբաստանյալ Ա.Սուքիասյանի հետ ունեցած հանդիպման ժամանակ, վերջինս առաջարկել է աշխատել Սիերա Լեոնե Հանրապետությունում իրեն պատկանող «Զի Էմ Սի Գլոբալ» ընկերության հանքերում^ա ամսական 2.000 ԱՄՆ դոլար աշխատավարձով: Աֆրիկայում ընդհանուր աշխատել է շուրջ 22 ամիս, աշխատած ժամանակահատվածի դիմաց Ա.Սուքիասյանն իրեն պարտք է մնացել 38.000 ԱՄՆ դոլար աշխատավարձի գումար, որը մինչ օրս չի վճարվել: Ետ է վերադարձել բարեկամների օգնությամբ, ովքեր գումար են ուղարկել, ինքը ինքնաթիռի տոմս է գնել և վերադարձել Հայաստան: Սկզբնական շրջանում իրենք պայմանավորվել են, որ ինքը 6 ամսով է մեկնելու, սակայն ժամանակն անցնելուց հետո իրեն ասել են, որ ևս երեք ամիս մնա, իսկ դրանից հետո իր կամքին դեմ իրեն պահել են այնտեղ, աշխատավարձ չեն վճարել, իսկ անձը հաստատող փաստաթղթերը պահել է նրանց աշխատակից Անժեն: Ինքը Հայաստան է վերադարձել մեծ դժվարությամբ վարորդական իրավունքի վկայականով: Նշված երկու ընկերությունների բաժնետերերը նույն անձինք էին, իսկ հանքերից հանվել է ադամանդի հումք և պահեստավորվել, սակայն հետագայում այդ հումքը ուր է ուղարկվել, ինքը տեղյակ չէ: Ինքը դիմել է իրավապահ մարմիններին չվճարված աշխատավարձի և կատարվածի կապակցությամբ, սակայն շուրջ 1 տարի քննություն իրականացնելուց հետո, իր դիմումը մերժվել է: Սիերա Լեոնե Հանրապետություն իր մեկնելը պայմանավորված է եղել Աշոտ Սուքիասյանի հետ ձեռք բերված պայմանավորվածությամբ: Ա.Սուքիասյանի բաժնետեր լինելու մասին ինքը տեղեկացել է այնտեղի իրենց խմբավար Վահանից, որն Ա.Սուքիասյանի խնամին է եղել: Այնտեղ իրենց կողմից կառուցված ֆաբրիկան սկզբնական շրջանում սկսել է լավ աշխատել, սակայն անհասկանելիորեն դրա աշխատանքը դադարեցվել է: Ընդհանուր առմամբ իրեն վճարվել է 8.750 ԱՄՆ դոլար աշխատավարձ, որն ամեն ամսի ստացել է կինը Երևանում գտնվող Ա.Սուքիասյանի գրասենյակից (դատական նիստի արձանագրություն):

Վկա Հրանտ Մուկուչի Մուրադյանը դատարանին հայտնեց, որ ամբաստանյալ Ա.Սուքիասյանի հետ ծանոթացել է 2011թվ. սեպտեմբեր ամսին, նրա հետ թշնամություն կամ բարեկամություն չունի: Ա.Սուքիասյանի հետ ծանոթացել է վերջինիս Երևանի Պարոնյան փողոցի վրա գտնվող գրասենյակում, որտեղ այցելել է այն բանից հետո, երբ տեղեկացել է, որ Ա.Սուքիասյանն Աֆրիկայում գտնվող հանքերում աշխատելու համար տարբեր մասնագիտությամբ մարդիկ է ընդունում աշխատանքի: Այդ մասին տեղեկացել է իր ընկերոջից, ով մտերիմ է եղել Ա.Սուքիասյանի հետ: Այդ ժամանակ այնպես էր դասավորվել, որ ինքը

չունենալ աշխատանք և ցանկանում էր աշխատանքի տեղավորվել: Ա.Սուքիասյանի հետ ծանոթանալուց հետո, վերջինս իրեն ցուցադրել է Աֆրիկայում գտնվող ինչ-որ հանքերի վերաբերյալ սիրողական նկարահանած ֆիլմ, ասելով, որ այնտեղ տեսանկարահանված հանքերն իրեն են պատկանում, այնտեղից

-30-

արդյունահանում է ոսկի և ադամանդ: Միաժամանակ Ա.Սուքիասյանը հայտնել է, որ Հայաստանից տարբեր մասնագիտության մարդիկ է գործուղում այնտեղ աշխատելու և հավելել, որ այնտեղ մեկ բժիշկ մասնագետի կարիք կա: Արդյունքում Ա.Սուքիասյանն իրեն առաջարկել է ամսական 2.000 ԱՄՆ դոլար աշխատավարձով մեկնել Սիերա Լեոնե իր հանքերում աշխատող անձնակազմին բժշկական ծառայություններ մատուցելու համար: Ինքը համաձայնել և 2012թվ. հունվարի 17-ին մեկնել է Սիերա Լեոնե Հանրապետություն: Իր հետ Աֆրիկա են մեկնել ևս երկու մարդ Արմենը և Արսենը: Մեկնելու պահին, ինքն արդեն աշխատում էր «Նաիրի Ինչուրանս» ապահովագրական ընկերությունում, որտեղ ներկայացրել է համապատասխան փաստաթղթեր Աֆրիկա մեկնելու համար, որպեսզի վերադառնալուց հետո հնարավորություն ունենա կրկին վերականգնվել աշխատանքի: Աֆրիկայում գտնվող հանքերում տեղակայված տարբեր ձամբարներում աշխատել է մինչև 2012թվ. նոյեմբերի 23-ը, որից հետո վերադարձել է Հայաստան: Աֆրիկայում գտնվելու ընթացքում Աշոտ Սուքիասյանին այնտեղ չի տեսել:

2012թվականի ամռան վերջին կամ աշնանը հանքավայր է այցելել Փայլակ Հայրապետյանը, ում նախկինում չի ճանաչել: Փ.Հայրապետյանը մոտ 1-2 շաբաթ մնացել է հանքավայրում: Նրա հետ խոսակցությունից իմացել է, որ նա և Ա.Սուքիասյանը Աֆրիկայում ընդհանուր բիզնես ունեն և Փայլակ Հայրապետյանն իր կապիտալը վստահել է Ա.Սուքիասյանին աֆրիկյան հանքավայրերում աշխատանքներ կատարելու համար: Ինչ վերաբերում է Աֆրիկայում իր գտնված ժամանակահատվածում հանքավայրեր բերված հանքարդյունահանող տեխնիկային, ապա գիտի, որ այն բերվել է արաբների և բելոռուսների կողմից, Աշոտ Սուքիասյանը որևէ հանքարդյունահանող տեխնիկա հանքեր չի բերել, բացառությամբ ամենասկզբում բերված հորատող մեքենայի: Ըստ իր ունեցած տեղեկությունների և հենց հանքավայրի աշխատողների խոսակցություններից հասկացել է, որ հանքավայրը Ա.Սուքիասյանին չի պատկանել, որ վերջինս կարող էր դառնալ այնտեղ փայտեր, եթե կատարեր որոշակի ներդրումներ: Ինքը վերադարձել է Հայաստան բարեկամների կողմից գնված ինքնաթիռի տոմսով, քանի որ Ա.Սուքիասյանը չի կատարել իր խոստումը և պատշաճ աշխատավարձ չի վճարել, իրեն ընդհանուր առմամբ վճարելով շուրջ 3.500 ԱՄՆ դոլար: Ինքը որևէ տեղեկություն չունի Ա.Սուքիասյանի կողմից Աֆրիկա գումարներ փոխանցելուց, ինքը տեղյակ է, որ որոշակի գումար էր գալիս ձամբար, որով գնում էին սնունդ և դեղորայք: Աշխատավարձը ստացել է կինը Երևանում, քանի որ այնտեղ իր կողմից գումար վերցնելու պարագայում չէր կարող դա ուղարկել ընտանիքին, քանի որ այնտեղ այդպիսի հնարավորություններ չկային: Այնտեղ ողջ երկիրն էլ հանք է, քանի որ ողջ երկրով հանքեր են: Ա.Սուքիասյանի և Փ.Հայրապետյանի միջև առաջացած կոնֆլիկտներից սկզբնական շրջանում տեղեկացել է վերջինիցս, երբ նա եկել էր Աֆրիկա, իսկ մնացած զարգացումների մասին տեղեկացել է Երևան վերադառնալուց հետո: Այնտեղ գտնվելու ընթացքում ինքը մտածել է, որ այդ ամենի մի մասը պատկանում է Ա.Սուքիասյանին, սակայն երբ խմբավարներին զանգահարում էր Փ.Հայրապետյանը, նրանք համաձայնեցնում էին ինչ պատասխանել և նոր են պատասխանել զանգերին: Դրա ականատեսը լինելուց հետո հետաքրքրվել է, թե ով է Փ.Հայրապետյանը և իրեն պատասխանել են, որ Փ.Հայրապետյանի ներդրումների շնորհիվ են այնտեղ աշխատել (դատական նիստի արձանագրություն):

Վկա Սասուն Սուրենի Նազարյանը դատարանին հայտնեց, որ տուժող Փ.Հայրապետյանին ճանաչում է շուրջ 35 տարի, նրա հետ թշնամություն կամ բարեկամություն չունի, գտնվում է մտերիմ հարաբերությունների մեջ: Ամբաստանյալ

-31-

Ա.Սուքիասյանին ճանաչում է 1983թվականից, բնակության վայրից, նրա հետ թշնամություն կամ բարեկամություն չունի, քանի որ նա փոխել է բնակության վայրը և իրենց կապը կտրվել է: Պետական համակարգի թռչակի անցնելուց հետո աշխատանքի է ընդունվել տուժող Փ.Հայրապետյանի մոտ և զբաղվել Երևանի Հր.Քոչար փողոցի թիվ. 2 հասցեում գտնվող հիմնարկությունում, որպես իրավախորհրդատու: Տուժող Փ.Հայրապետյանը մեծ աշխատանքային ջիղ ունեցող անձավորություն է և ցանկացել է շատ աշխատատեղ ստեղծել: 2009թվականի աշնանը տուժող Փ.Հայրապետյանը հանդիպել է իրեն և հայտնել, որ ծանոթացել է Ա.Սուքիասյան անունով մի շատ լուրջ գործարարի հետ, ով գործունեություն է ծավալում ադամանդագործության ոլորտում և Աֆրիկայի Սիերա Լեոնե Հանրապետությունում ունի ադամանդի հումքի հանքեր: Ա.Սուքիասյանի անունը լսելով մտաբերել է, որ նրան ճանաչում է դեռևս 1983թվականից, քանի որ բնակվել են հարևանությամբ Երևանի Կիկյան փողոցի իր ներկայիս բնակության հասցեում: Թեև Ա.Սուքիասյանի հետ անմիջականորեն չի առնչվել շուրջ 15 տարի, այնուամենայնիվ, շատ զարմացել է լսելով, որ Աշոտը դարձել է հաջողված գործարար, քանի որ նրան երկար տարիներ ճանաչել է որպես համեստ, ոչնչով աչքի չընկնող անձնավորության: Երբեք նրա մոտ չի նկատել գործարարի ջիղ: Փ.Հայրապետյանին ասել է, որ ճանաչում է Ա.Սուքիասյանին, այնուամենայնիվ նրա գործարար լինելու մասին կարծիք չի հայտնել, քանի որ իր համար անհասկանալի է եղել, թե ինչպես է Ա.Սուքիասյանին հաջողվել դառնալ խոշոր գործարար և Աֆրիկայում ադամանդի հանք դնել: Որոշ ժամանակ անց, Փ.Հայրապետյանը ամբաստանյալ Ա.Սուքիասյանին և ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունում տեղի ունեցող քննարկումների մասնակից որոշ ադամանդագործների և նախարարության ներկայացուցիչների հրավիրել է Սևանի Ծովազարդ համայնքում գտնվող իր հյուրանոցային համալիր հյուրասիրության, որին ինքն էլ է ներկա գտնվել: Իր հիշելով այդ ժամանակ խոսք է գնացել նաև Ա.Սուքիասյանի հետ համագործակցության մասին, խոսվել է 12 միլիոն ԱՄՆ դոլար ներդրում կատարելու մասին Աֆրիկայում Ա.Սուքիասյանին պատկանող հանքերում: Թե ով պետք է կատարեր այդ ներդրումները և ինչ պայմաններով, այն ժամանակ ինքը չի հասկացել: Սակայն Փ.Հայրապետյանն այդ օրերին իրեն ասել է, որ ինքն է համագործակցելու Ա.Սուքիասյանի հետ և ինքն է ներդնելու պահանջվող 12 միլիոն ԱՄՆ դոլարը նրա հանքերում սարքավորումներ գնելու համար, որի շնորհիվ Հայաստանում կբացվեն մոտ 10.000 նոր աշխատատեղեր, կվերագործարկվեն ադամանդի վերամշակման հին գործարանները, կբացվեն նորերը, որից բոլորն էլ կունենան մեծ եկամուտներ: Փ.Հայրապետյանն իրեն ասել է նաև, որ պահանջվող ներդրումների գումարները կկարողանա ապահովել իր ունեցվածքը գրավ դնելու շնորհիվ: Քանի որ նա ուներ ոչ բավարար վարկային կենսագրություն և տարիքն էլ չէր բավարարում, ուստի Ա.Սուքիասյանը նրան խորհուրդ է տվել գրավադրման ենթակա գույքի տնօրինման, գրավադրման լիազորագրեր տալ իր անվամբ: Փ.Հայրապետյանը համաձայնվել է իրեն հանձնարարել է կազմակերպել լիազորագրեր տալու գործընթացը: Ա.Սուքիասյանի խնդրանքով, երեքով մեկ առ մեկ նրան ցույց են տվել գրավադրման ենթակա գույքը: Դրանից հետո, Փ.Հայրապետյանն ինչպես նաև նրա որդին Վարդանը և խնամին Գագիկ Ղարիբյանը, Փ.Հայրապետյանի խնդրանքով Էրեբունի նոտարական տարածքի նոտար Ա.Ղազարյանի նոտարական գրասենյակում ստորագրել են լիազորագրեր, որոնցով Ա.Սուքիասյանին լիազորել են տնօրինելու սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը, մասնավորապես իրավունք ունենալ իրենց անունից այդ գույքը գրավ դնել բանկերում: Ինքն էլ անձամբ մի քանի

-32-

անգամ, մինչև Փ.Հայրապետյանի նոտարական գրասենյակ գնալը, անձամբ ուսումնասիրել է այդ լիազորագրերը, կատարել է պահանջվող մուժումներ, լուծել այլ կազմակերպչական հարցեր, որից հետո միայն ստորագրվել են լիազորագրերը: Ա.Սուքիասյանի կողմից գույքը «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում գրավ դնելու և վարկ ստանալուց հետո, ինքն այլևս նրանց գործերին չի խառնվել: Տեղյակ է եղել, որ վարկը

ստանալուց հետո, 2010թ. օգոստոս ամսին պետք է կատարվեր վարկի առաջին մարումը և այդ մասին հայտնել է Ա.Սուքիասյանին, որը ժպտալով պատասխանել է, որ տեղյակ է: Դրանից հետո ինքը տեղյակ չէ, թե այդ ընթացքում նրանց միջև ինչ հարաբերություններ և գործողություններ են տեղի ունեցել, հետագայում իմացել է, որ Ա.Սուքիասյանն Փ.Հայրապետյանին ասել է, որ վերջինս իրեն հեռու պահի նրանց համատեղ գործերից: Այդ մասին Փ.Հայրապետյանն իրեն ասել է հետագայում: Այնուամենայնիվ, 2012թ.վականի օգոստոս ամսին Փ.Հայրապետյանն իրեն տեղեկացրել է, որ Ա.Սուքիասյանը չի կատարում իր վարկային պարտավորությունները, ինչի հետևանքով բանկը վերցրել է Հր.Քոչարի 2 հասցեում գտնվող շենքը, իսկ հետագայում նաև մնացած շենքերը: Այդ ժամանակ Փ.Հայրապետյանը ցանկացել է անձամբ մեկնել Աֆրիկա և տեղում հասկանալ, թե ինչ է կատարվում, քանի որ Աշոտը բացակայում էր Հայաստանից: Սակայն մեկնելուց քաջ մտախոհել է Փ.Հայրապետյանի եղբայրը և նա չի կարողացել մեկնել, որի պատճառով իրեն է խնդրել, որ գնա իր փոխարեն: Չմերժելով ընկերոջը մեկնել է Սիերա Լեոնե Հանրապետություն: Այնտեղ իրեն դիմավորել է ծագումով հայ տղամարդ, հանք շահագործող ընկերության տնօրեն Ռուբեն Մկրտչյանը: Ինքը նրան հայտնել է, որ այցելել է Աֆրիկա պարզելու, թե ինչ է պատահել բանկից վերցված գումարները: Ռուբիկը սկզբում խաբել է ասելով, որ գումարներ չեն ստացել, սակայն հետո ասել է, որ ստացել են: Ռուբիկն անընդհատ խաբում էր իրեն, ամեն պահանջից հետո զանգահարել է ինչ–որ ռուսի և նրա հետ խոսել: Ինքը այցելել է Աֆրիկայում գտնվող երեք հիմնարկներ, որոնք անհետք էին և նմանվում էր «Բլեֆ» ֆիլմին: Ռուբիկն ասել է, որ Ա.Սուքիասյանը ցանկացել է գնել հանքեր, սակայն չի կատարել իր խոստումները, ինչի հետևանքով նա ոչինչ չունի: Իր հետագա հարցերին Ռ.Մկրտչյանի պատասխաններից տեղեկացել է, որ հանքի գնման շուրջ պայմանավորվածությունն եղել է հանքի փաստացի սեփականատեր Սերգեյի և Աշոտ Սուքիասյանի միջև: Խոսք է գնացել 12 միլիոն ԱՄՆ դոլարի մասին, որից Ա.Սուքիասյանը պետք է 4.000.000 ԱՄՆ դոլար գումար վճարեր Սերգեյին, իսկ մնացած 8.000.000 ԱՄՆ դոլարով պետք է գնվեր հանքերի լիարժեք շահագործման համար անհրաժեշտ տեխնիկա: Այդ ներդրումների դիմաց Սերգեյը Ա.Սուքիասյանին պետք է փոխանցեր բիզնեսի 50 տոկոսը: Ըստ Ռուբեն Մկրտչյանի, պայմանավորված գումարից տեղ է հասել միայն մոտ 4.000.000 ԱՄՆ դոլարը: Հետևաբար, իրենց պայմանավորվածությունը Ա.Սուքիասյանի կողմից խախտվել է: Ինքը Ռ.Մկրտչյանին ասել է, որ այդ գումարները ստացվել են Փայլակ Հայրապետյանի գույքի գրավադրման արդյունքում իբր Ա.Սուքիասյանին պատկանող հանքերում տեխնիկա գնելու համար: Ռ.Մկրտչյանը պատասխանել է, որ ինքը չի իմացել այդ մասին և որ Ա.Սուքիասյանն իրեն ասել է, որ դրանք իր գումարներն են: Խոսակցությունն ավարտվել է նրանով, որ Ռ.Մկրտչյանը պնդել է, որ Ա.Սուքիասյանը հանքեր չունի և չի էլ ունեցել: Ինքը Ռ.Մկրտչյանից պահանջել է, որ ներկայացնի փաստաթղթեր, որոնք կարող էին վկայել հանքի պատկանելության և իրենց միջև պայմանավորվածությունների մասին: Դրան ի պատասխան, Ռ.Մկրտչյանն իրեն ցույց է տվել անգլերենով մի անստորագիր թուղթ ասելով, որ դրա հիման վրա է Ա.Սուքիասյանը ցանկացել հանքեր գնել, սակայն այդ

-33-

թուղթը այնքան շինծու և թերի է թվացել իրեն, որ անգամ չի ցանկացել հասկանալ, թե այն ինչ բովանդակություն ունի: Հետևաբար, այդ թուղթը չի վերցրել և չի ուսումնասիրել: Ռ.Մկրտչյանից ստացված տեղեկատվության մասին հեռախոսով հաղորդել է Փ.Հայրապետյանին, ով շտապ ժամանել է Սիերա Լեոնե Հանրապետություն, սակայն նա նույնպես ոչ մի էական հանգամանք չի պարզել:

Ռ.Մկրտչյանին և Սերգեյ Տրիկազյուկին առաջին անգամ հանդիպել է 2010թ.վականին Հայաստանում³ վարկի ձևակերպման օրերին: Թեև ինքը և Փ.Հայրապետյանը հանդիպել են նրանց, սակայն իրենց ներկայությամբ Ա.Սուքիասյանն իր հյուրերի հետ գործերի մասին չի խոսել: Իր տպավորությունն այնպիսին է եղել, որ Ա.Սուքիասյանն իր և Փ.Հայրապետյանի ներկայությամբ խուսափել է հյուրերի հետ խոսել գործերից, որպեսզի վերջինս հանդես չգա որպես փայտեր կամ բիզնեսի

հետ անմիջական կապ ունեցող անձ (դատական նիստի արձանագրություն):

Վկա Նելլի Արտուշի Հարությունյանը դատարանին հայտնեց, որ ամբաստանյալ Ա.Սուքիասյանին ճանաչում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունում տեղի ունեցած ժողովից, նրա հետ թշնամություն կամ բարեկամություն չունի: Տուժող Փ.Հայրապետյանին չի ճանաչում: Նախկինում աշխատել է ոսկերչական գարդերի պատրաստման և վաճառքի ոլորտում գործունեություն իրականացնող «Զի-Սի-էյ» ՓԲ ընկերությունում, որպես տնօրեն: 2009թվականի աշնանը ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից ինքը, որպես նշված ընկերության տնօրեն հրավիրվել է մասնակցելու ադամանգագործության ոլորտի զարգացման հետ կապված ծրագրի քննարկմանը: Ընդունելով քննարկմանը մասնակցելու հրավերը, ներկայացել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն: Քննարկումը տեղի է ունեցել նախարարության խորհրդակցությունների դահլիճում, որին ներկա են գտնվել ոլորտում գործունեություն ծավալող բազմաթիվ ընկերությանների ղեկավարներ և ներկայացուցիչներ: Նախարարությունից քննարկմանը մասնակցել է այդ ժամանակահատվածում ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանը և վարչության պետ Գագիկ Քոչարյանը: Հանդիպմանը ներկա գտնվող Աշոտ Սուքիասյանն իր ելույթի ժամանակ առաջարկել է Աֆրիկայի Սիերա Լեոնե Հանրապետությունում գտնվող և իրեն պատկանող ադամանդի հանքերից խոշոր քանակությամբ հարմար պայմաններով և շահավետ գներով ադամանդի հումք ներմուծել: Ըստ Ա.Սուքիասյանի ներկայացման, նա հնարավորություն ուներ այդ ադամանդի հումքը մատչելի գներով, ընդհուպ ռուսական «Ալբոս» ընկերության կողմից այդ ժամանակահատվածում մատակարարվող հումքից մինչև 50 տոկոս էժան գներով ներմուծել Հայաստանի Հանրապետություն: Նրա այդ առաջարկը շատ զարմանալի է թվացել այդ ոլորտում երկար տարիներ գործունեություն իրականացնող ընկերությունների ներկայացուցիչների համար, այդ թվում նաև իր համար: Ա.Սուքիասյանը առաջարկել է նաև այն գործարարներին, ովքեր հետաքրքրված են իր առաջարկով և ցանկանում են ստանալ այդ հումքը, կատարեն պատվերներ վճարելով կանխավճար հումքը ստանալու համար, սակայն ինքն առաջարկել է, որ Ա.Սուքիասյանը նախ ներկայացնի ադամանդի հումքը, որից հետո կորոշվի մնացածը: Քննարկման մասնակիցներից մի քանիսը նույնպես հայտնել են իրենց մտահոգությունն և թերհավատությունը Ա.Սուքիասյանի առաջարկության վերաբերյալ, քանի որ հայտնի է, որ Աֆրիկայից շատ բարդ է որակյալ և էժան հումք արտահանել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ադամանդի շուկան շատ սուղ է և գնային առումով քիչ թե շատ կարգավորված է, որի պայմաններում առաջարկվող հումքի գնային տատանումներ և էական տարբերություններ գրեթե չեն լինում: Բացի այդ, նման առաջարկներ շատ են

-34-

լինում և հիմնականում դրանք իրականությանը չեն համապատասխանում: Այդ քննարկումից հետո Ա.Սուքիասյանի հետ ընդհանրապես չի առնչվել և տեղյակ չէ, թե նա ներկայացրել է արդյոք ադամանդի հումքը և եթե ներկայացրել է, ապա ինչ հետագա զարգացումներ են տեղի ունեցել այդ հարցի շուրջ: Տուժող Փ.Հայրապետյանին անձնապես չի ճանաչել, ուստի նրա հետ երբևէ չի հանդիպել, բնականաբար նրա հետ Ա.Սուքիասյանի առաջարկության մասին չի խոսել: Այն մասին, որ Փ.Հայրապետյանը Աֆրիկայում գտնվող հանքերում ներդրումներ կատարելու նպատակով գրավադրել է իր ունեցվածքը տեղեկացել է մանուկից (դատական նիստի արձանագրություն):

Վկա Արվի Գրիգորի Բալյանը դատարանին հայտնեց, որ 2010թվականին ընդհանուր ծանոթի միջոցով ծանոթացել է ամբաստանյալ Ա.Սուքիասյանի հետ, նրա հետ թշնամություն կամ բարեկամություն չունի: Տուժող Փ.Հայրապետյանին ճանաչում է Ա.Սուքիասյանի միջոցով, նրա հետ թշնամություն կամ բարեկամություն չունի: Ա.Սուքիասյանին ծանոթանալուց հետո, երբ վերջինս տեղեկացել է, որ ինքը մասնագիտությամբ տնտեսագետ-քաղաքագետ է և կատարյալ տիրապետում է անգլերեն լեզվին, իրեն առաջարկել է համագործակցել, օգնել և խորհուրդներ տալ Աֆրիկայից ադամանդի հումք և ոսկի

Հայաստան ներկրելու նոր ձևավորվող բիզնեսի ստեղծմանը: Ա.Սուքիասյանը պատմել է, որ Աֆրիկայի Սիերա Լեոնե Հանրապետությունում ունի ադամանդի և ոսկու հանքավայրեր, որոնք ցանկանում է արդիականացնել, ընդլայնել կատարելով մեծ գումարների չափով ներդրումներ: Իր հիշելով սկզբնական շրջանում խոսք է գնացել մոտ 12 միլիոն ԱՄՆ դոլարի չափով ներդրումների մասին, որոնք պետք է ուղղվեին առաջին հերթին հանքարդյունահանող տեխնիկայի, ինչպես նաև նոր հանքավայրերի ձեռքբերմանը: Այդ ժամանակ Ա.Սուքիասյանն իրեն ցույց է տվել լազերային սկավառակով մի տեսահոլովակ, որտեղ ցուցադրվել են հանքեր և այնտեղ աշխատող աշխատուժ: Ա.Սուքիասյանը հայտնել է, որ ցուցադրված հանքավայրերն իրեն են պատկանում և այդ հանքերի համար են պահանջվում ներդրումները:

Նկատի ունենալով, որ Ա.Սուքիասյանն իր վրա թողել է դրական, հավատացյալ մարդու և բարոյական անձի տպավորություն, իսկ ինքը տվյալ ժամանակահատվածում ծանրաբեռնված չի եղել այլ ծրագրերով, ուստի ընդունել է նրա առաջարկը և համաձայնել ժամանակ առ ժամանակ, անհրաժեշտության դեպքում օգնել նրան և խորհուրդներ տալ ֆինանսատնտեսագիտական հարցերի շուրջ խնդիրների լուծման հետ կապված, քանի որ նույնպես ցանկացել է իր գործով աջակցել Հայաստանի զարգացմանը, ուստի պայմանավորվածություն են ձեռք բերել, որ իր օգնությունը լինելու է հասարակական հիմունքներով անհատույց:

Ընթացքում պարզվել է, որ ներդրվող միջոցները պետք է տրամադրվեին վարկի տեսքով: Վարկը պետք է տրամադրվեր «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության կողմից: Կողմերի միջև եղած պայմանավորվածության համաձայն, պետք է կազմվեր բիզնես ծրագիր, որի համար Ա.Սուքիասյանը դիմել է «Ամերիա Հոլդինգ» ընկերությունների մաս կազմող «Ամերիա» ընկերությանը: Հաշվի առնելով, որ պայմանավորվածությունը 12 միլիոն ԱՄՆ դոլար վարկի շուրջ է եղել, ուստի բիզնես ծրագիրը պետք է կազմվեր հենց այդ գումարի չափով: Բիզնես ծրագրի կազմման գործով Ա.Սուքիասյանն իրեն է լիազորել: Այդ գործընթացին մասնակցել են նաև «Ամերիա» ընկերության մասնագետները: Ծրագրի կազմման համար բոլոր ելակետային տվյալներն իրեն բացառապես տրամադրել է Ա.Սուքիասյանը, ում հետ մշտապես համաձայնեցվել են բիզնես ծրագրում նախանշվող վարկային միջոցների օգտագործման ուղղությունները,

-35-

ժամկետները, Աֆրիկյան բիզնեսի հետ կապված բոլոր տվյալները և ընկերությունների վերաբերյալ տեղեկատվությունը: Ավելի ճիշտ Ա.Սուքիասյանն ուրվագծել է ուղղականները, ուղղվածությունը, ինքն էլ դրանք զետեղել է ծրագրում, որից հետո լրացուցիչ ներկայացրել է Ա.Սուքիասյանին, որն ուսումնասիրելով տվել է իր հավանությունը և համաձայնությունը: Դրանից հետո «Ամերիա» ընկերության կողմից կատարվել է վերլուծական աշխատանք և կազմվել վերջնական բիզնես ծրագիրը: «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության կողմից տրամադրվել են վարկային միջոցներ: Ըստ Ա.Սուքիասյանի գումարների մի մասը պետք է ուղարկվեր իր գործընկեր Սերգեյ Տրիկազյուկին, ով ըստ Ա.Սուքիասյանի պետք է զբաղվեր ընկերության Աֆրիկայում ծավալվող գործունեությամբ: Այսինքն, տեղում կազմակերպեր աշխատանքային գործընթացը, ստացված հումքն ուղարկեր Հայաստան, որտեղ այն պետք է վերամշակվեր և հետագայում իրացվեր: Ինքն Աշոտ Սուքիասյանին խորհուրդ է տվել, որ եթե պետք է կատարվի աշխատանքի բաժանում և գումար փոխանցվի այլ անձանց, ավելի ճիշտ կլինի կնքել համապատասխան պայմանագիր, որտեղ պետք է հստակ նախատեսվեն կողմերի իրավունքներն ու պարտականությունները:

2010թվականի հուլիսի 8-ին Ա.Սուքիասյանի հետ մեկնել են Կիպրոսի Հանրապետություն, որպեսզի գրանցեն օֆշորային ընկերություններ և միաժամանակ Ա.Սուքիասյանը հանդիպել իր գործընկերներ Սերգեյ Տրիկազյուկին և Սաշային, որի ազգանունը չի հիշել: Կիպրոսի Հանրապետությունում Սերգեյն իրենց ծանոթացրել է իր իրավաբան Մակիսի հետ, ում օգնությամբ այդ օրերին հիմնադրվել է Սերգեյ

Տրիկազյուկի և Աշոտ Սուքիասյանի «ABS GLOBAL» ընկերությունը, ինչպես նաև մինչ այդ նույնպես Մակիսի օգնությամբ գնվել է «WLISPERA HOLDINGS» ընկերությունը, որը հանդիսացավ Աշոտ Սուքիասյանի կողմից «ABS GLOBAL» ընկերության համահիմնադիրը: «WLISPERA HOLDINGS» ընկերությունը գնելուց և «ABS GLOBAL» ընկերությունը հիմնադրելուց հետո, Կիպրոսի Հանրապետության Լիմասոլ քաղաքի հյուրանոցներից մեկում ինքն ու Աշոտ Սուքիասյանը հանդիպում են ունեցել Սերգեյ Տրիկազյուկի և Սաշայի հետ բանակցելու նպատակով: Նրանք խոսել են ոուսերեն և ինքը չի հասկացել նրանց խոսակցությունը, քանի որ ոուսերեն լեզվին չի տիրապետում: Սերգեյ Տրիկազյուկը իր վրա թողել է բացասական տպավորություն, ինչի մասին ասել է Ա.Սուքիասյանին, սակայն վերջինս որևէ կերպ չի արձագանքել շարունակելով շփվել նրա հետ: Թե այդ հանդիպման ժամանակ ինչի մասին են պայմանավորվել, ինքն այդպես էլ չի իմացել, քանի որ նրանք խոսել են ռուսերեն: Հանդիպում են ունեցել նաև Կիպրոսի Հանրապետության մայրաքաղաքում Նիկոսիայում իրավաբան Մակիսի գրասենյակում, որտեղ Մակիսի կողմից պատրաստվել է համագործակցության պայմանագիր, որում նշվել են օժշորային ընկերություններն ու ընդհանուր դրույթներ համատեղ գործունեության վերաբերյալ: Ինքը Ա.Սուքիասյանին խորհուրդ է տվել, որ պայմանագրում արտացոլվեն կողմերի կոնկրետ իրավունքների և պարտավորությունների մասին դրույթներ, թե յուրաքանչյուրը կոնկրետ ինչպես, ինչ պայմաններով, ինչ պատասխանատվությամբ պետք է մասնակցի համատեղ ընկերության գործերին: Ինչպես նաև նշվեն դրույթներ, թե տվյալ ընկերությունը կոնկրետ ինչ գործունեություն պետք է ծավալի, սակայն Ա.Սուքիասյանը դրան որևէ կերպ չի արձագանքել: Չնայած որ ինքը հավանություն չի տվել Մակիսի կազմված պայմանագրին, այնուամենայնիվ Ա.Սուքիասյանը, Սերգեյ Տրիկազյուկը և Սաշան իր ներկայությամբ ստորագրել են Մակիսի կազմած պայմանագիր–համաձայնագիրը: Կոնկրետ բովանդակային առումով չի հիշում, թե ինչ է այնտեղ գրված, սակայն հիշում է,

-36-
որ այնտեղ տեղ են գտել միայն ընդհանուր դրույթներ, առանց նշվելու կողմերի որևէ պարտավորությունների կամ գումարների մասին: Հայաստան վերադառնալուց հետո ինքը խզել է Ա.Սուքիասյանի հետ հարաբերությունները, քանի որ վերջինս շարունակել է իր գործունեությունն առանց իր խորհուրդները հաշվի առնելու: Ինքը Փայլակ Հայրապետյանի հետ անմիջականորեն չի առնչվել և որևէ կապ չի ունեցել: Ա.Սուքիասյանն իրեն ասել է, որ 12 միլիոն ԱՄՆ դոլարի վարկը պետք է ստանար հենց Փ.Հայրապետյանի գույքերի գրավադրմամբ, ով իրեն այնքան է վստահում, ինչքան չի վստահում սեփական որդիներին: Այդ խոսքերն Ա.Սուքիասյանն իրեն ասել է այն բանից հետո, երբ մինչ Կիպրոսի Հանրապետություն մեկնելը զարմացել էր, թե ինչպես է, որ այդ անձը լիազորել է իրեն տնօրինելու իր ունեցած ողջ անշարժ գույքը: Ինքը պնդում է նախաքննության ընթացքում տված ցուցմունքները, քանի որ տևական ժամանակ է անցել և ներկայումս շատ մանրամասնություններ չի հիշում, իսկ այն ժամանակ հիշողություններն ավելի թարմ են եղել (դատական նիստի արձանագրություն):

Վկա Շավարշ Վաղարշակի Խալաթյանը դատարանին հայտնեց, որ աշխատում է ՀՀ ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային տեսչությունում, որպես գլխավոր մասնագետ: Իրենց կողմից «Ձորագ» արտադրական կոդերատիվում ստուգումն իրականացվել է ՀՀ ոստիկանության քննչական վարչության հատկապես կարևոր գործերով քննության վարչության պետի գրության և ՀՀ ֆինանսների նախարարի հանձնարարականի հիման վրա քննիչի կողմից առաջադրված հարցերի շրջանակներում: Ստուգումն սկսվել է 2012թ. հոկտեմբերի 8–ին և ավարտվել 2012թ. հոկտեմբերի 19–ին: Ստուգումն իրականացվել է «Ձորագյուղ» Ա/Կ–ի փաստաթղթերում սկսած 2009թվականից, իսկ քննիչի կողմից առաջադրվել են հետևյալ հարցերը 1. ընկերության գործունեության ընթացքում «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության կողմից տրամադրված վարկային միջոցների մուտքագրման և ելքագրման գործընթացներում հաշվապահական հաշվառման կարգի խախտումներ թույլ տրվել են, թե ոչ, եթե այո, ապա կոնկրետ ում կողմից և ինչ

խախտումներ են թույլ տրվել և ինչ հետևանքներ են առաջացրել. 2. «Չորագյուղ» Ա/Կ-ի կողմից ծավալած ֆինանսատնտեսական գործունեության անալիտիկ հաշվառումները տարվել են գործող իրավական ակտերին համապատասխան, թե ոչ և եթե կան չհիմնավորված ծախսեր, ապա ինչ գումարի չափով և ովքեր են պատասխանատուները. 3. «Չորագյուղ» Ա/Կ-ն թույլ տվել է արդյոք «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության հետ 25.06.2010թ. կնքված թիվ. 002506 հիմնական վարկային պայմանագրի և դրա հիման վրա հետագայում կնքված վարկային գծի բացման և վարկի տրամադրման վերաբերյալ լրացուցիչ համաձայնագրի խախտումներ և եթե այո, ապա ինչ խախտումներ:

Ստուգման արդյունքում պարզվել և հնարավոր է եղել պատասխանել նշված հարցադրումներից երկուսին, քանի որ իրենց տրամադրության տակ են եղել միայն բանկային փաստաթղթերը, որի մասին պարզաբանումն առկա է նաև իրենց կողմից կազմված ստուգման ակտում, այն է հիմնական պայմանագրի և դրանից բխող համաձայնագրերով ներկայացված է կետերը, դուրաբային և դրամային շարժերը, ամփոփ տվյալները, որը տրամադրվել է բանկի կողմից և Ա/Կ-ի գլխավոր հաշվապահը: Օգտվելով դրանցից տեղեկանքի աղյուսակի տեսքով հակիրճ ներկայացվել է Ա/Կ-ի կողմից, որ հիմնարկներին ինչ գումարներ են փոխանցվել, օգտվելով անդորրագրերում առկա տվյալներից: Աղյուսակում ամրագրված են նաև այն ընկերությունները, որոնք գումար են փոխանցել Ա/Կ-ին: Այսպես աղյուսակում նշվել է, որ քննիչի կողմից

-37-

առաջադրված այն հարցին, որ «Չորագյուղ» Ա/Կ-ի կողմից իրականացված ֆինանսատնտեսական գործընթացների ընթացքում «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված վարկի գումարների մուտքագրման և ելքագրման, օգտագործման կարգի խախտումներ թույլ տրվել են, թե ոչ, ինչպես նաև վարկի գումարների նպատակային օգտագործվել են, թե ոչ հարցին հնարավոր չէ պատասխանել, քանի որ «Չորագյուղ» Ա/Կ-ի փաստաթղթերի ոչ լիարժեք լինելու պատճառով ֆինանսատնտեսական գործունեության ստուգում չի իրականացվել: Հավելելով, որ ստուգմանը չեն տրամադրվել Ա/Կ-ի տրամադրված վարկային միջոցների շրջանակում իրականացված փոխանցումների համար կազմված անդորրագրերում կամ բանկային հաշիվներում նշված նպատակների համաձայն համապատասխան պայմանագրերը: Ստուգման ներկայացված տեղեկատվության համաձայն, «Ամերիաբանկ» ՓԲԸ -ի կողմից տրվել է տեղեկանք առ այն, որ «Չորագյուղ» Ա/Կ-ի կողմից խախտվել է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագիրը և համաձայնագրերը, սահմանված ժամկետներում չեն մարվել ստացված վարկի մայր գումարները և առաջացած տոկոսները, որի արդյունքում Ա/Կ-ի պարտավորությունը բանկի նկատմամբ 29.10.2012թ. դրությամբ կազմվել է 2.562.636 ԱՄՆ դոլար: Քննիչի հաջորդ հարցերին հնարավոր չի եղել պատասխանել, քանի որ համապատասխան փաստաթղթերը չեն ներկայացվել, իսկ ընկերություն առկա փաստաթղթերը թերի են եղել, որի մասին տեղյակ է պահվել քննիչին: Հասույթի վերաբերյալ քննիչի հարցին պատասխանվել է, որ «Չորագյուղ» Ա/Կ-ի 2009թ. շահույթը կազմել է 14.889.000 ՀՀ դրամ, 2010թ. 15.248.007 ՀՀ դրամ, 2011թ. 13.741.900 ՀՀ դրամ: Ստուգման արդյունքում 02.11.2012թ. կազմվել է համապատասխան տեղեկանք, որը ներկայացվել է նախաքննական մարմնին: Ստուգումն իրականացվել է բացառապես ունեցած փաստաթղթերի հիման վրա, որոնց մանրամասն անդորրագրծել են, իսկ փաստաթղթեր չլինելու կապակցությամբ հարցերի մեծամասնությանը հնարավորություն չեն ունեցել պատասխանել (դատական նիստի արձանագրություն):

Վկա Արմեն Արշավիրի Մելքոնյանը դատարանին հայտնեց, որ աշխատում է ՀՀ Ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային տեսչությունում, որպես գլխավոր մասնագետ: ՀՀ ոստիկանության քննչական վարչության հատկապես կարևոր գործերով քննության վարչության պետի գրության և ՀՀ Ֆինանսների նախարարի հանձնարարականի հիման վրա, քննիչի կողմից առաջադրված հարցերի

շրջանակներում իրենց կողմից իրականացվել է ստուգում: Ստուգմանը մասնակցել է նաև Շավարշ Խալաթյանը: Ստուգումն սկսվել է 2012թ. հոկտեմբերի 8-ին: Իրենց ստուգման է առաջադրվել 7 հարց, որից պատասխանել են ընդամենը երկու հարցի, իսկ մնացած հինգ հարցին հնարավոր չի եղել պատասխանել, քանի որ չեն ունեցել համապատասխան փաստաթղթեր: Իրենց տրամադրության տակ են գտնվել բանկից ստացված փաստաթղթերը, այն է հաշիվներից փոխանցված և հաշիվներին փոխանցած գումարների մասին քաղվածքները և անդորրագրերը: Հասույթի վերաբերյալ քննիչի հարցին պատասխանվել է, որ «Չորագյուղ» Ա/Կ-ի 2009թ. շահույթը կազմել է 14.889.000 ՀՀ դրամ, 2010թ. 15.248.007 ՀՀ դրամ, 2011թ. 13.709.008 ՀՀ դրամ, 2012թ. 2.741.000 ՀՀ դրամ, իսկ 2009թ. վճարած շահութահարկի տգումարը կազմել է 4.082.000 ՀՀ դրամ, 2010թ. 4.925.000 ՀՀ դրամ, 2011թ. 3.287.900 ՀՀ դրամ, իսկ 2012թ. 2.232.000 ՀՀ դրամ: Իրենք նախաքննական մարմնին տեղյակ են պահել, որ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում նոր միայն կարելի է անդրադառնալ մնացած հարցադրումներին, սակայն հանձնաժողովին այլ փաստաթղթեր չեն ներկայացվել, ուստի ստուգումն իրականացվել է բացառապես ունեցած փաստաթղթերի հիման վրա,

-38-

որոնց մանրամասն անդրադարձել են, իսկ փաստաթղթեր չլինելու կապակցությամբ հարցերի մեծամասնությանը հնարավորություն չեն ունեցել պատասխանել (դատական նիստի արձանագրություն): Վկա Վահագն Մուշեղի Օհանյանը դատարանին հայտնեց, որ աշխատում է ՀՀ Արտակարգ իրավիճակների վարչությունում, որպես ֆինանսատնտեսագիտական վարչություն պետի տեղակալ: Նախկինում աշխատել է ՀՀ Ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային տեսչությունում, որպես գլխավոր մասնագետ: Ամբաստանյալին և տուժողին չի ձանաչում: Նախկին աշխատավայրում, ստուգող խմբի կազմում մասնակցել է ՀՀ ոստիկանության քննչական վարչության հատկապես կարևոր գործերով քննության վարչության պետի գրության և ՀՀ Ֆինանսների նախարարի հանձնարարականի հիման վրա⁹ քննիչի կողմից առաջադրված հարցերի շրջանակներում իրենց կողմից «Չորագյուղ» Ա/Կ-ում իրականացված ստուգման աշխատանքներին: Ստուգման արդյունքում կազմվել է տեղեկանք, քանի որ ներկայացված փաստաթղթերը սակավ են եղել և նման պայմաններում իրենք հնարավորություն չեն ունեցել բոլոր հարցադրումներին պատասխանել, որի կապակցությամբ էլ կազմվել է տեղեկանք: Ստուգումը տևել է շուրջ 10 օր: Ներկայումս տևական ժամանակ է անցել և ինքը տեղեկանքում գրված մանրամասնությունները չի հիշում, սակայն տեղեկանքում տեղ գտած բոլոր թվերը հիմնված են եղել ներկայացված փաստաթղթերի վրա, իսկ հարցերի մեծամասնությանը չեն անդրադարձել համապատասխան հաշվապահական փաստաթղթերի բացակայության պատճառով: Ստուգմանը ներգրավված է եղել նաև «Չորագյուղ» Ա/Կ-ի գլխավոր հաշվապահը, սակայն նա նույնպես որևէ լրացուցիչ փաստաթղթեր չի ներկայացրել, որպիսին պայմաններում էլ ստուգման արդյունքում կազմվել է տեղեկանք: Ներկայումս տևական ժամանակ է անցել և ինքը մանրամասնություններ չի հիշում, սակայն իրենց ստուգմամբ ուսումնասիրվել են բանկի կողմից ներկայացված սակավաթիվ փաստաթղթերը և տեղեկանքում առկա տեղեկությունները համապատասխանում են իրականությանը: Ներկայումս ինքն այն չի հիշում և հնարավորություն չի ունեցել կրկին ծանոթանալ նշված փաստաթղթերին և վերհիշել, քանի որ ներկայումս այլ տեսչությունում է աշխատում և հնարավորություն չի ունեցել ծանոթանալ տեղեկանքին: Ստուգման հետ կապված կազմված տեղեկանքի առնչությամբ ներկայումս ավելացնելու ոչինչ չունի (դատական նիստի արձանագրություն): Վկա Գևորգ Մխիթարի Մկրտչյանը դատարանին հայտնեց, որ աշխատել է «Փորձագիտությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում, որպես փորձագետ, ներկայումս չի աշխատում: Ամբաստանյալին և տուժողին չի ձանաչում: Աշխատելու ընթացքում իր կողմից 06.03.2015թ. տրվել է թիվ. 1427-10 ֆինանսատնտեսագիտական և դատահաշվապահական եզրակացությունը: Եզրակացությունը տրվել է ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության

վարչության քննիչի որոշման հիման վրա, որով պատասխանվել է նախաքննական մարմնի կողմից առաջադրված շուրջ 25 հարցերին: Ֆինանսավարկային տեսակետից վարկի տրամադրման խախտումներ գուտ փաստաթղթային առումով, փաստացի չեն արձանագրվել: Եզրակացությամբ ինքը մանրամասնորեն անդրադարձել է բոլոր հարցադրումներին, ուղղակի ներկայումս տևական ժամանակ է անցել և ինքը մանրամասնություններ չի հիշում, սակայն հիշում է, որ վարկը տրամադրվել է հիմնական միջոցների ձեռք բերման, վարկերի մարման և ընթացիկ տնտեսական գործունեության ծավալման համար, որի տակ կարելի է ամեն ինչ հասկանալ: Դրանում ներառվում է նաև տնտեսական գործունեության ծավալումը և

-39-

համատեղ ձեռնարկություն կազմակերպելը: Եզրակացության մեջ մանրամասն նշված է վարկային միջոցների ստացումից հետո որքան գումար ուր է գնացել, սակայն ետ վերադարձված գումարները հնարավոր չէ ճշտել արդյոք դա վարկային միջոցներից տրամադրված գումարներից է, թե ոչ: Եզրակացությամբ անդրադարձել է գումարների շարժին և այնտեղ առկա է մանրամասն տեղեկատվություն դրանց մասին: Ամբաստանյալի կողմից կատարված գործարքներից եկամուտներ չունենալու պարագայում պարտավորություն ունի կամ չունի, ապա դա փորձագետի գնահատման հարց չէ, սակայն եթե հիմնավորվի, որ եկամուտ չի ստացել, ապա վճարման ենթակա չէ և հակառակը: Եզրակացությամբ անդրադարձել է միայն կատարված հարցադրումներում նշված ժամանակաշրջանին: Վարկային գործերի ստուգումը բանկային առումով կատարվում է կենտրոնական բանկի կողմից, իսկ փորձագետը նայում է ֆինանսատնտեսագիտական առումով: Վարկային պայմանագրի և բիզնես ծրագրի մեջ տարբերություններ են եղել, որոնք նույնպես արձանագրվել են: Վարկային գումարները նպակային են ծախսվել, թե ոչ, ապա այդ հարցին չի կարող պատասխանել, քանի որ բանկային շարժը ուսումնասիրելը դա կենտրոնական բանկի իրավասությունն է: ՀՀ վերադարձած 6.000.000 ԱՄՆ դոլար գումարով գնվել է ոսկի, վարկերի տոկոսներ է մարվել: 9.000.000 ԱՄՆ դոլար գումարի սարքավորումներ ձեռք չի բերվել, քանի որ առկա փաստաթղթերով նման հանգամանք չի հիմնավորվել: Վարկային գումարների շարժը տարանջատել հնարավոր չէ, քանի որ հնարավոր է մուտքագրված գումարները լինեն ելքագրված գումարները կամ իրոք այլ գումարներ (դատական միստի արձանագրություն):

Վկա Ջառա Աշոտի Ալեքսանյանը դատարանին հայտնեց, որ աշխատում է ՀՀ Կենտրոնական բանկում, որպես վերահսկող: Ամբաստանյալին և տուժողին չի ճանաչում, նրանց հետ թշնամություն և բարեկամություն չունի: ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ վարչության քննիչի որոշման հիման վրա «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում 2015թվականին իրականացվել է նպատակային ստուգում, որի վերաբերյալ տրվել է հաշվետվություն: Ստուգման ժամանակահատվածը եղել է 2014թ. դեկտեմբերի 10-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 29-ը և հաշվետվության շրջանակներում պատասխանվել է առաջադրված երեք հարցերին, սակայն իրենց կողմից կատարվել է հարցերի խմբավորում և տրվել երկու պատասխան: Առաջին հարցը, այն է արդյոք վարկը տրամադրվել է օրենքի և ներքին կանոնակարգի սահմաններում: Հարցին պատասխանելու համար իրենց կողմից «Ամերիաբանկ» ՓԲԸ-ից պահանջվել ուսումնասիրվել են բոլոր փաստաթղթերը և հարցին տրվել է պատասխան, քանի որ եկել էզրահանգման, որ վարկի տրամադրման օրենսդրական և կանոնակարգային խախտումներ թույլ չեն տրվել: Նշված վարկի տրամադրման նպատակը եղել է շրջանառու միջոցների, հիմնական միջոցների համալրում, կրեդիտորական պարտքերի մարում, ֆինանսատնտեսական գործունեության իրականացում: Իրենց կողմից ուսումնասիրվել են մի քանի փաթեթ փաստաթղթեր, այն է բիզնես ծրագիրը, բանկի կողմից իրականացված մոնիթորինգները, վարկը տրամադրվել է մասնաբաժիններով և ամեն մասնաբաժին տրվելիս կազմվել է վարկային եզրակացություն: Այդ բոլոր փաստաթղթերը ուսումնասիրվել են իրենց կողմից, որոնց վրա հիմնվելով իրենց կողմից մարմանն ներկայացվել է հաշիվների շարժը, այն է յուրաքանչյուր

գումարները տրամադրվելուց հետո նշված գումարներն ինչպես են օգտագործվել: Բացի այդ, ուսումնասիրվել է վարկային մասնագետների և այն աշխատակիցները հաշվետվությունները, որոնք իրականացրել են հսկողություն նշված գումարների

-40-

նկատմամբ: Բանկի կարծիքով, որը հիմնված է մոնիթորինգի արդյունքների վրա, նշված վարկը օգտագործվել է նպատակային: Ընկերությանը տրամադրվել է 10.700.000 ԱՄՆ դոլար վարկ, որից 2.000.000 ԱՄՆ դոլար գումարը փոխանցվել է «Թս Թի Ար Էսմերալդ ԷլԹիԴի»-ի հաշվին, որը կազմում է վարկի շուրջ 18.8 տոկոսը, 4.000.000 ԱՄՆ դոլարը փոխանցվել է «ԱԲՍ Գլոբալ ԼԹԻԴի» ընկերությանը, որը կազմում է վարկի շուրջ 41 տոկոսը, կանխսկիզբվել է 1.700.000 ԱՄՆ դոլար, որը կազմում է վարկի շուրջ 16.5 տոկոսը, 1.600.000 ԱՄՆ դոլարով գնվել է ոսկի, որը կազմում է վարկի շուրջ 15 տոկոսը, մնացածը բաղկացած են ավելի մանր գումարներին, այն է 381.000 ԱՄՆ դոլար գումարը փոխանցվել է «Ակվամարին Լայթ» ընկերության հաշվին շինարարության նպատակով, 350.000 ԱՄՆ դոլար փոխանցվել է «Վիլսպերա հոլդինգլիմիթեդին» 87.000 ԱՄՆ դոլար ուղղվել է բանկում վարկի և տոկոսների մարմանը: Կանխկացված գումարի նպատակային օգտագործումը հիմնավորում է բանկը, քանի որ կանխկացման դեպքում ներկայացվում են փաստաթղթեր կանխկացման նպատակը, իսկ պայմանագրում նշվել է նման կետ, ուստի բանկը գտել է նպատակային: Իրենց իրավասության շրջանակներում իրենք իրականացրել են ստուգում և հանգել եզրակացության, որ խախտումներ չեն եղել: Վարկի շարժի ուսումնասիրությունից պարզվել է, որ բանկի հաշվին եղել են նաև մուտքագրված գումարներ, որոնք խառնվել են վարկի գումարներին և բանկը ավելի ծավալուն տեղեկատվություն կարող է տրամադրել այդ կապակցությամբ, ուստի իրենք հիմք են ընդունել բանկի աշխատակիցների իրականացված մոնիթորինգների արդյունքները (դատական նիստի արձանագրություն):

Վկա Պավել Հրաչիկի Հովակիմյանը դատարանին հայտնեց, որ աշխատում է «ԱզբաԿրեդիտԱզրիկոլԲանկ»-ում, որպես ներքին աուդիտի մասնագետ: Նախկինում աշխատել է ՀՀ Կենտրոնական բանկում և ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ վարչության քննիչի որոշման հիման վրա, «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում 2015թվականին իրականացվել է նպատակային ստուգում, որի վերաբերյալ տրվել է հաշվետվություն: Ստուգման ժամանակահատվածը եղել է 2014թ. դեկտեմբերի 10-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 29-ը և հաշվետվության շրջանակներում պատասխանվել է առաջադրված հետևյալ հարցադրումներին, այն է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի և «Ձորագյուղ» Ա/Կ-ի միջև 25.07.2010թ. կնքված թիվ. 002506 վարկային պայմանագիրը և դրա հիման վրա կնքված համաձայնագրերը համապատասխանում են արդյոք գործող օրենսդրությանը և ներքին կանոնակարգով կիրառվող պահանջներին, թե ոչ: Արդյոք վարկի տրամադրումն իրականացվել է ՀՀ օրենսդրության և բանկի կանոնակարգով սահմանված պահանջների պահպանմամբ, թե ոչ և արդյոք տրամադրված վարկային միջոցները ծախսվել են ըստ նշանակության, թե ոչ: Հարցերը խմբագրվել և պատասխանվել է, սակայն առաջին և երկրորդ հարցերն իրենց էությամբ կրում են նույն բովանդակությունը, ուստի դրանց տրվել է մեկ պատասխան: Վարկի տրամադրման գործընթացն իրականացվել է գործող օրենսդրության և կանոնակարգի համաձայն: Վարկը տրամադրվել է մասնաբաժիններով և հաստատվել է համապատասխան հանձնաժողովի կողմից: Վարկի և վարկառուի միջև կնքված պայմանագրի համաձայն տրամադրվել է 10.700.000 ԱՄՆ դոլար վարկ, որից 2.000.000 ԱՄՆ դոլար գումարը փոխանցվել է «ԹսԹիԱր Էսմերալդ ԷլԹիԴի»-ի հաշվին, 4.000.000 ԱՄՆ դոլարը փոխանցվել է «ԱԲՍ Գլոբալ ԼԹԻԴի» ընկերությանը, կանխկացվել է 1.700.000 ԱՄՆ դոլար, 1.600.000 ԱՄՆ դոլարով գնվել է ոսկի, 381.000 ԱՄՆ դոլար գումարը փոխանցվել է «Ակվամարին Լայթ» ընկերության հաշվին, 350.000 ԱՄՆ դոլար փոխանցվել է

-41-

«Վիլսպերա հոլդինգլիմիթեդին», 87.000 ԱՄՆ դոլար ուղղվել է բանկում վարկի և տոկոսների մարմանը: Կանխկացված գումարի նպատակային

օգտագործումը հիմնավորվել է բանկի աշխատակիցների կողմից իրականացված մոնիթորինգների արդյունքում կազմված փաստաթղթերով, որոնց համաձայն վարկի օգտագործումը եղել է նպատակային: Իրենց իրավասության շրջանակներում իրենք իրականացրել են ստուգում, ստուգել բանկում առկա փաստաթղթերը, վարկի տրամադրման պայմանները, կոմիտեի կանոնակարգերը, հաստատված վարկավորման ընթացակարգը, վարկային քաղաքականությունը, մոնիտորինգի իրականացման հրահանգը, գրավի գնահատման և վերագրացման հրահանգը, գրավների գնահատման հաշվետվությունները և ուշադրություն դարձվել փաստաթղթերի որակուններին, ապա հանգել եզրակացության, որ խախտումներ թույլ չեն տրվել: Ստուգման ժամանակ կարող է հիմք ընդունվել միայն կազմված փաստաթղթերը, կազմված փաստաթղթերը վարկային վերլուծության եզրակացությունները, ներկայացվում են վարկային կոմիտեին, որն արդեն որոշում է հետագան, որտեղ կարող են որոշել օրինակ վարկը կրճատել կես չափով կամ այլն: Այդ որոշումից հետո կազմվում է վարկային պայմանագիր, որտեղ վարկառու համաձայնվում է բանկի առաջադրված պայմաններին, ապա կնքվում է պայմանագիր կամ հավառակը: Տվյալ պայմաններում, բանկը ելնելով իր ռիսկերից ֆիքսել է այն որպես ընդհանուր նպատակային, ուստի նման նպատակի շրջանակներում վարկը ծախսվել է նպատակային, սակայն ինչու է բանկը այդպես ֆիքսել, ապա դա իր որոշելու խնդիրը չէ: Իրենց կողմից վարկային գումարների տրամադրումը նույնպես դիտվել է նպատակային: Իր կողմից թվարկված բոլոր գործողություններն իրականացվել է բանկում և բանկը տեսել է, թե որ գումարը ուր է փոխանցվել և ինչ նպատակով, ապա գործունեությունն իրավացիորեն դիտել է նպատակային, քանի որ ընտրված «ընդհանուր» նպատակի տակ կարելի է շատ բան հասկանալ, որպիսին պայմաններում վարկի օգտագործումն իրավացիորեն դիտվում է նպատակային: Ստուգման արդյունքում պարզվել է, որ 87.000 ԱՄՆ դոլար գումար ուղղվել է վարկի տոկոսների և գումարների մարմանը, այլ մարումներից ինքը տեղյակ չէ, քանի որ քննիչի կողմից նման հարցադրումներ չի եղել: Վարկի նպատակը նշված է վարկային պայմանագրում, այլ որևէ փաստաթղթով նպատակ չի նշվում և չի կարող փոխվել, ընդամենը բանկը կարող է վարկը հետ պահանջել (դատական նիստի արձանագրություն): Վկա Գագիկ Շահենի Սահակյանը դատարանին հայտնեց, որ աշխատում է «Ամերիաբանկ» ՓԲԸ–ում, որպես կորպորատիվ հաճախորդների գծով տնօրեն: Ամբաստանյալ Ա.Սուքիասյանին ճանաչել է գործի բերումով, որպես Երևան քաղաքի գործարարներից մեկը, նրա հետ թշնամություն կամ բարեկամություն չունի: Տուժող Փ.Հայրապետյանին նույնպես ճանաչում է, նրա հետ թշնամություն կամ բարեկամություն չունի: Կորպորատիվ հաճախորդները, դա հիմնականում իրավաբանական անձինք են և իր պարտականությունների մեջ է մտնում իրավաբանական անձանց հետ կապված ամեն ինչ, այդ թվում վարկավորում, սպասարկում և այլն: Տվյալ պարագայում ամբաստանյալի ընկերությանը տրվել է 12.000.000 ԱՄՆ դոլար վարկ: Վարկը տրամադրվում է հետևյալ կերպ, նախ իրավաբանական անձը ներկայանալով բանկ և վարկ ստանալու խնդրանքով բանավոր դիմելով վարկային մասնագետին, վերջինիս կողմից նրան է ներկայացվում գրավոր հայտ, որը լրացվում է: Դրա հիման վրա բանկի համապատասխան ստորաբաժանումը կատարում է հայտի համապարփակ ուսումնասիրություն, այնուհետև հաճախորդի հետ

-42-
ունենում գրույց հարց ու պատասխան, որից հետո նախապատրաստում է եզրակացություն և այն տրամադրում վարկային կոմիտեին: Վարկային կոմիտեի անդամները քննարկում են այդ եզրակացությունները և կայացնում որոշում, այն է կամ մերժում են կամ հաստատում են, կամ էլ որոշակի փոփոխություններով են հաստատում վարկը: Փոփոխությունները կարող են լինել տարբեր, մասնավորապես կարող են պահանջվող գումարի չափը նվազեցնել, տրման ժամկետը կրճատել կամ երկարացնել և այլն: Վարկային կոմիտեի կողմից հաստատվելուց հետո, սկսվում է մյուս գործընթացները պայմանագիր կնքել, վարկ տրամադրելը և այլն: Վարկի տրամադրման համար բիզնես ծրագիր չի պահանջվում, այն ներկայացվում է հաճախորդի ցանկությամբ, սակայն դա որևիցե կերպ

բանկի կողմից հաշվի չի առնվում: Վարկային գործընթացը ամբողջությամբ համապատասխանում է վարկային պայմանագրին, ուստի վիճահարույց չի կարող լինել: Ինչ վերաբերվում է վարկի մարման ժամկետների խախտմանը, ապա այդ պատճառով էլ բանկը վարկի մնացորդ գումարը չի տրամադրել և ինչքանով որ հիշում է, դա եղել է 2011թվականի հուլիս ամսին: Տոկոսադրույքի փոփոխումը պայմանավորված է եղել «Ձորագյուղ» Ա/Կ-ի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հետ, որի մասին կա համապատասխան նշում վարկային պայմանագրում, ուստի նման մոտեցումը պայմանավորված է եղել վարկային պայմանագրի հիման վրա: Վարկի տրամադրման նպատակը եղել է Աֆրիկայի Սիերա Լեոնեյի Հանրապետությունում ոսկու և ադամանդի հանքերի արդիականացման, աշխատատեղեր բացելու և այլ: Տվյալ պարագայում բանկը չի կարող այցելել և տեղում ճշտել ներկայացված ծրագիրը, ուստի ղեկավարվում է ներկայացված փաստաթղթերով: Բանկը գտնելով, որ դա ռիսկային ծրագիր է, ուստի պահանջում է շատ ավելի մեծ գրավային ապահովում և բարձր տոկոսադրույք: Այդ ամենը քննարկվում է հաճախորդի հետ, պատշաճ քննարկում, տեղեկացում, նոր միայն կազմվում է հետագա գործընթացները: Հաճախորդները քաջատեղյակ են բոլոր պայմաններից: Առաջին փուլում դրամական միջոցների տրամադրումից հետո, պարտադիր չէ ստուգել վարկի գումարների նպատակայնությունը, այլ առաջին փուլից հետո, երկրորդ փուլից առաջ հաճախորդի կողմից ներկայացվում է պայմանագիր, ուր և ինչի համար է գումար ուղարկվում: Ի սկզբանե տեղյակ են եղել, որ Աֆրիկայի Սիերա Լեոնե Հանրապետություն չեն ուղարկելու, քանի որ այնտեղ բանկային համակարգը զարգացած չէ, այլ փոխանցելու են երրորդ երկրներ: Անձամբ ձայնողման պատճառից տեղյակ չէ: Վարկը տրամադրելուց հետո, Փ.Հայրապետյանն իր մոտ է եղել բազմաթիվ հարցերով, թե վարկի մարման, թե գույքերի իրացման և շատ այլ հարցերով: Բանկում բիզնես ծրագիր չի կազմվել, սակայն առկա են վճարման փաստաթղթեր, որոնց համաձայն բիզնես ծրագիրը կազմվել է «Ամերիա» ընկերության կողմից և նշված բիզնես ծրագիրը վարկավորման հիմք չի հանդիսացել: Իրենք վարկային միջոցները փոխանցել են վարկառուի կողմից ներկայացված ընկերությունների հաշվեհամարներին, սակայն իրենք իրավասու չեն և հնարավորություն էլ չունեն ճշտել նշված ընկերություններն ում են պատկանում և նոր փոխանցում կատարեն: Շենք շինություններում առկա գույքերի մասով, դրանք ձեռք բերողները դիմել են Փ.Հայրապետյանին, որպեսզի նա գա և վերցնի իր գույքերը, սակայն վերջինս որևէ գործողություններ չի կատարել (դատական նիստի արձանագրություն):

Վկա Սերգեյ Ներսեսի Պետրոսյանը դատարանին հայտնեց, որ աշխատում է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ում, որպես խոշոր բիզնեսի վարկավորման բաժնի ղեկավար: Նախկինում աշխատել է նույն բաժնում, որպես մասնագետ: Որպես մասնագետ

-43-

աշխատելիս իր պարտականությունն է եղել վարկային հայտի ուսումնասիրություն, եզրակացության պատրաստում, ներկայացում վարկային կոմիտե, այնուհետև ձևակերպման գործընթացի կազմակերպում: Ամբաստանյալ Ա.Սուքիասյանը դիմել է 12.000.000 ԱՄՆ դոլար երկարաժամկետ վարկավորման խնդրանքով, որը հաստատվել է: Վարկային պայմանագրի համաձայն սկզբից փոխանցվել է որքանով հիշում է 1.000.000 ԱՄՆ դոլար, սակայն ներկայումս տևական ժամանակ է անցել և կոնկրետ չափերը չի հիշում: Վարկավորման համար բիզնես ծրագիր չի պահանջնվում, այն ներկայացվում է հաճախորդի կամոք: Կոնկրետ գործով բիզնես ծրագիր ներկայացվել է, սակայն դա կրել է տեխնիկական բնույթ: Իր կողմից ուսումնասիրվել է գործը, որի համաձայն վարկը պահանջվել է ադամանդի հանքերի շահագործման համար, ապա հայտն իր կողմից ներկայացվել է կոմիտե, որն էլ հաստատել է վարկավորման խնդրանքը: Ներկայումս բովանդակությունը կոնկրետ չի հիշում, սակայն հաշվի է առնվել, այն որ «Ձորագյուղ» արտադրական կոոպերատիվը եղել է գործող ընկերություն, ունեցել է դրական վարկային պատմություն: Վարկը հաստատելիս հաշվի է առնվել վարկավորման բարձր ռիսկայնությունը, որի կապակցությամբ կոմիտեի կողմից

պահանջվել է վարկի գրավի բարձր հարաբերակցություն և բարձր տոկոսադրույք: Կոմիտեի կողմից որոշումը կայացվելուց հետո, այդ մասին տեղյակ է պահվել հաճախորդին և վերջինիս կողմից հաստատված պայմաններում վարկի տրամադրումն ընդունելի լինելու պարագայում, կազմվել է պայմանագիր: Հաճախորդի հետ կապն անընդհատ պահպանվում է և նրա հետ քննարկվում բոլոր հարցերը: Վարկային գումարները տրամադրվել են վարկային պայմանագրի համաձայն, այլ ոչ թե բիզնես ծրագրով, ուստի պարտադիր պայմանով գումարներ բաց թողնելու խնդիր չի եղել: Եզրակացությունում տեղ գտած փաստերը հիմնված են ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա: Բիզնես ծրագիրը պարտադիր չէ, Հայաստանի Հանրապետության որևէ բանկում բիզնես ծրագիրը պարտադիր չէ, ոչ ինքը և ոչ էլ մեկ այլ աշխատակից վարկառուին բիզնես ծրագիր չի պարտադրել: Բանկի կողմից կատարվել է ստանձնած բոլոր պարտականությունները, սակայն մյուս ընկերությունների կամ անձանց կողմից նվարկի գումարները նպատակային են ծախսվել, թե ոչ, ինք որևէ գնահատական չի կարող տալ և եթե նպատակային ծախսված լիներ, ապա դատարան չէր հրավիրվի (դատական նիստի արձանագրություն):

Վկա Գևորգ Արամայիսի Մաչանյանը դատարանին հայտնեց, որ աշխատում է «Արմավիսբանկ» ՓԲԸ–ում, որպես գործադիր տնօրեն–վարչության նախագահ: Ամբաստանյալ Ա.Սուքիասյանին և տուժող Փ.Հայրապետյանին ճանաչում է որպես գործարարների, նրանց հետ թշնամություն կամ բարեկամություն չունի: Վերջիններիս տեսել է ՀՀ ֆինանսների նախարարությունում կազմակերպված ժողովի ընթացքում: Ներկայումս անցել է շուրջ 7 տարի և հիշողությունները թարմ չեն, քանի որ իր համար նման հանդիպումները կրում են սովորական գործնական բնույթ: ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունում տեղի ունեցած քննարկումներին մասնակցել են գործարարներ, իսկ իրեն հրավիրել են որպես բանկային համակարգի մասնագետ, ով ունի շուրջ 30 տարվա աշխատանքային փորձ: Ինքն այդ ժողովին մասնակցել է նաև այն պատճառով, որ այդ ժամանակահատվածում իրենց բանկն հետաքրքրություն է ունեցել ոսկու և ադամանդների ներմուծմամբ զբաղվող անձանց ներգրավելու համար: Ներկայումս էլ իրենք նման հանդիպումներ են կազմակերպում և առաջարկում բանկում եղած պրոդուկտները: Դա իրենց բանկի աշխատելատեղն է: Նախարարությունում քննարկվում էր Ռուսաստանի Ղաշնության առաջարկությունը ադամանդագործության ոլորտը

-44-

վարկավորելու համար: Ներկայումս լավ չի հիշում, թե կոնկրետ այդ հանդիպման ժամանակ ինչ հարց է քննարկվել, ինչքանով հիշում է, գործարարները հայտնում էին, որ ռուսները հիմնականում վատ որակի քարերն են տալիս վարկավորման անվան տակ և եթե լինի այլ հումք, ապա այն ձեռք բերելն ավելի արդիական է: Հրավիրվածներին բոլորին ներկայացվել է իրենց բանկի հնարավորությունները, որի շրջանակներում քննարկվել են առաջարկները, սակայն այդ ժամանակահատվածում իրենց բանկի հնարավորությունները շատ փոքր են եղել և 1.000.000 ԱՄՆ դոլար գումարից ավել վարկեր չեն տրամադրել: Ներկայումս իրենց բանկը շատ զգույշ քաղաքականություն է վարում և խոշոր վարկեր չի տրամադրում: Բանկի կողմից հրավիրված քննարկմանը ամբաստանյալը և տուժողն իր հիշելով մասնակցել են, սակայն վարկավորման հարցով դիմել են, թե ոչ չի հիշում: Հնարավոր է, որ հարցը քննարկված լինի, սակայն ոչ ավելի, քանի որ իրենց բանկը մեծ գումարների վարկ չի տրամադրել: Ամբաստանյալն իրենց բանկի հաճախորդ չի եղել: Վերջիններիս ընդունելու համար որևէ մեկն իրեն չի միջնորդել և եթե նրանք գրուցել են իր հետ, ապա դա եղել է իրենց նախաձեռնությամբ, սակայն այդ խոսակցությունն այդ կարգավիճակից ավելի չի անցել: Ոսկի վաճառելու դեպքում պարտադիր տեղյակ է պահվում ՀՀ Կենտրոնական բանկին, եթե Ա.Սուքիասյանին վաճառել են, ապա անշուշտ այդ մասին տեղյակ է պահվել ՀՀ Կենտրոնական բանկին (դատական նիստի արձանագրություն):

Վկա Արտակ Հենրիկի Հանեսյանը դատարանին հայտնեց, որ աշխատում է «Ամերիաբանկ» ՓԲԸ–ում, որպես գլխավոր տնօրեն: 2010թ. իրենց բանկ է դիմել ամբաստանյալ Ա.Սուքիասյանը, որի ներկայացված հայտը բանկի

վարկային համապատասխան ստորաբաժանման կողմից համապատասխան ուսումնասիրության է ենթարկվել և գնահատելով վարկունակության ռիսկը դրական եզրակացություն է ներկայացրել վարկային կոմիտե: Վարկային կոմիտեն ուսումնասիրել է եզրակացությունը և դրական որոշում կայացրել, սակայն վարկը հաստատել է փուլերով, որից հետո կազմվել է վարկային պայմանագիրը և տրամադրվել վարկը, որի նպատակը եղել է ընդհանուր դեբիտորական հիմունքներով: Պայմանագրի համաձայն, որոշակի ժամանակի ընթացքում մի քանի փուլերով վարկը տրամադրվել և օգտագործվել է: Վերջին փուլի տրամադրման ժամանակ, վարկի առաջին փուլը եղել է ժամկետանց, որի պատճառով էլ բանկը վերջին փուլը շուրջ 1.000.000 ԱՄՆ դոլարի չափով գումար վարկ չի տրամադրել: Ղրանից հետո, նախաձեռնվել է վարկի հետ կանչման գործընթաց, որից հետո էլ համաձայն պայմանագրի, բարձրացվել է վարկի տոկոսադրույքը, այնուհետև սկսվել վարկի հետ կանչման դատական գործընթացը: Մինչ այս պահը, առկա է շուրջ 2.2 միլիարդ ՀՀ դրամի չվերադարձված վարկ, սակայն կան բանկի տրամադրության տակ անցած գույքեր, որոնց իրացման գործընթացները ընթացքի մեջ են: Վարկային միջոցների վերջին փուլը չտրամադրելու կապակցությամբ բանկ է այցելել Ա.Սուքիասյանը և ինքն անձամբ է խոսել նրա հետ և բացատրել, որ ժամկետանց վարկի պատճառով վերջին փուլը չի տրամադրվելու: Նշված իրավիճակներից խուսափելու համար վարկային պայմանագրում առկա են համապատասխան կետեր, որոնք կարգավորում են նշված իրավիճակները: Ինքը անձամբ հանդիպել է նաև տուժող Փ.Հայրապետյանի հետ, ով ասել է, որ իրեն խաբել են և հետ է պահանջել իր գույքը, սակայն ներկայումս այդ խոսակցությունների մանրամասնությունները չի հիշում: Բանկը բիզնես ծրագիր չի կազմում, իսկ «Ամերիա» ընկերությունը բանկի դուստր ձեռնարկություն չի հանդիսանում և բանկի հետ որևէ կապ չունի, ավելին բիզնես ծրագիրը պարտադիր չէ և վարկի տրամադրման հիմք չի կարող հանդիսանալ:

-45-

Հայաստանի Հանրապետության նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանին ճանաչում է, սակայն նշված վարկի շրջանակներում նա իրեն երբևէ չի գանգահարել, չի գրուցել և որևէ միջամտություն չի կատարել (դատական նիստի արձանագրություն):

Վկա Իննա Ռադիկի Սուքիասյանը դատարանին հայտնեց, որ ամբաստանյալ Ա.Սուքիասյանը հանդիսանում է իր ազգականը: Ներկայումս չի աշխատում, սակայն նախկինում աշխատել է Ա.Սուքիասյանին պատկանող «Ձորագյուղ» ԱԿ-ում, որպես հաշվապահ: Իր պարտականությունների մեջ է եղել արտադրական կոոպերատիվի գործունեության հաշվապահական ձևակերպումները և հաշվետվություններ տալը: Ինչ վերաբերվում է վարկին, ապա այն ստացվել է ծախսվել է ըստ նպատակների: Վարկն ուղղվել է կրեդիտորական վարկերի մարման և Աֆրիկայում գործունեություն ծավալելու համար: Աֆրիկայում պետք է հանքեր ձեռք բերեին, ադամանդի հումք ներմուծեին, մշակեին և այլն: Կոոպերատիվն իրականացրել է ոսկյա զարդերի արտադրություն: Ստուգում իրականացրած հանձնաժողովին փաստաթղթեր չտրամադրելու վերաբերյալ ոչինչ չի կարող ասել, քանի որ ստուգմանն ինքը ներկա չի եղել: Գումարները կանխիկացվել է գործերի համար, ապա մուտքագրվել է դրամարկը և ծախսվել է նպատակային: Ինչ վերաբերվում է նախաքննության ընթացքում տված ցուցմունքին առ այն, որ կոոպերատիվը դրամարկ չի ունեցել, ինքն ուղղակի իր միտքը ձիշտ չէ ձևակերպել, այլ նկատի է ունեցել, որ դրամարկը գտնվել է Ա.Սուքիասյանի մոտ, իսկ հաշվապահությունում գումար չի եղել: Հաշվետվություններում արտացոլվել են կոոպերատիվի այն տվյալները, որը ներկայացվել է Ա.Սուքիասյանի կողմից ներկայացված փաստաթղթերով: Ինքը բիզնես ծրագրերով չի զբաղվում և տեղյակ չէ նշված ծրագրից: Վարկի գումարները փոխանցվել են բիզնես ծրագրի շրջանակներում, տեխնիկա գնելու և այլ նպատակներով: Ողջ գումարները փոխանցվել է Կիպրոս, սակայն մանրամասնություններից տեղյակ չէ: Փ.Հայրապետյանը միշտ այցելել է իրենց գրասենյակ, սակայն մեկ անգամ է փաստաթուղթ պահանջել և ինքը դրանք տրամադրել է նրան

(դատական նիստի արձանագրություն):

Վկա Վարդան Հարությունի Անդրեասյանը դատարանին հայտնեց, որ աշխատում է «Արևակն» ՍՊԸ-ում, որպես տնօրեն: Ամբաստանյալ Ա.Սուքիասյանին և տուժող Փ.Հայրապետյանին ճանաչում է հեռակա^a դեպքերի լուսաբանումներով, նրանց հետ թշնամություն կամ բարեկամություն չունի: Իրենց ընկերությունը զբաղվում է ադամանդագործությամբ և զբաղեցնում առաջատար դիրքեր: Ամբաստանյալ Ա.Սուքիասյանին հիշում է նաև ՀՀ ֆինանսների նախարարությունում կազմակերպած ժողովից, որտեղ հրավիրված է եղել նաև ինքը: Նմանատիպ ժողովներից առաջ ինչպես իրեն, այնպես էլ ադամանդագործության ոլորտի մյուս գործարարներին զանգահարում է վարչության պետը և հրավիրում իրենց ոլորտի վերաբերյալ կայանալիք ժողովներին, քննարկումներին: Ներկայումս տևական ժամանակ է անցել, որքանով հիշում է շուրջ 7 տարի առաջ իրեն զանգահարել, հրավիրել են ժողովի և ցանկություն ունենալով մասնակցել է դրան: Հիշում է, որ ժողովին մասնակցել է Ա.Սուքիասյանը, ով առաջարկել է ավելի մատչելի գներով Աֆրիկյան Սիերա Լեոնե Հանրապետությունից ադամանդի հումք ներմուծել, իսկ ժողովի վերջում հրավիրել է իր գրասենյակ, որպեսզի ավելի առարկայական ծանոթանան հումքին: Այդ կապակցությամբ, ինքը, մի քանի գործարարների հետ միասին այցելել է նրա գրասենյակ, որտեղ ծանոթացել է ներկայացված հումքին, որը ոչ որակական, ոչ էլ գնային առումով չի հետաքրքրել իրեն, այդքանով սահմանափակվել է իր առնչությունը: Նշված ժողովին մասնակցել է նախարարը և շուրջ 25–ից 30–ն անձ ոլորտի առաջատար ձեռնարկություններից:

-46-

Ներկայումս տևական ժամանակ է անցել և ինքն ավելի մանրամասնություններ չի հիշում, սակայն դրանից հետո, թե ամբաստանյալի, թե տուժողի հետ որևէ առնչություն չի ունեցել: Ներկայումս չի հիշում ժողովի ժամանակ ամբաստանյալ Ա.Սուքիասյանը հանքերի պատկանելիության վերաբերյալ փաստաթղթեր ներկայացրել է, թե ոչ: Նախարարության ժողովին մասնակցել են 6–ից 7 մամուլի ներկայացուցիչներ և տեղյակ չէ ժողովն արձանագրվել է, թե ոչ, քանի որ ժողովի ավարտից անմիջապես հետո գնացել է աշխատավայր: Ժողովի ժամանակ նախարարը ամբաստանյալ Ա.Սուքիասյանին ներկայացրել է հանքի սեփականատեր, իսկ ներկայացնելը պայմանավորված է եղել ադամանդի հումքի այլընտրանքային հնարավորությամբ: Ա.Սուքիասյանի գրասենյակ է այցելել որդու Գոռի հետ և այնտեղ գտնվելու ժամանակ, այլ անձինք չեն եղել, ինքը հումքը ուսումնասիրել և հեռացել են: Վերջինս կոնկրետ չի ասել, որ դա իր սեփական հանքերի հումքն է, սակայն իր մոտ նման տպավորություն է ստեղծվել (դատական նիստի արձանագրություն): Վկա Կամո Սեդրակի Դալլաքյանը դատարանին հայտնեց, որ աշխատում է «Ազատես» ՍՊԸ-ում, որպես տնօրեն: Իրենց ընկերությունը հիմնադրված է 2001թվականից, գործունեություն է ծավալում ադամանդագործության ոլորտում և զբաղեցնում ոլորտի առաջատար դիրքերը: Ամբաստանյալ Ա.Սուքիասյանին ճանաչում է որպես իրենց բնագավառի գործարարի, նրա հետ թշնամություն կամ բարեկամություն չունի: Տուժող Փ.Հայրապետյանին ճանաչել է ՀՀ ֆինանսների նախարարությունում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ, նրան մինչ այդ չի ճանաչել, նրա հետ թշնամություն կամ բարեկամություն չունի: Ինքը նախարարության աշխատակցի հրավերով մասնակցել է ՀՀ ֆինանսների նախարարությունում կազմակերպված իրենց ոլորտի հետ կապված խորհրդակցությանը: Նման խորհրդակցությունների մասնակցության հրավերքներ ինքը հաճախակի է ստանում: Ներկայումս տևական ժամանակ է անցել և ինքը մանրամասնություններ չի հիշում, սակայն հիշում է, որ այնտեղ բարձրաձայնվել է, որ Աֆրիկայում ադամանդի հանք է գնվել և հնարավորություն կա ավելի մատչելի գներով հումք ձեռք բերել: Ժողովից հետո ինչպես իրեն, այնպես էլ մնացած ներկաներին հրավիրել են Սևան ճաշկերույթի: Ինքը մասնակցել է կազմակերպված ճաշկերույթին, որին ներկա է եղել նաև նախարարության վարչության պետ Գագիկ Քոչարյանը, ամբաստանյալ Ա.Սուքիասյանը և էլի մի շարք անձինք: Այնտեղ պայմանավորվել են հանդիպել Ա.Սուքիասյանի գրասենյակում և ուսումնասիրել Աֆրիկայից բերված

ադամանդի հումքը: Դրանից մի քանի օր անց, այցելել է նրա գրասենյակ և ուսումնասիրել ադամանդի հումքը, սակայն զննի և որակի համադրությունն իրեն ձեռնտու չի եղել և ինքն այդքանով սահմանափակվել է: Ներկայումս չի հիշում, թե ով է հայտարարել, որ հանքերը Ա.Սուքիասյանին են պատկանում: Վերջինս գրասենյակում անձամբ ցույց է տվել նաև Աֆրիկայում գտնվող հանքերի տեսածայնագրությունը: Բացի այդ, ինքը գնացել է «Արմավիսբանկ», սակայն ուշացումով է այնտեղ հասել, քանի որ իրեն սխալ ժամ են ասած եղել: Երբ հասել է բանկ, ապա խորհրդակցությունը սկսված է եղել և այնտեղ քննարկվել է արտահանումների հետ կապված բանկի կողմից որպես միջնորդ հանդիսանալու հարցը (դատական նիստի արձանագրություն): Դատարանի կողմից հետազոտվեց ֆինանսատնտեսագիտական և դատահաշվապահական համալիր փորձաքննության 06.03.2015թ. թիվ. 14–2710 եզրակացությունն այն մասին, որ «Ձորագյուղ» Ա/Կ–ի և «Ամերիաբանկ» ՓԲԸ–ի միջև 25.06.2010թվ. կնքվել է թիվ 002506 հիմնական պայմանագիրը, որի առարկան է

-47-
հանդիսացել պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով պայմանագրի գործողության ժամկետում վարկառուին միանվագ կամ մաս առ մաս առավելագույնը 12.000.000 (տասներկու միլիոն) ԱՄՆ դոլար կամ դրան համարժեք այլ արժույթ գումարով, որոշակի տոկոս վճարելու պայմանով վարկ (վարկեր, վարկային գիծ, երաշխիքներ, օվերդրաֆտներ) տրամադրումը: Վարկերի չափը սահմանվել է պայմանագրի հիման վրա կնքված լրացուցիչ համաձայնագրերով: Պայմանագրի գործունեության կազմակերպմանն նպատակով «Ձորագյուղ» Ա/Կ–ին տրամադրվել են 9.700.000 ԱՄՆ դոլար և 361.500.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկեր ըստ համաձայնագրերի և տրամադրման ժամկետների

Համաձայնագիրը Գումարը ԱՄՆ դպար Դրամ

14 ամսաթիվ
VP 003899 25.06.2010թ. 1000000
VP 004076 30.07.2010թ. 2000000
VP 004158 11.08.2010թ. 1000000
VP 004419 23.09.2010թ. 2000000
VP 004924-1 15.12.2010թ. 72500000
VP 004924 10.12.2010թ. * 289000000
VP 005258 14.02.2011թ. 1000000
VP 005258-1 02.03.2011թ. ,1000000
VP 005914
28.04.2011թ. 1000000
VP 006336 15.06.2011թ. 700000
9700000 361500000

361.500.000 (72.500.000+289.000.000) ՀՀ դրամ գումարի չափով դրամային վարկերը, արտարժույթի փոխանակումով, որի ժամանակ 50 ԱՄՆ դոլարը պահվել է որպես բանկային ծառայության վճար 999.450 (200.000+799.450) ԱՄՆ դոլար գումարով մուտքագրվել է «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում բացված դոլարային հաշվին: Ինչը նշանակում է, որ «Ձորագյուղ» Ա/Կ–ի և «Ամերիաբանկ» ՓԲԸ–ի միջև 25.06.2010թ. կնքված թիվ 002506 հիմնական պայմանագրի շրջանակներում «Ձորագյուղ» Ա/Կ–ին տրամադրված վարկի գումարը կազմել է 10.700.000 (9.700.000+999.450+550) ԱՄՆ դոլար:

«Ձորագյուղ» Ա/Կ–ի «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում բացված դոլարային հաշվին վարկային միջոցների մուտքագրումների, այդ հաշվից ելքագրումների հիմնական ուղղությունների, վարկային միջոցների Կիպրոսի Հանրապետության «HELENIC BANK PUBLIK COMPANY LTD» բանկի կողմից սպասարկվող «ABS GLOBAL LIMITED», «STR EMERALD LIMITED» և «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերություններից յուրաքանչյուրի հաշվեհամարին կատարված փոխանցումների, այդ ընկերությունների կողմից «Ձորագյուղ» Ա/Կ–ի բանկային հաշիվներին կատարված փոխանցումների ուսումնասիրությունից երևում է, որ, «ABS GLOBAL LIMITED» ընկերությանը արտարժույթով վճարման թվով.

26 հանձնարարագրերով 24.09.2010–24.06.2011թ.թ.
ժամանակահատվածում փոխանցվել

-48-

է 6.720.950 ԱՄՆ դոլար: Թեև հիշյալ հանձնարարագրերում որպես վճարման նպատակ վկայակոչվել է «Հանքահորերի գծով շահագործման համար» պայմանագիր, սակայն թե աշխատանքների կատարման համար կնքված պայմանագրեր և թե աշխատանքները կատարված լինելու վերաբերյալ փաստաթղթեր բացակայում են:

«STR EMERALD LIMITED» ընկերությանը, արտարժույթով վճարման թվով 2 հանձնարարագրերով 08.06.2010թ. և 02.08.2010թ.թ. ամսաթվերով փոխանցվել է 2.000.000 ԱՄՆ դոլար: Միաժամանակ «STR EMERALD LIMITED» ընկերության կողմից արտարժույթով վճարման թվով 15 հանձնարարագրերով 08.10.2010–07.06.2011թ.թ. ժամանակահատվածում «Չորագյուղ» Ա/Կ-ի «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում բացված դոլարային հաշվին փոխանցվել է 3.333.285 ԱՄՆ դոլար: Թեև հիշյալ հանձնարարագրերում որպես վճարման նպատակ վկայակոչվել է «Հանքահորերի գծով շահագործման համար» պայմանագիր, սակայն թե աշխատանքների կատարման համար կնքված պայմանագրեր, թե աշխատանքները կատարված լինելու վերաբերյալ փաստաթղթեր բացակայում են:

«WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերությանը 27.06.2011թ. փոխանցվել է 350.000 ԱՄՆ դոլար: Միաժամանակ «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերության կողմից արտարժույթով վճարման թվով 14 հանձնարարագրերով 24.06.2011– 30.12.2011թ.թ.

ժամանակահատվածում «Չորագյուղ» Ա/Կ-ի «Ամերիաբանկ», «Անելիքբանկ» և «Արդշինինվեստբանկ» ընկերություններում բացված դոլարային հաշիվներին փոխանցվել է ընդհանուր 1.707.032,3 ԱՄՆ դոլար: Թեև հիշյալ հանձնարարագրերում, որպես վճարման նպատակ վկայակոչվել է «Հանքահորերի գծով շահագործման համար» պայմանագիր, սակայն թե աշխատանքների կատարման համար կնքված պայմանագրեր, թե աշխատանքները կատարված լինելու վերաբերյալ փաստաթղթեր բացակայում են:

«Չորագյուղ» Ա/Կ-ի կողմից Կիպրոսի Հանրապետության «HELENIC BANK PUBLIK COMPANY LTD» բանկի կողմից սպասարկվող «ABS GLOBAL LIMITED», «STR EMERALD LIMITED» և «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերություններին 26.06.2010-27.06.2011թ.թ. փոխանցվել է ընդհանուր 9.070.950 («ABS GLOBAL LIMITED» 6.720.950+«STR EMERALD LIMITED» 2.000.000+«WLISPERA HOLDINGS LIMITED» 350.000) ԱՄՆ դոլար: Միաժամանակ Կիպրոսի Հանրապետության «HELENIC BANK PUBLIK COMPANY LTD» բանկի կողմից սպասարկվող «STR EMERALD LIMITED» և «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերությունների կողմից 08.10.10-30.12.11թ.թ. ժամանակահատվածում «Չորագյուղ» Ա/Կ-ին փոխանցվել է 5.040.317,3 («STR EMERALD LIMITED» 3.333.285+«WLISPERA HOLDINGS LIMITED» 1.707.032,3) ԱՄՆ դոլար կամ «HELENIC BANK PUBLIK COMPANY LTD» բանկի կողմից սպասարկվող «ABS GLOBAL LIMITED», «STR EMERALD LIMITED» և «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերությունների բանկային հաշիվներում «Չորագյուղ» Ա/Կ-ի կողմից փոխանցված դրամական միջոցների մնացորդը կազմել է 4.030.632,7 (9.070.950– «Չորագյուղ» Ա/Կ-ի Հայաստանյան բանկերում բացված հաշվեհամարներին մուտքագրված գումար 5.040.317,3) ԱՄՆ դոլար:

«Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում բացված դոլարային հաշվին մուտքագրված 10.699.450 ԱՄՆ դոլար վարկային միջոցներից Հայաստանի Հանրապետությունում տնօրինվել է 6.668.817,3 (10.699.450– «HELENIC BANK PUBLIK COMPANY LTD» բանկի կողմից սպասարկվող ընկերությունների բանկային հաշիվներում մնացած 4.030.632,7) ԱՄՆ դոլար:

-49-

«Չորագյուղ» Ա/Կ-ում «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունից ստացված վարկային միջոցների ծախսերի վերաբերյալ առանձնացված հաշվառում չի տարվել, այդ գումարները միացվել է կոոպերատիվի այլ աղբյուրներից ստացված եկամուտների հետ և տնօրինվել է դրանց հետ համատեղ:

գ/ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության թիվ 1570011192370101 ԱՄՆ դոլարային հաշվից ելքերը կազմել են 14.806.181,67 (ընդամենը մատքագրված 15.306.181,67–վերադարձված վարկ 500.000) ԱՄՆ դոլար, այդ թվում. 1

գ բացի Կիպրոսի Հանրապետությունում գրանցված ընկերություններին 9.070.950 ԱՄՆ դոլար փոխանցված գումարներից,

գ մարվել է վարկ 99.828.6 ԱՄՆ (2010թ. 500.000+2011թ. 99.828,6) ԱՄՆ դոլար,

գ ծախսվել է վարկի սպասարկման համար 14.892,93 (2010թ. 7.606,16+2011թ. 7.286,77) ԱՄՆ դոլար,

գ մարվել է վարկի տոկոսներ 70.251,02 ԱՄՆ դոլար,

գ վճարվել է «Պրեստիժնե էքսպորտ օֆֆիս ընկերությանը» 2010թ. 103.425 ԱՄՆ դոլար,

գ վճարվել է «Բրինկա» բեռնափոխադրող ընկերությանը 2010թ. 360 ԱՄՆ դոլար,

գ վճարվել է «Սարիբեկիր Անբալաժ» ընկերությանը 49.000 (2010թ. 42.000+ 2011թ. 7.000)ԱՄՆ դոլար,

գ վճարվել է «Ս.Ռասիսկալ» ընկերությանը 2011թ. 21.350 ԱՄՆ դոլար,

գ վճարվել է 2011թ. «Ինֆինիտի Ջեվրլի» կազմակերպությանը 16.050 ԱՄՆ դոլար,

գ վճարվել է 2011թ. «Գեորգի Նազարեթ Սաբունջյան» 7.000 ԱՄՆ դոլար,

գ վճարվել է 2011թ. էդուարդ Հակոբյանին 30.000 ԱՄՆ դոլար,

գ ելքագրվել է որպես արտարժույթի փոխանակում 1.477.633 (2010թ. 1.220.826,61+2011թ. 256.806,3) ԱՄՆ դոլար,

գ ելքագրվել է որպես հաշվի համալրում 329.523,59 ԱՄՆ դոլար,

գ ելքագրվել է դոլարային դրամարկղ մուտքագրելու նպատակով 1.910.020 (2010թ. 1.210.870 + 2011թ. 699.150) ԱՄՆ դոլար,

գ գնվել է ոսկի 1.605.896,51 («Արմավիսբանկ» ՓԲԸ–ից 2010թ. 511940 + «Ինկեկորբանկից» 2011թ. 700.000 (300.000+400.000 «Ամերիաբանկ» ՓԲԸ-ից, փոխանցելով նույն բանկի դրամային հաշվին, 2011թ. 393.956,51 (99.814+195.762,8+98.379,71) ԱՄՆ դոլար:

29.06.2010թ. հետո «Չորագյուղ» Ա/Կ–ի կողմից «Ամերիաբանկ» ՓԲԸ–ի բանկային հաշիվներից կատարված փոխանցումներով, ինչպես նաև կանխիկ վճարումով կատարվել է 1.250.480.513 ՀՀ դրամին համարժեք 3.170.506.58 ԱՄՆ դոլար արժեքով ոսկու և ադամանդի ձեռքբերումներ, այդ թվում

Ամսաթիվը ԱՄՆ դոլար ՀՀ դրամ
 «Ամերիաբանկե ՓԲԸ
 13.08.10 511940 188030442.6 Արմավիս
 Արիստոս ՍՊԸ
 12.08.10 13618.78 5000000
 12.08.10 11725.77 4305000
 12.08.10 13618.78 5000000

-50-

12.08.10 13618.78 5000000
 12.08.10 13618.78 5000000
 Ընդ 66200.90 24305000
 Փարվանա
 29.06.10 80002.78 29449824
 30.06.10 413021.90 151785546.8
 10.08.10 38912.98 14238650
 10.08.10 38863.11 14220400
 11.08.10 116214.17 42691275
 13.08.10 78634.84 28881792
 13.08.10 117841.66 43282062
 17.09.10 41485.91 15089256
 22.09.10 41438.44 15125446
 23.09.10 41687.48 15122550

24.09.10 83912.05 30397140
1092015.32 400283942
Ընդ 2010 ոսկի 1670156.23 612619384
«Ամերիաբանկե ՓԲԸ
15.02.2011 314140 114786756 Ինելկորբանկ
02.03.2011 400000 146888000 Ինելկորբանկ
02.05.2011 99814 37180000.00 Ամերիա
10.05.2011 195762.8 72627999 Ամերիա
16.06.2011 98379.71 36892390 Ամերիա

2011թ. ոսկի 1108096.51 408375145
Ընդամենը ոսկի ՀՀ բանկերից փոխանցումով և կանխիկ 2778252.74
1020994529

ներմուծում 2010

Ամսաթիվ) Ինվ. արժեք

11.08.2010 6,970.00 2550393 Սշուկփսծ ադամանդ
26.08.2010թ 106,540.05 39074629 Ոսկյա օդակաձև ձողվածք
10.09.201 Օթ 66,093.28 24069190 Սշուկփսծ ադամանդ
29.10.201 Օթ 62,172.79 22296406 Սշակկած ադամանդ
Ընդամենը 241,776.12 173877638

2011թ. ներմուծում

04.04.2011թ 2,177.52 805530 չմշակված արդյունաբերական ադամանդ
117,838.24 43591900 Չմշակված ադամանդ
120,015.76 44397430

16.08.2011թ 30,461.96 11210915 Չմշակված ադամանդ
Ընդամենը 2011թ. 150,477.72 55608345

-51-

Ընդամենը ադամանդի և ոսկյա ձուլվածքի ներմուծում 29.06.2010թ -2011թ.
392,253.84 229,485,983

Ընդամենը ոսկու և ադամանդի ձեռքբերում 29.06.2010թ 2011թ. ,
3,170,506.58 1,250,480,513

Կիպրոսի Հանրապետության «HELENIC BANK PUBLIK COMPANY LTD»
բանկի կողմից սպասարկվող «ABS GLOBAL LIMITED», «STR EMERALD
LIMITED» և «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերությունների
բանկային հաշիվներին 2010– 2013թ.թ. ընկած ժամանակահատվածում
կատարված բանկային գործարքների, այդ թվում մուտքերի, ելքերի,
կատարված փոխանցումների հիմքերի ուսումնասիրությունից պարզվել է,
որ.

«ABS GLOBAL LIMITED» ընկերության հաշվին «STR EMERALD
LIMITED» ընկերության կողմից փոխանցվել է 400 ԱՄՆ դոլար, իսկ
«WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերության կողմից^a 489.421,25 ԱՄՆ
դոլար:

«STR EMERALD LIMITED» ընկերության հաշվին «ABS GLOBAL
LIMITED» ընկերության կողմից փոխանցվել է 6.699.050 ԱՄՆ դոլար, իսկ
«WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերության կողմից 30.000 ԱՄՆ
դոլար:

«WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերության հաշվին «ABS GLOBAL
LIMITED» ընկերության կողմից փոխանցվել է 1.380.179 ԱՄՆ դոլար, իսկ
«STR EMERALD LIMITED» ընկերության կողմից գումար չի փոխանցվել:
«Չորագյուղ» Ա/Կ-ի կողմից Կիպրոսի Հանրապետությունում գրանցված
«ABS GLOBAL LIMITED», «STR EMERALD LIMITED» և «WLISPERA
HOLDINGS LIMITED» ընկերությունների հաշիվներին մնացած
գումարները միացվել է այդ ընկերությունների բանկային հաշիվներին այլ
աղբյուրներից ստացված միջոցների հետ և տնօրինվել է դրանց հետ
համատեղ:

Կիպրոսի Հանրապետության «HELENIC BANK PUBLIK COMPANY LTD»
բանկի կողմից սպասարկվող «ABS GLOBAL LIMITED», «STR EMERALD
LIMITED» և «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերությունների
բանկային հաշիվներից 2010– 2013թ.թ. ընկած ժամանակահատվածում

Սիեռա Լեոնեում գրանցված ընկերությունների հաշվեհամարներին կատարվել են ստորև բերված փոխանցումները:
գ«GMC GLOBAL SL» ընկերության հաշվին 2.046.000 («ABS GLOBAL LIMITED» ընկերության հաշվեհամարից որպես գրասենյակային ծախսեր և համաձայն հանքարդյունահանման պայմանագրի 1.434.800+«STR EMERALD LIMITED» ընկերության հաշվեհամարից որպես գրասենյակային ծախսեր և համաձայն հանքարդյունահանման պայմանագրի և երկրաբանական հետազոտության համար 611.200+«WLISPERA HOLDINGS LIMITED» 0) ԱՄՆ դոլար:
գ«GLOBAL KARAT» ընկերության հաշվին 80.000 («ABS GLOBAL LIMITED» ընկերության հաշվեհամարից 0+«STR EMERALD LIMITED» ընկերության

-52-

հաշվեհամարից առանց փոխանցման նպատակը նշելու 80.000+«WLISPERA HOLDINGS LIMITED»^a 0) ԱՄՆ դոլար:
(Հիշատակված փոխանցումների նպատակները մանրամասն արտացոլված են եզրակացությանը կից կազմված թիվ 2, թիվ 3, թիվ 4, թիվ 5 և թիվ 6 հավելվածներում):
Կիպրոսի Հանրապետությունում գրանցված «ABS GLOBAL LIMITED», «STR EMERALD LIMITED» և «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերությունների կողմից 2010-2013թ.թ. ընկած ժամանակահատվածում «Ձորագյուղ» Ա/Կ-ի բանկային հաշիվներին փոխանցած գումարների ծախսման վերաբերյալ առանձնացված հաշվառում չի տարվել, այդ գումարները միացվել է կոոպերատիվի այլ աղբյուրներից ստացված եկամուտների հետ և տնօրինվել է դրանց հետ համատեղ:
Կատարված վերլուծությունից ելնելով համալիր փորձաքննությամբ դիտվել է, որ համաձայն Աշոտ Սուքիասյանի կողմից 08.07.2014թ. ամսաթվով տրված ցուցումներում նշված տվյալների, «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության դոլարային հաշվին մուտքագրված վարկային և այլ միջոցների հաշվին կատարվել են 5.907.300 ԱՄՆ դոլար գումարի չափով ծախսեր: Ինչպես ծախսերի և համալիր փորձաքննությանը տրամադրված փաստաթղթերում առկա տվյալների համադրումից երևում է, որ այդ ծախսերը փաստաթղթավորված են 3.381.140,2 ԱՄՆ դոլար գումարի չափով կամ 2.526.159,82 (5.907.300 - 3.381.140,2) ԱՄՆ դոլարով պակաս: (Փարձաքննության հիշատակված եզրահանգման համար հիմք է ծառայել «Ձորագյուղ» Ա/Կ-ի նշված ժամանակահատվածի դրամային և ԱՄՆ դոլարային հաշիվների շարժի վերլուծությունը, որը ամփոփվել է եզրակացությանը կից կազմված թիվ 7 և 8 հավելվածներում):
Ինչ վերաբերում է վարկային պայմանագրի, բիզնես և ներդրումային ծրագրերի ընդհանրություններին, միմյանց համապատասխանության և տարբերություններին, ապա տվյալ փաստաթղթերի տնտեսագիտական վերլուծության կատարման արդյունքում համալիր փորձաքննությամբ պարզվել է, որ:
Վարկային հիմնական պայմանագրում և դրա հիման վրա կնքված լրացուցիչ համաձայնագրերում նշված վարկի տամադրման նպատակն իր մեջ ներառել է տնտեսական գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ տարրեր: Սա զուտ տնտեսագիտական տեսանկյունից նշանակում է, որ այն իր մեջ կարող է ներառել թե «Ձորագյուղ» Ա/Կ-ին վարկ տրամադրելու համար կազմված բիզնես ծրագրում և թե «Համատեղ ձեռնարկության վերաբերյալ» կնքված պայմանագրում (ներդրումային ծրագիր) նշված նպատակները: Միաժամանակ, վարկային հիմնական պայմանագրում և դրա հիման վրա կնքված լրացուցիչ համաձայնագրերում բացակայում է բիզնես և ներդրումային ծրագրերում տեղ գտած միջոցների օգտագործման նպատակների վերաբերյալ տեղեկատվություն: Իսկ ներդրումային և բիզնես ծրագրերի միջև առկա են հետևյալ էական անհամապատասխանությունները: Այսպես.
գ Եթե «Ձորագյուղ» Ա/Կ-ին վարկ տրամադրելու վերաբերյալ կազմված բիզնես ծրագրի սկզբնական փուլում նախատեսվել է ձեռք բերել հանքարդյունահանման տեխնիկա ընդհանուր 9.000.000 ԱՄՆ դոլարի չափով, ապա ներդրումային ծրագրով նախատեսվել է ընդամենը ներդրում կատարել «ABS Global» ընկերության գործունեության մեջ «Գործարար շահեր ձեռք բերելու և համատեղ պահելու» նպատակով,

առանց նշելու, թե ուր պետք է ուղղվեն այդ միջոցները և ինչ կոնկրետ նպատակի պետք է ծառայեն կատարված կամ կատարվելիք ներդրումները:

-53-

զ Ներդրումային և բիզնես ծրագրերը միմյանց չեն համապատասխանում նաև միջոցների օգտագործման գումարային առումով: Այսպես, եթե ներդրումային ծրագրով գործունեություն իրականացնելու համար սկզբնական փուլում նախատեսվել է ստանալ ընդամենը 5.750.000 ԱՄՆ դոլար գումար, որից 250.000 ԱՄՆ դոլարը ծախսվել է մինչև «Ձորագյուղ» Ա/Կ-ի կողմից «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունից վարկ ստանալը, ապա բիզնես ծրագրով նախատեսվել է սկզբնական փուլում սարքավորումների ձեռք բերման նպատակով ծախսել 9.000.000 ԱՄՆ դոլար:

զ Բիզնես ծրագրում որևէ հիշատակում չի արվել, որ վարկային միջոցների զգալի մաս կազմող 5.500.000 ԱՄՆ դոլար վարկային միջոցները պետք է ուղղվեն և օգտագործվեն Կիպրոսի Հանրապետությունում հիմնադրված որևէ ընկերության գործունեության կազմակերպմանը: Հիշատակում չկա նաև, որ վարկային միջոցները պետք է օգտագործվեն այդ պետությունում գրանցված ընկերությունների միջոցով:

զ Բիզնես ծրագրում խոսք է գնում միայն Սիեռա Լեոնեի Հանրապետությունում գործող «GLOBAL KARAT» ընկերության մասին, մինչդեռ ներդրումային ծրագրում հիշատակվում է նաև Սիեռա Լեոնեի Հանրապետությունում գործող մեկ այլ «GMC GLOBAL» ընկերությունը: Վերոգրյալից երևում է, որ համատեղ ձեռնարկության վերաբերյալ կնքված պայմանագիրն (ներդրումային ծրագիր) ուղղակի կապ և ընդհանրություն չունի Բիզնես ծրագրի հետ: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ թե Բիզնես ծրագրում, թե վարկային հիմնական պայմանագրում և դրա հիման վրա կնքված լրացուցիչ համաձայնագրերում և թե «Համատեղ ձեռնարկության վերաբերյալ» կնքված պայմանագրում (ներդրումային ծրագիր) առկա են տնտեսական գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ տարրեր, փորձաքննությամբ, զուտ տնտեսագիտական տեսանկյունից դիտվել է, որ բիզնես և ներդրումային ծրագրերում նախանշված միջոցների օգտագործման ուղղությունները չեն հակասում վարկի տրամադրման նպատակներին, քանի որ վարկային պայմանագրով, դրա հիման վրա կնքված լրացուցիչ համաձայնագրերով «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության կողմից «Ձորագյուղ» Ա/Կ-ին ընդհանուր 9.700.000 ԱՄՆ դոլարի և 361.000.000 ՀՀ դրամի չափով վարկային միջոցները տրամադրվել են «Հիմնական և շրջանառու միջոցների ձեռք բերման, կրեդիտորական պարտքերի մարման և ընթացիկ գործունեության կազմակերպման» նպատակով, այսինքն մանրամասնված չեն եղել վարկի օգտագործման կոնկրետ ուղղությունները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թե «Ձորագյուղ» Ա/Կ-ի կողմից և թե վարկային միջոցները ստացած Կիպրոսի Հանրապետությունում գրանցված ընկերությունների կողմից բիզնես ծրագրում նշված 2010-2011թվականների ընթացքում ընդհանուր 9.000.000 ԱՄՆ դոլար արժողության հանքանյութ լվանալու երկու շաղափ և մեկ լրացուցիչ հանքում գործողությունների իրականացնելու համար սարքավորումների անհրաժեշտ համախումբ «Կոմաթու» ընկերությունից ձեռք չեն բերվել, ուստի փորձաքննությամբ դիտվում է, որ վարկային միջոցները փաստացի չեն օգտագործվել բիզնես ծրագրով նախատեսված նպատակներին համապատասխան:

«Համատեղ ձեռնարկության վերաբերյալ» կնքված պայմանագրով (ներդրումային ծրագիր) նախատեսվել է ընդամենը ներդրում կատարել «ABS Global» ընկերության գործունեության մեջ «Գործարար շահեր ձեռք բերելու և համատեղ պահելու»

-54-

նպատակով, առանց նշելու, թե ուր պետք է ուղղվեն այդ միջոցները և ինչ կոնկրետ նպատակի պետք է ծառայեն կատարված կամ կատարվելիք ներդրումները: Ելնելով հիշյալից «Համատեղ ձեռնարկության վերաբերյալ» կնքված պայմանագիրը (ներդրումային ծրագիր), փորձաքննությամբ, զուտ տնտեսագիտական տեսանկյունից չի դիտվել որպես վարկային միջոցների օգտագործման հետ ուղղակիորեն կապ

ունեցող փաստաթուղթ:

Փորձաքննությանը տրամադրված «Ձորագյուղ» Ա/Կ-ի բանկային հաշիվների քաղվածքներում և հաշվապահական հաշվառման փաստաթղթերում արտացոլված Աշոտ Սուքիասյանի («Ձորագյուղ» Ա/Կ-ի) կողմից կատարած փաստացի ծախսերը ձևական առումով կատարվել են վարկային հիմնական պայմանագրում և դրա հիման վրա կնքված լրացուցիչ համաձայնագրերում նշված «Հիմնական և շրջանառու միջոցների ձեռք բերման, կրեդիտորական պարտքերի մարման և ընթացիկ գործունեության կազմակերպման» նպատակներով, սակայն դրանք փաստացի չեն համապատասխանել բիզնես ծրագրով նախատեսված ուղղություններին, իսկ «Համատեղ ձեռնարկության վերաբերյալ» կնքված պայմանագիրը - (ներդրումայի ծրագիր), փորձաքննությամբ, զուտ տնտեսագիտական տեսանկյունից չի դիտվել որպես վարկային միջոցների օգտագործման հետ ուղղակիորեն կապ ունեցող փաստաթուղթ:

ՀՀ ՖՆ ՕՀԿ-ի աշխատակիցների կողմից 25.11.2014թվականի ամսաթվով կազմված թիվ 5010753 ստուգման ակտում արձանագրված շահութահարկի և ԱԱՀ-ի դրվագներով, փորձաքննությանը տրամադրված փաստաթղթերում առկա տվյալներով նախաձեռնողի կողմից տրամադրված փաստաթղթերում արտացոլված և նախաքննությամբ ձեռք բերված տվյալներով ճշգրտվել և անուղղակի եղանակով հաշվարկվել է 2010-2012թ.թ. «Ձորագյուղ» Ա/Կ-ում լրացուցիչ առաջացող հարկերը, որոնք ըստ հարկատեսակների^ա տույժերով և տուգանքներով հանդերձ, կազմել են, ընդամենը^ա

Հարկի անվանումը Հարկի գումարի չափը Տույժերի գումարի չափը
Տուգանքն էրի գումարի չափը Ընդամենը
201 Օթ ;ախութահարկ 61076686 33439486 36646012 131162184
2011թ ;ա1տութահարկ 20457209 11200322 12274325 43931856
2012թ ;ահութահարկ 152258 83361 167484 403103
Ընդամենը 7ահութահարկ 81686153 44723169 49087821 175497143
2012թ փետրուար ԱԱՀ 137411 75232 82447 295090
2012թ. մարտ ԱԱՀ 124795 68325 74877 267997 |
2012թ ապրիլ ԱԱՀ 131315 71895 78789 281999

2012ր մայիս ԱԱՀ 118902 65099 71341 255342
2012 հունիս ԱԱՀ 248869 136256 149321 534446
Ընդամենը ԱԱՀ 761292 416807 456775 1634874
Ընդամենը հարկեր 82447445 45139976 49544596 177132017
-55-

Հարցի շրջանակներում կատարված վերլուծություններից ու հաշվարկներից ելնելով փորձաքննությամբ, զուտ հաշվապահական ու հարկային հաշվառման տեսանկյունից դիտվել է, որ
ա) Շահութահարկի գծով 2010-2011 թվականների հաշվետու տարիների կտրվածքով լրացուցիչ հաշվարկված 81.533.895 դրամ գումարի հարկը, որը տույժ և տուգանքներով հանդերձ կազմում է 175.094.040 (շահութահարկ 81.533.895 + տույժեր 44.639.808 + տուգանքներ 48.920.337) դրամ, առաջացել է «Ձորագյուղ» Ա/Կ-ի նախազգահի և հաշվապահի կողմից 2010-2011թվականների համար կազմված ու հաշվառման վայրի հարկային տեսչություն ներկայացրած շահութահարկի հաշվարկներում, այսինքն շահութահարկի հարկման համար հիմք հանդիսացող փաստաթղթում, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի «Եկամուտների թվին են դասվում, մասնավորապես ապրանքների, արտադրանքի /այսուհետ նաև ապրանք/ իրացումից ստացվող հասույթը...» և նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով պահանջների խախտմամբ թե համախառն եկամտի և թե այդ համախառն եկամտից նվազեցման ենթակա ծախսերի վերաբերյալ ոչ ճիշտ տվյալներ մտցնելու հետևանքով:
բ) Շահութահարկի գծով 2012թվ. կտրվածքով, 152.258 դրամ գումարի լրացուցիչ հարկը, որը տույժ և տուգանքներով հանդերձ կազմում է 403.103 (շահութահարկ 152.258 + տույժեր 83.361 + տուգանքներ

167.484) դրամ, առաջացել է «Ձորագյուղ» Ա/Կ-ի կողմից 2012թվ. համար շահութահարկի հաշվարկ, այսինքն շահութահարկի հարկման համար հինք հանդիսացող փաստաթուղթ չկազմելու և հաշվառման վայրի հարկային տեսչություն չներկայացնելու, կոնկրետ դեպքում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 46 հոդվածի «Շահութահարկ վճարողներն իրենց հաշվառման վայրի հարկային տեսչության մարմնին յուրաքանչյուր տարվա արդյունքներով, մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը (ներառյալ), ներկայացնում են սահմանված կարգով հարկային մարմնի կողմից հաստատված շահութահարկի հաշվարկներ, իսկ հաշվետու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ավելացված արժեքի հարկ վճարող չհամարված կազմակերպությունները շահութահարկի պարզեցված հաշվարկներ» պահանջների խախտման հետևանքով:

-56-

առաջացել է «Ձորագյուղ» Ա/Կ-ի կողմից Թուրքմենստանի չորս քաղաքացիներին վերը նշված ամիսներին մատակարարված ծառայություններից գոյացած ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունից ԱԱՀ չհարկելու, այսինքն «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի «ԱԱՀ-ով հարկվող գործարքներ /գործառնություններ/ են համարվում... 2) ծառայությունների մատուցումը ապրանքների մատակարարում չհամարվող գործարք /գործառնություն/, որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց, ներառյալ ոչ նյութական ակտիվների իրացումը /փոխանցումը/: Ծառայությունների մատուցում է համարվում նաև ապրանքների և անշարժ գույքի վարձակալությունը» և նույն հոդվածի 3-րդ կետի «3) անհատույց (մասնակի հատուցմամբ) սպահունք սույն օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող անձանց կողմից ապրանքների անհատույց հատկացում կամ ծառայությունների անհատույց մատուցում տվյալ անձանց կամ այլ անձանց կամ նրանց ապրանքների մատակարարում և ծառայությունների մատուցում տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորաբար կիրառվող գներից էականորեն ցածր գներով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերում իրավական այլ ակտով սահմանված դեպքերի» պահանջների խախտմամբ, 2012թ. մարտ, ապրիլ, մայիս և հունիս ամիսների համար կազմված ԱԱՀ-ի հաշվարկներում ԱԱՀ-ով հարկվող շրջանառության վերաբերյալ ոչ ճիշտ տվյալներ մտցնելու հետևանքով:
Հատոր 30 գ.թ. 36 – 169:

Դատարանի կողմից հետազոտվեց «Ձորագյուղ» Ա/Կ-ի հարկային գործի գննության մասին նախաքննական մարմնի 09.04.2015թ. արձանագրությունն այն մասին, որ համաձայն նախաքննության ընթացքում 2012թ. սեպտեմբերի 11-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոն վարչական տարածքի հարկային տեսչությունից առգրավված հարկային գործի 3-րդ թղթապանակի 91–95–րդ թերթերում առկա է «Ձորագյուղ» Ա/Կ-ի կողմից հարկային տեսչություն ներկայացված 2010թ. շահութահարկի հաշվարկը, որը մուտք է եղել ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոն վարչական տարածքի հարկային տեսչություն 2011թ. ապրիլի 21-ին: Նույն թղթապանակի 184-189-րդ թերթերում առկա է «Ձորագյուղ» Ա/Կ-ի կողմից հարկային տեսչություն ներկայացված 2011թվականի շահութահարկի հաշվարկը: Հարկային գործում բացակայել են «Ձորագյուղ» Ա/Կ-ի կողմից հարկային տեսչություն ներկայացման ենթակա 2012 թվականի շահութահարկի հաշվարկը: Իսկ 194-րդ, 198-րդ, 208-րդ և 219-րդ թերթերում առկա են հարկային տեսչություն ներկայացված 2012թվականի համապատասխանաբար մարտ, ապրիլ, մայիս և հունիս ամիսների «Ձորագյուղ» Ա/Կ-ի ԱԱՀ-ի հաշվարկները:

Հատոր 31, գ.թ. 127 – 128:

Դատարանի կողմից հետազոտվեց առգրավված նուտարական գործերի

զննության մասին նախաքննական մարմնի 27.04.2015թ. արձանագրությունն այն մասին, որ նախաքննության ընթացքում Երևանի Նոր – Նորքի և Էրեբունու նոտարական տարածքների նոտարներ Նոնա Գասպարյանից առգրավված թիվ 2350, 3053, 3054, 3055, 3056, 3333, 3966 և 421 սեղանամատյանների համարներով գրանցված, ինչպես նաև 2015թ. մարտի 31-ին Երևանի Էրեբունու նոտարական տարածքի նոտար Անահիտ Ղազարյանից առգրավված թիվ. 4 սեղանամատյանի համարով գրանցված նոտարական գործերի զննության արդյունքում պարզվել է, որ Նոնա Գասպարյանից առգրավված

-57-

Աշոտ Սուքիասյանի և «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության միջև կնքված պարտապան չհանդիսացող անձին պատկանող անշարժ գույքի գրավի թվով յոթ պայմանագրերով գործարքներ կատարելու համար Աշոտ Սուքիասյանն օգտագործել է Երևանի Էրեբունու նոտարական տարածքի նոտար Անահիտ Ղազարյանի կողմից վավերացված Փայլակ և Վարդան Հայրապետյաններին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքերը տնօրինելու վերաբերյալ լիազորագրերը, ինչպես նաև մեկ գործարքի կնքման ժամանակ օգտագործվել է «Ծովագարդի «Հայրապետ» հյուրանոցային համալիր» ՓԲ ընկերության տնօրեն Փայլակ Հայրապետյանի կողմից տրված ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը տնօրինելու գրավ դնելու վերաբերյալ լիազորագիրը: Իսկ նոտար Անահիտ Ղազարյանից առգրավված թիվ 4 սեղանամատյանի համարով գրանցված նոտարական գործը վերաբերում է Գագիկ Ղարիբջանի կողմից Աշոտ Սուքիասյանին սեփականության իրավունքով իրեն պատկանող անշարժ գույքը տնօրինելու գրավ դնելու համար լիազորագիր տրամադրելուն: Հատոր 31, գ.թ. 207 – 210:

Ղատարանի կողմից հետազոտվեց «Ալտա Վիպ» ՍՊԸ-ի կողմից «Չորագյուղ» Ա/Կ-ի հետ կնքված պայմանագրի շրջանակներում անշարժ գույքի գնահատման ակտերի զննության մասին նախաքննական մարմնի 02.10.2013թ. արձանագրությունն այն մասին, որ. Ըստ 29.07.2010թ. կազմված Երևանի Հր.Քոչարի փողոցի թիվ 2 հասցեում գտնվող անշարժ գույքի գնահատման թիվ ԳՀ/07/1622 ակտի, 28.07.2010թվ. դրությամբ տվյալ գույքի համեմատական և եկամտային մեթոդով գնահատմամբ դրա շուկայական արժեքը կազմել է 3.351.026.000 ՀՀ դրամ, իսկ լիկվիդացիոն արժեքը 2.345.719.000 ՀՀ դրամ:

Ըստ 29.07.2010թ. կազմված Երևանի Այգեստանի 11 փողոցի թիվ 77 հասցեում գտնվող անշարժ գույքի գնահատման թիվ ԳՀ/07/1621 ակտի, 28.07.2010թվ. դրությամբ տվյալ գույքի համեմատական և եկամտային մեթոդով գնահատմամբ դրա շուկայական արժեքը կազմել է 480.540.000 ՀՀ դրամ, իսկ լիկվիդացիոն արժեքը 336.378.000 ՀՀ դրամ:

Ըստ 27.10.2010թ. կազմված Երևանի Հր. Քոչարի փողոցի թիվ 4/9 հասցեում գտնվող անշարժ գույքի գնահատման թիվ ԳՀ/10/2456 ակտի, 27.10.2010թվ. դրությամբ տվյալ գույքի համեմատական և եկամտային մեթոդով գնահատմամբ դրա շուկայական արժեքը կազմել է 2.060.048.000 ՀՀ դրամ, իսկ լիկվիդացիոն արժեքը 1.442.033.000 ՀՀ դրամ:

Ըստ 30.06.2010թ. կազմված Երևանի Գաջեգործների 1 փողոցի թիվ 1 հասցեում գտնվող անշարժ գույքի գնահատման թիվ ԳՀ/06/1343 ակտի, 24.06.2010թվ. դրությամբ տվյալ գույքի համեմատական և եկամտային մեթոդով գնահատմամբ դրա շուկայական արժեքը կազմել է 1.471.577.000 ՀՀ դրամ, իսկ լիկվիդացիոն արժեքը 882.946.000 ՀՀ դրամ:

Ըստ 26.07.2010թ. կազմված Գեղարքունիքի մարզի Ծովագարդ համայնքում գտնվող «Ծովագարդի «Հայրապետ» հյուրանոցային համալիր»-ի գնահատման թիվ ԳՀ/07/1573 ակտի 23.07.2010թվ. դրությամբ տվյալ գույքի համեմատական և եկամտային մեթոդով գնահատմամբ դրա շուկայական արժեքը կազմել է 2.456.933.000 ՀՀ դրամ, իսկ լիկվիդացիոն արժեքը 1.597.007.000 ՀՀ դրամ:

Ըստ 26.07.2010թ. կազմված Վայոց Ձորի մարզի Զերմուկ քաղաքի Շահումյան

-58-

փողոցի թիվ 9 հասցեում գտնվող անշարժ գույքի գնահատման թիվ

ԳՀ/07/1577 ակտի, 23.07.2010թվ. դրությամբ տվյալ գույքի համեմատական և եկամտային մեթոդով գնահատմամբ դրա շուկայական արժեքը կազմել է 1.253.716.000 ՀՀ դրամ, իսկ լիկվիդացիոն արժեքը 877.601.000 ՀՀ դրամ:

Ըստ 26.07.2010թ. կազմված Գեղարքունիքի մարզի Ծովազարդ համայնքում գտնվող հյուրանոցային համալիրի, բնակելի տների, բնակելի թաղամասի գնահատման թիվ ԳՀ/07/1575 ակտի, 23.07.2010թվ.

դրությամբ տվյալ գույքի համեմատական և եկամտային մեթոդով գնահատմամբ դրա շուկայական արժեքը կազմել է 106.026.000 ՀՀ դրամ, իսկ լիկվիդացիոն արժեքը 74.218.000 ՀՀ դրամ:

Ըստ 26.07.2010թ. կազմված Գեղարքունիքի մարզի Ծովազարդ համայնքում գտնվող հյուրանոցային համալիրի, բնակելի տների, բնակելի թաղամասի գնահատման թիվ ԳՀ/07/1574 ակտի, 23.07.2010թվ.

դրությամբ տվյալ գույքի համեմատական և եկամտային մեթոդով գնահատմամբ դրա շուկայական արժեքը կազմել է 262.202.000 ՀՀ դրամ, իսկ լիկվիդացիոն արժեքը 170.431.000 ՀՀ դրամ:

Հատոր 21, գ.թ. 1 – 2:

Ղատարանի կողմից հետազոտվեց Կիպրոսի Հանրապետություն ուղարկված իրավական օգնություն ցուցաբերելու մասին միջնորդությունների կատարման արդյունքում քննչական խմբի կողմից 2013թվ. սեպտեմբերի 18-ին Կիպրոսի Հանրապետությունից բերված, ինչպես նաև Կիպրոսի Հանրապետության իրավասու մարմինների կողմից 2014թվ. փետրվարի 10-ին միջնորդությունների կատարման շրջանակներում ուղարկված Կիպրոսի Հանրապետությունում գործող «HELENIC BANK PUBLIK COMPANY LTD» բանկի կողմից տրամադրված և սպասարկվող, Կիպրոսի Հանրապետությունում գրանցված «ABS GLOBAL LIMITED», «STR EMERALD LIMITED» և «WLISPERA HOLDINGS LIMITED» ընկերությունների հիմնադրման, այդ թվում Կիպրոսի Հանրապետության իրավաբանական անձանց գրանցման գրասենյակից ստացված փաստաթղթերի, գրասենյակի ներկայացուցիչ Իրինի Միլունայի ցուցմունքների, բանկային հաշիվների շարժի և տվյալ ընկերությունների կողմից կատարված բանկային գործառնությունների հիմքերի վերաբերյալ քննության տրամադրության տակ գտնվող փաստաթղթերի գննության վերաբերյալ նախաքննական մարմնի 08.08.2014թ. արձանագրությունը և կից կազմված թվով յոթ աղյուսակները, որտեղ արտացոլված են կիպրոսյան վերը նշված ընկերությունների բանկային հաշիվների շարժի և կատարված գործարքների նպատակների վերաբերյալ ամփոփված տվյալները:

Հատոր 26, գ.թ. 92 – 104:

Ղատարանի կողմից հետազոտվեց «Ձորագյուղ» Ա/Կ-ի կողմից վարկ ստանալու համար կազմված բիզնես ծրագրի /դրա անգլերեն տարբերակի հայերենով թարգմանության/ գննության մասին նախաքննական մարմնի 02.10.2013թ. արձանագրությունն այն մասին, որ բիզնես ծրագրի «Կազմակերպչական աշխատանքների նախագծում» բաժնում նշված է, որ «Գլոբալ Կարատ» ընկերությունը, որը Սիերա Լեոնեում հիմնված հանք է, ունի լիցենզիա շահագործելու ադամանդի և ոսկու հանքեր Սիերա Լեոնեի արևելյան մասի երեք տարբեր հատվածներում: Ընկերությունը պետք է ձեռք բերի հանքանյութը լվանալու երկու շաղափ, որը ներառում -59-

է խոզանակի և լվացման բաղադրիչներ, մեկը ոսկու և մյուսը ադամանդի մշակման համար: Այս շաղափները բերվելու են Հարավային Ամերիկայից, որոնցից յուրաքանչյուրն արժե մոտ 2 միլիոն դոլար: Բացի դրանից, ևս մեկ լրացուցիչ հանքում գործողություններ իրականացնելու համար սարքավորումների անհրաժեշտ համախումբ կպատվիրվի «Կոմաթսուից», որը գնահատվում է 5 միլիոն դոլար և իր մեջ ներառում է էքսկավատոր, բուլդոզեր, բարձիչներ, բեռնատարներ, հզոր գեներատորներ և ջրի պոմպեր: Արդյունքում, անհրաժեշտ սարքավորումներ ձեռք բերելու համար պահանջվող ներդրումը կազմում է 9 միլիոն դոլար: Ապա կատարված է հետևյալ վերլուծությունը, որ. «ընկերության

ներդրման ռազմավարությունը ներառում է վերևում նշված սարքավորումների ձեռքբերումը նախագծի առաջին իսկ ժամկետմներում»:

Բիզնես ծրագրի «Նախապատմություն և նպատակներ» բաժնում նշված է, որ «ծրագրի կարճաժամկետ նպատակները, որոնց իրականում կարելի է հասնել մեկ տարվա ընթացքում, հետևյալն են

զ ձեռք բերել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ֆինանսական նախագիծն իրականացնելու համար,

զ ամրապնդել հարաբերությունները անհրաժեշտ սարքավորումներ մատակարարողների, արտադրողների հետ,

զ ձեռք բերել անհրաժեշտ սարքավորումները հանքանյութը լվանալու երկու մաղեր և փորող սարքավորումների ամբողջական համակարգ.

զ մեր երկրի հանքերից դեպի Սիերա Լիոնե սարքավորումների տեղափոխում և տեղադրում.

զ համապատասխանեցնել վերակառուցված շենքը ոսկու առևտրի կենտրոնի պահանջներին,

զ իրականացնել լայնածավալ գործողություններ

հանքարդյունաբերության մեջ,

զ մեծացնել ոսկու և ադամանդի մշակումը և առևտրի ծավալը Սիերա Լեոնեի հանքերում,

զ ձեռնարկել գործողություններ ոսկու առևտրի կենտրոնի համար»:

Բիզնես ծրագրի «Մարքեթինգային պլան» բաժնում նշված է, որ.

«նախագծի նախապատրաստական փուլը, որը ներառում է Սիերա Լեոնեի հանքերի համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերումը,

նախատեսում է սկսել 2010թվ. հուլիս ամսի սկզբին: Այսպիսով, ըստ ընկերության պլանների Սիերա Լեոնեում լայնածավալ արտադրական գործողություններ կսկսվեն 2010թվ. օգոստոսին, որոնց քանակը

կավելանա 5 ամիս հետո, ինչպես նաև կբացվի ոսկերչական առևտրի կենտրոնը մինչև 2010թվ. հոկտեմբերը, իսկ վարձակալական

տարածքները պատրաստ կլինեն 2010թվ. օգոստոսին»:

Բիզնես ծրագրում առկա է նաև աղյուսակ, որից երևում է, որ Աշոտ Սուքիասյանը հանդիսանում է «Գլոբալ Կարատ» ընկերության

բաժնետոմսերի 50 տոկոսի սեփականատերը:

Հատոր 21, գ.թ. 6 – 10:

Ղատարանի կողմից հետազոտվեց «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի և «Ձորագյուղ» Ա/Կ-ի միջև վարկ տրամադրելու համար կնքված պայմանագրերի, վարկի հայտ-դիմումների, վարկ տրամադրելու վերաբերյալ եզրակացության, Կիպրոսի Հանրապետություն -60-

կատարված փոխանցումների, ոսկու ձուլակտորների ձեռքբերման վերաբերյալ փաստաթղթերի, «Ձորագյուղ» Ա/Կ-ի մաքսային թղթապանակի գնության վերաբերյալ նախաքննական մարմնի 13.04.2015թ. արձանագրությունն այն մասին, որ 2010թվ. հունիսի 25-ին «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության և «Ձորագյուղ» Ա/Կ-ի միջև կնքվել է թիվ 002506 հիմնական պայմանագիրը, որով բանկը պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով Պայմանագրի գործողության ժամկետում միանվագ կամ մաս առ մաս տրամադրում է վարկ /վարկեր/, վարկային գիծ/եր/երաշխիք/ներ/, օվերդրաֆտ/ներ առավելագույնը 12.000.000 ԱՄՆ դոլարի կամ դրան համարժեք այլ արժույթ/գումարով, որոշակի տոկոս վճարելու պայմանով, որի չափը սահմանվում է պայմանագրի հիման վրա կնքված լրացուցիչ համաձայնագրերով, իսկ վարկառուն պարտավորվում է պայմանագրով և/կամ հանաձայնագրերով սահմանված կարգով, պայմաններով և ժամկետներում վերադարձնել ստացված վարկը և դրա դիմաց վճարել տոկոսներ:

Ապա 2010թվ. հունիսի 30-ին, 11.08.2010թ., 10.09.2010թ., 14.02.2011թ.

կնքվել են համաձայնագրեր «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության և

«Ձորագյուղ» Ա/Կ-ի միջև 25.06.2010թ. կնքված թիվ 002506 հիմնական պայմանագրի փոփոխության մասին, որոնցով սահմանվել է, որ

պայմանագրով և/կամ համաձայնագրերով բանկի հանդեպ վարկառուի ստանձնելիք պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովված է, Երևանի Չաջեգործների 1-ին փողոցի 1-ին, Այգեստանի 11-րդ փողոցի

թիվ 77, Հր.Քոչար փողոցի թիվ 2-րդ և 4-րդ շենքի 4/9 հասցեում, Ծովագարդ համայնքի Մարշալ Բաղրամյան փողոցի թիվ 12, Հաղթանակի փողոցի թիվ 10 և Արմիրալ Իսակովի փողոցի թիվ 10 հասցեներում, Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի 9-ը հասցեում գտնվող անշարժ գույքերով և դրանց վերաբերյալ կնքված անշարժ գույքի գրավի պայմանագրերով:

«Ամերիաբանկ» ՓԲ ընկերության և «Ձորագյուղ» Ա/Կ-ի միջև 25.06.2010թ. կնքված թիվ 002506 հիմնական պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերում նշվել է, որ. «Վարկառու պարտավոր է վարկն օգտագործել հիմնական և շրջանառու միջոցների ձեռքբերման, կրեդիտորական պարտքերի մարման, ընթացիկ ֆինանսատնտեսական գործունեության կազմակերպման նպատակով»: «Ձորագյուղ» Ա/Կ-ին վարկ տրամադրելու վերաբերյալ եզրակացությամբ, որտեղ նշված է, որ Աշոտ Սուքիասյանը հանդիսանում է Սիերա Լեոնեում ադամադե և ոսկու հանքերի շահագործմամբ զբաղվող «GLOBAL Karat» ընկերության 50 տոկոսի սեփականատեր: Իսկ տվյալ ընկերության 30 տոկոսը պատկանում է Սերգեյ Տրիկազյուկին, 10-ական տոկոսները Անդրեյ Գոդլեվսկուն և Ռուբեն Մկրտչյանին:

Նույն եզրակացության մեջ նշված է նաև, որ Աշոտ Սուքիասյանը հանդիսանում է Կիպրոսում գրանցված «GLOBAL Կառատ ԼՏԴ» ընկերության ֆինանսական գործարքներ իրականացնող «EMERALD LTD» ընկերության 50 տոկոսի սեփականատեր: Ընկերության 30 տոկոսը պատկանում է Սերգեյ Տրիկազյուկին, 10-ական տոկոսները Անդրեյ Գոդլեվսկուն և Ռուբեն Մկրտչյանին:

Բացի այդ, եզրակացությունում նշված է նաև, որ. «ընկերությունը ներկայումս իրականացնում է լայնածավալ գործունեություն Սիերա Լեոնեում: Համաձայն ներկայացված թիզնես ծրագրի ընկերությունը մոտակա 5 տարիների ընթացքում նախատեսում է իրականացնել մոտ 26 մլն. ԱՄՆ դոլար գումարի ներդրում», որից 17.000.000 ԱՄՆ դոլարը սարքավորումների ձեռքբերման, 6.110.000 ԱՄՆ դոլարը սարքավորումների վերակառուցման /վերանորոգման/, 3.000.000 ԱՄՆ դոլարը ընթացիկ

-61-

գործառնական ծախսեր կատարելու ուղղություններով:

Նշված է նաև, որ. «ներկայումս ընկերությունը վերոնշյալ ներդրումներից նախատեսում է իրականացնել հետևյալ ներդրումները սարքավորումների ձեռքբերում 9,000.000 ԱՄՆ դոլար /թվով 2 հատ լվացող հոսքագծեր 4.000.000 ԱՄՆ դոլարով, էքսկավատոր, բուլդոզեր, բարձիչներ, բեռնատար ավտոմեքենաներ, գեներատորներ և ջրային պոմպեր /հիմնական մատակարարը Կոմաստու մակնիշի// 5.000.000 ԱՄՆ դոլարով, ընթացիկ գործառնական ծախսեր՝ 3.000.000 ԱՄՆ դոլարով»: Առկա է տեղեկատվություն նաև այն մասին, որ «ընկերության հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմում է 8.161.566 ԱՄՆ դոլար: Բացի նշվածից Աշոտ Սուքիասյանի կշիռը «GLOBAL Karat» ընկերությունում կազմում է մոտ 10.000.000 ԱՄՆ դոլար»:

Աշոտ Սուքիասյանի կողմից ստորագրված և «Ամերիաբանկ» ՓԲ ընկերություն ներկայացված թվով երկու վարկի հայտ-դիմումներում նշված է, որ Աշոտ Սուքիասյանը հանդիսանում է «Մետաքս Գոլդ», «GLOBAL KARAT LTD» և «EMERALD LTD» ընկերությունների 50 տոկոսի սեփականատերը: Տրամադրվող 12.000.000 ԱՄՆ դոլար վարկային միջոցների հիմնական մասը նախատեսվում է ծախսել հանքի շահագործման համար հանքարդյունահանող սարքավորումներ ձեռք բերելու նպատակով, մի մասն էլ Երևանի ոսկերչական առևտրային կենտրոնի կազմակերպման և զարգացման նպատակով: Նշված են նաև որպես գրավ առաջարկվող Երևանի Քոչարի 4/9, Այգեստան 11-77, Գեղարքունիքի մարզի Ծովագարդ համայնքում և Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքում գտնվող ընդհանուր 6.570.000.000 ՀՀ դրամ գնահատված անշարժ գույքերի անվանումները: Վարկի 2-րդ հայտ-դիմումում գետեղված է տեղեկատվություն, որ Աշոտ Սուքիասյանը Սիերա Լեոնեի «GLOBAL Karat LTD» ընկերությունում ունի մոտ 10.000.000 ԱՄՆ դոլարի կշիռ:

Հատոր 31, գ.թ. 190 – 201:

Ղատարանի կողմից հետազոտվեց ամբաստանյալ Ա.Սուքիասյանի և պաշտպան Յու.Խաչատրյանի կողմից նախաքննական մարմնին փաստաթղթերի, լուսանկարների և DVD սկավառակների պարունակությունը գննության ենթարկելու մասին նախաքննական մարմնի 29.09.2014թ. արձանագրությունն այն մասին, որ հետազոտվել է նաև Ա.Սուքիասյանի ցուցմունքներում վկայակոչված վարկային միջոցների նպատակային օգտագործման մասին վկայող համատեղ ձեռնարկության վերաբերյալ 2010թվ. փետրվարի 10–ի ամսաթվով թվագրված պայմանագրի պատճենը կնքված Ա.Սուքիասյանի, Սերգեյ Տրիկազյուկի, Ալեքսանդր Վալչեկովսկու և Ռուբեն Մկրտչյանի միջև: Բովանդակային առումով հետազոտվել է նաև պայմանագրի հայերեն թարգմանությունը: Նշված փաստաթղթի հետ կապված հատկանշական է այն, որ պայմանագրում հիշատակված «WLISPERA HOLDINGS LIMITED LTD» և «ABS GLOBAL» ընկերությունները հիմնադրվել են, համապատասխանաբար 2010թվ. մայիսի 6–ին և 2010թվ. հուլիսի 13–ին, այսինքն վերը նշված պայմանագրի կազմման ամսաթվից ամիսներ հետո: Հետևաբար, 2010թվ. փետրվար ամսին չէին կարող հայտնի լինել դրանից ամիսներ անց պետական գրանցում ստացած ընկերությունների անվանումները: Ավելին, պայմանագրում հիշատակում է արված այդ ընկերություններին գումարներ փոխանցելու մասին, ինչը նույնպես 2010թվ. փետրվար ամսվա դրությամբ չէր կարող իրական լինել: Կատարված փոխանցումները, ստույգ գումարային

-62-

արտահայտմամբ, այն վարկային միջոցներն են, որոնք 2010թվ. հունիս ամսից հետո ստացվել են «Ձորագյուղ» Ա/Կ-ի կողմից Փ.Հայրապետյանի և նրա հարազատների գույքի «Ամերիաբանկ» ՓԲ ընկերությունում գրավադրման արդյունքում:

Հատոր 28, գ.թ. 141 – 154:

Ղատարանի կողմից հետազոտվեցին նաև «Ամերիաբանկ» ՓԲԸ–ի կողմից դատարանին ներկայացված փաստաթղթերի փաթեթը, Երևանի Նոր - Նորքի նոտարական տարածքի նոտար Նոնա Գասպարյանից առգրավված թիվ 2350, 3053, 3054, 3055, 3056, 3333, 3966 և Երևանի էրեբունու նոտարական տարածքի նոտար Անահիտ Ղազարյանից առգրավված թիվ 4 սեղանամատյանի համարով գրանցված նոտարական գործերը, ինչպես նաև «Ձորագյուղ» Ա/Կ-ի հարկային գործն իրեղեն ապացույց ճանաչելու մասին նախաքննական մարմնի 29.04.2015թ. որոշումը, այլ փաստաթղթերն ապացույց ճանաչելու մասին նախաքննական մարմնի 29.04.2015թ. որոշումը, ինչպես նաև գործում եղած այլ փաստացի տվյալները:

Հատոր 32, գ.թ. 22 – 23, 24 – 26:

Ղատական նիստի արձանագրություն:

Ղատարանի իրավական վերլուծությունը.
Գնահատելով դատաքննությամբ հետազոտված բոլոր ապացույցները, դրանք համադրելով իրենց համակցության մեջ դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնված, ապացույցների ձեռք բերման աղբյուրներն ստուգելու միջոցով, գործին վերաբերվող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ, ինչպես նաև ներքին համոզմամբ, դատարանն ապացուցված համարեց ամբաստանյալ Աշոտ Արշիկի Սուքիասյանի կատարած արարքները, գտավ, որ նախաքննական մարմնի կողմից դրանց տրվել է քրեաիրավական ճիշտ որակումներ, դրանք համապատասխանում են ՀՀ քրեական օրենսգրքի 2–րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներին և նշված հոդվածներով վերջինս ենթակա է քրեական պատասխանատվության և պատժի:

Ղատարանը ոչ արժանահավատ և մտածածին է համարում ամբաստանյալ Ա.Սուքիասյանի այն պատճառաբանությունները, որ իբրև

խաբեություն տեղի չի ունեցել, որ իր և Փ.Հայրապետյանի միջև ընդամենը եղել է քաղաքացիա-իրավական հարաբերություններ, որոնք իրենց մեջ ճիսկային գործոն են պարունակել, սակայն իրականում Փ.Հայրապետյանն է ներխուժել իր բիզնես ոլորտ նպատակ ունենալով իրենից խել իր բիզնեսը, որը հարուցված քրեական գործի և իրեն առաջադրված մեղադրանքի արդյունքում, նրան հաջողվել է: Ամբաստանյալ Ա.Սուքիասյանի ներկայացված փաստարկները դատարանը գտնում է անհիմն, որոնք չեն բխում գործով ձեռք բերված և դատաքննությամբ հաստատված տվյալներից, նպատակ են հետապնդում խուսափել քրեական պատասխանատվությունից և պատժից: Միաժամանակ, դատարանն անհիմն է գտնում ամբաստանյալ Ա.Սուքիասյանի շահերի պաշտպան Յու.Խաչատրյանի միջնորդությունը հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ իր պաշտպանյալի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի

-63-

178 հոդվածի 3 մասի 1-ին կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3 մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդվածի 2-րդ մասով արդարացման դատավճիռ կայացնելու մասին, քանի որ գործի նախաքննությամբ և դատաքննությամբ ձեռք բերված ապացույցների բավարար ամբողջությունն ու համակցությունը հիմք է տալիս հաստատված և ապացուցված համարել ամբաստանյալ Ա.Սուքիասյանի նպատակադրված և ամբողջական դիտավորյալ գործողությունները, որոնց արդյունքում վերջինս տուժող Փ.Հայրապետյանին մոլորության մեջ զգելով, խաբեության եղանակով տիրացել և տնօրինել է վերջինիս առանձնապես խոշոր չափերի անշարժ գույքի գրավադրման արդյունքում ստացված գումարները, հանցավոր ճանապարհով ստացված գույքն /դրամական միջոցները/ օրինականացրել /փողերի լվացում/ և խուսափել է վճարել հարկերը:

Պատժի տեսակ և չափ նշանակելիս, դատարանը հաշվի է առնում կատարված հանցագործության բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, ամբաստանյալի անձն այն, որ ամբաստանյալ Ա.Սուքիասյանը նախկինում արատավորված և դատապարտված չի եղել, ամուսնացած է, սակայն խնամքին որևէ անձ չունի, ֆիզիկապես առողջ է: Ամբաստանյալ Ա.Սուքիասյանի համար պատասխանատվությունը մեղմացնող և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ դատարանը դատաքննությամբ չհայտնաբերեց:

Միաժամանակ պատժի չափ նշանակելիս դատարանը ցանկանում է անդրադառնալ հետևյալ հանգամանքին: Մեղադրական ճառ հրապարակելու ժամանակ, մեղադրող Դ.Վեքիլյանը ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդվածի 2-րդ մասով ամբաստանյալ Ա.Սուքիասյանի նկատմամբ պատժաչափ է միջնորդել ազատազրկում 4 տարի ժամկետով: Մինչ 2009թվականի հուլիս ամիսը, ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդվածի 2-րդ մասի սանկցիան պատժաչափ է սահմանել ազատազրկում երեքից վեց տարի զգույքի բռնագրավմամբ կամ առանց դրա: Ամբաստանյալ Ա.Սուքիասյանին ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքը վերաբերվում է 2010-2012թ.թ. ընթացքում «Չորագյուղ» արտադրական կոոպերատիվի կողմից իրականացրած տնտեսական գործունեության արդյունքում առաջացած 82.447.445 ՀՀ դրամ հարկերը պետական բյուջե վճարելուց խուսափելու համար: 2009թվականի հունիսի 26-ի «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ. ՀՕ-149-Ն օրենքի համաձայն, ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդվածի 2-րդ մասի պատժաչափը փոփոխվել և պատիժ է սահմանվել ազատազրկում հինգից տաս տարի ժամկետով զույքի բռնագրավմամբ: Նկատի ունենալով, որ ամբաստանյալ Ա.Սուքիասյանին առաջադրված մեղադրանքը վերաբերվում է 2010-2012թ.թ. ժամանակահատվածի ընթացքում հարկերը վճարելուց խուսափելուն, ուստի բնականաբար պատիժ միջնորդելիս մեղադրողը պետք է ղեկավարվեր այդ ժամանակ ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդվածի 2-րդ մասով սահմանված պատժաչափերով, այն է ազատազրկմամբ հինգից տաս տարի ժամկետով, այլ ոչ թե պատժաչափի նվազագույն շեմից պակաս պատժաչափով, այն է ազատազրկում չորս

տարի ժամկետով: Հավանաբար մեղադրողի տեսադաշտից դուրս է մնացել ՀՀ քրեական օրենսգրքում տեղի ունեցած օրենքի փոփոխությունը և միջնորդություն կատարելիս վերջինս ղեկավարվել է ՀՀ քրեական օրենսգրքի նախկին խմբագրության պատժաչափերով ազատազրկում երեքից վեց տարի ժամկետով և պատժաչափ է միջնորդել չորս տարի ժամկետով ազատազրկում: ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդվածի 2-րդ մասով ամբաստանյալ Ա.Սուքիասյանի նկատմամբ

-64-

պատժաչափ սահմանելիս, դատարանը ղեկավարվելու է 2009թվականի հունիսի 26-ից մինչև այժմ ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդվածի 2-րդ մասով սահմանված պատժաչափով, այն է ազատազրկում հինգից տասն տարի ժամկետով գույքի բռնագրավմամբ:

ՀՀ քրեական օրենսգրքի 10 հոդվածի 1-ին կետի համաձայն, հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեաիրավական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի՝ համապատասխան են հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ կետի համաձայն, պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

ՀՀ քրեական օրենսգրքի 61 հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ...»:

Անդրադառնալով խափանման միջոցի հարցին, դատարանը գտնում է, որ ամբաստանյալ Ա.Սուքիասյանի նկատմամբ որպես կալանավորում կիրառված խափանման միջոցը պետք է թողնել անփոփոխ՝ մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Քննարկելով ապացույցների տնօրինման հարցը, դատարանը գտնում է, որ գործով իրեղեն ապացույց և ապացույց ճանաչված փաստաթղթերը պետք է թողնել քրեական գործում:

Անդրադառնալով տուժողներ Փայլակ Հայրապետյանի, Վարդան Հայրապետյանի և Գագիկ Ղարիբյանի կողմից ներկայացված քաղաքացիական հայցերի պահանջներին, դատարանը գտնում է, որ քաղաքացիական հայցերի պահանջները հիմնավոր են, դրանք բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 367 հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17, 1058, 1077-1078 հոդվածների պահանջներից և ենթակա են ամբողջությամբ բավարարման:

Քննարկելով մեղադրող Դ.Վեքիլյանի կողմից ներկայացված 82.447.445 ՀՀ դրամ քաղաքացիական հայցի պահանջը, դատարանը գտնում է, որ մեղադրողի քաղաքացիական հայցի պահանջը հիմնավոր է, այն բխում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 367 հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17, 1058, 1077-1078 հոդվածների պահանջներից և ենթակա է ամբողջությամբ բավարարման:

Անդրադառնալով հանցանքների համակցությամբ պատիժ նշանակելու հարցին, դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածի 4-րդ կետի համաձայն, ամբաստանյալ Աշոտ Արշիկի Սուքիասյանի նկատմամբ վերջնական պատիժ պետք է նշանակել պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով:

Քննարկելով նախաքննական մարմնի 19.06.2013թվ. որոշմամբ ամբաստանյալ Ա.Սուքիասյանին պատկանող շարժական և անշարժ գույքերի, ինչպես նաև 165.300 ՀՀ դրամ արժողության թվով 47 գարդերի, քարերի, մեխանիզմների վրա դրված արգելանքի հարցը, դատարանը գտնում է, որ այն պետք է թողնել անփոփոխ՝ մինչև գույքի վրա կալանք դնելուց բխող սահմանափակումների կիրառման անհրաժեշտության վերանալը:

-65-

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 357-360, 365, 369-373 հոդվածներով, դատարանը.

ՎՃՌԵՑ

Աշոտ Արշիկի Սուքիասյանին ճանաչել մեղավոր ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3 մասի 1-ին կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3 մասի 1-ին կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքներում: ՀՀ քրեական օրենսգրքի 178 հոդվածի 3 մասի 1-ին կետով դատապարտել ազատազրկման 8 /ութ/ տարի ժամկետով գույքի բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի քան հանցագործությամբ պատճառված գույքային վնասի չափը: ՀՀ քրեական օրենսգրքի 190 հոդվածի 3 մասի 1-ին կետով դատապարտել ազատազրկման 8 /ութ/ տարի ժամկետով գույքի բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի քան հանցագործությամբ պատճառված գույքային վնասի չափը: ՀՀ քրեական օրենսգրքի 205 հոդվածի 2-րդ մասով դատապարտել ազատազրկման 6 /վեց/ տարի ժամկետով գույքի բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի քան հանցագործությամբ պատճառված գույքային վնասի չափը: ՀՀ քրեական օրենսգրքի 66 հոդվածի 4-րդ մասի համաձայն, պատիժները մասնակիորեն գումարելու միջոցով Աշոտ Արշիկի Սուքիասյանի նկատմամբ վերջնական պատիժ նշանակել ազատազրկում 16 /տասնվեց/ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ, սակայն ոչ ավելի քան հանցագործությամբ պատճառված գույքային վնասի չափը, որը պետք է կրի ՀՀ Արդարադատության նախարարության համապատասխան հիմնարկում:

Աշոտ Արշիկի Սուքիասյանի նկատմամբ որպես կալանավորում կիրառված խափանման միջոցը թողնել անվտուխ և պատժի սկիզբը հաշվել 2014թվականի հունվարի 31-ից:

Աշոտ Արշիկի Սուքիասյանից հոգուտ տուժող Փայլակ Հայրոյի Հայրապետյանի բռնագանձել 8.519.412.692 /ութ միլիարդ հինգհարյուր տասնինը միլիոն չորս հարյուր տասներկու հազար վեց հարյուր իննսուներկու/ ՀՀ դրամ, որպես հանցագործության հետևանքով վերջինիս պատճառված գույքային վնասի հատուցում: Աշոտ Արշիկի Սուքիասյանից հոգուտ տուժող Վարդան Փայլակի Հայրապետյանի բռնագանձել 623.403.360 /վեց հարյուր քսաներեք միլիոն չորս հարյուր երեք հազար երեք հարյուր վաթսու/ ՀՀ դրամ, որպես հանցագործության հետևանքով վերջինիս պատճառված գույքային վնասի հատուցում:

Աշոտ Արշիկի Սուքիասյանից հոգուտ տուժող Գագիկ Խորենի Ղարիբյանի բռնագանձել 2.763.897.948 /երկու միլիարդ յոթ հարյուր վաթսուներեք միլիոն ութ հարյուր իննսույոթ հազար ինը հարյուր քառասունութ/ ՀՀ դրամ, որպես հանցագործության հետևանքով վերջինիս պատճառված գույքային վնասի հատուցում:

Աշոտ Արշիկի Սուքիասյանից հոգուտ պետական բյուջե բռնագանձել 82.447.445 /ութսուներկու միլիոն չորս հարյուր քառասույոթ հազար չորս հարյուր քառասունհինգ/ ՀՀ դրամ գումար, որպես հանցագործության հետևանքով պետությանը պատճառված գույքային վնասի հատուցում: Իրեղեն ապացույց և ապացույց ճանաչված այլ փաստաթղթերը թողնել քրեական գործում:

-66-

Նախաքննական մարմնի 19.06.2013թվ. որոշմամբ Աշոտ Արշիկի Սուքիասյանին պատկանող շարժական և անշարժ գույքի, ինչպես նաև 165.300 ՀՀ դրամ արժողության թվով 47 զարդերի, քարերի, մեխանիզմների վրա դրված արգելանքը թողնել անվտուխ՝ մինչև գույքի վրա կալանք դնելուց բխող սահմանափակումների կիրառման անհրաժեշտության վերանայլը:

Դատավարության մասնակիցների կողմից դատավճիռը կարող է բողոքարկվել հրապարակման պահից մեկամսյա ժամկետում՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ Վ.Ա.

Դատական ակտի ամսաթիվը: 02-10-2017

Այլ նշումներ:

Գործը հանձնվել է գրասենյակ

Գործը հանձնվել է գրասենյակ: 16-11-2017

Էջերի քանակ:	1-292, 2-252, 3-348, 4-265, 5-307, 6-143, 7-407, 8-338, 9- 370, 10- 240, 11-273, 12-391, 13-234, 14- 375, 15-411, 16-289, 17-328,18-347,19-243,20-136, 21-215, 22-324, 23-337,24-387, 25 227, 26- 126, 27- 293, 28-268, 29-171, 30-172, 31-217, 32-160, 33-294
Գործին կից նյութերը:	
Այլ նշումներ:	, 34-199, 35-120, 36-217,37-197, 38-214, 39-121, 40-191, 41-111, 42-174, 43-191, 44-235, 45-124:

Բողոքարկվել է	
Բողոքարկվել է:	Ըստ էության լուծող դատական ակտը
Ամսաթիվ:	02-11-2017
Այլ նշումներ:	

Գործն ուղարկվել է	
Գործը ուղարկվել է:	16-11-2017
Էջերի քանակը:	1-292, 2-252, 3-348, 4-265, 5-307, 6-143, 7-407, 8-338, 9- 370, 10- 240, 11-273, 12-391, 13-234, 14- 375, 15-411, 16-289, 17-328,18-347,19-243,20-136, 21-215, 22-324, 23-337,24-387, 25 227, 26- 126, 27- 293, 28-268, 29-171, 30-172, 31-217, 32-160, 33-294
Գործին կից նյութերը:	
Ուր(դատարան):	Քրեական վերաքննիչ
Ուր:	
Ելքի գրության համարը:	Ե-30312/17
Այլ նշումներ:	1-292, 2-252, 3-348, 4-265, 5-307, 6-143, 7-407, 8-338, 9- 370, 10- 240, 11-273, 12-391, 13-234, 14- 375, 15-411, 16-289, 17-328,18-347,19-243,20-136, 21-215, 22-324, 23-337,24-387, 25 227, 26- 126, 27- 293, 28-268, 29-171, 30-172, 31-217, 32-160, 33-294,34-199, 35-120, 36-217,37-197, 38-214, 39-121, 40-191, 41-111, 42-174, 43-191, 44-235, 45-124:

Դատական Գործ N: ԵԷՂ/0054/01/15

Քրեական վերաքննիչ

Ստացվել է վերաքննիչ բողոք

Ամսաթիվ:	01-11-2017
-----------------	------------

Ամբաստանյալ

Անձ	
Անուն	Աշոտ
Ազգանուն	Սուքիասյան
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒

Հոդված_1				
Հոդված	178	Մաս 3	Կետ 1	

Հոդված_1				
Հոդված	190	Մաս 3	Կետ 1	

Հոդված_1				
Հոդված	205	Մաս 2		

Դատվածություն:	
-----------------------	--

Պաշտպան	
Անուն	Յուրիկ

Ազգանուն	Խաչատրյան		
Հասցե	ք. Երևան , Բաղալ Մուրադյան 12 շ., բն. 21		
Պատիժ:			
Հոդված_2			
Հոդված			
Խախտման միջոց:	Կալանավորում		
Ում կողմից է բերվել բողոքը:	Պաշտպան		
Բողոքը բերող անձը			
Անուն	Յուրիկ		
Ազգանուն	Խաչատրյան		
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒		
Բողոքի բովանդակությունը:	<p>Աշոտ Սուքիասյան Վերաքննիչ բողոքն ընդունել վարույթ : Բեկանել ամբողջությամբ էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ Աշոտ Արշիկի Սուքիասյանի /ՀՀ քր.օր. 178 հոդ.3-րդ մասի 1-ին կետով , 190 հոդ.3-րդ մասի 1-ին կետով և 205 հոդ. 2-րդ մասով , ՀՀ քր.օր. 66 հոդ. վերջնական պատիժ - ազատազրկում 16 տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ , սակայն ոչ ավելի քան հանցագործությամբ պատճառված գույքային վնասի չափը / վերաբերյալ 02.10.2017թ. դատավճիռը , Աշոտ Սուքիասյանին ճանաչել անպարտ և արդարացնել , վերացնել քաղաքացիական հայցերը բավարարելու վճիռը , իսկ դրա համար բավարար հիմքեր չգտնելու դեպքում գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը : Կամ բեկանել դատավճիռը և վերացնել ՀՀ քր.օր. 190 հոդ.3-րդ մասի 1-ին կետով և 205 հոդ. 2-րդ մասով առաջադրված մեղադրանքները : Նշված հոդվածներով մեղավոր ճանաչելը հաստատված համարելու դեպքում վերջնական պատժաչափը նվազեցնել :</p>		
Բողոքի ստացման կարգը:	Առձեռն հանձնվել է գրասենյակ		
Ամսաթիվ:	01-11-2017		
Չափահաս:	Այո		
Կայացվել է որոշում:			
Որոշման ամսաթիվը:			
Որոշման բովանդակություն:			
Երկշաբաթյա ժամկետում կրկին ներկայացվել է բողոք:			
Այլ նշումներ:			
Ստացվել է վերաքննիչ բողոք			
Ամսաթիվ:	06-11-2017		
Ամբաստանյալ			
Անձ			
Անուն	Աշոտ		
Ազգանուն	Սուքիասյան		
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒		
Հոդված_1			
Հոդված	178	Մաս 3	Կետ 1
Հոդված_1			
Հոդված	190	Մաս 3	Կետ 1
Հոդված_1			
Հոդված	205	Մաս 2	

Ղատվածություն:	
Պաշտպան	
Անուն	Կարեն
Ազգանուն	Հակոբյան
Հասցե	ք.Երևան ,Վաղարշյան փող. 12 շ., 5 հ. 13 սենյակ
Պատիժ:	
Հոդված_2	
Հոդված	
Խախտման միջոց:	Կալանավորում
Ում կողմից է բերվել բողոքը:	Պաշտպան
Բողոքը բերող անձը	
Անուն	Կարեն
Ազգանուն	Հակոբյան
Հասցե	▒▒▒▒▒▒▒▒▒▒
Բողոքի բովանդակությունը:	Աշոտ Սուքիասյան Սույն բողոքն ընդունել վարույթ : Ամբողջությամբ բեկանել և փոփոխել Երևանի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ ամբաստանյալ Աշոտ Արշիկի Սուքիասյանի /ՀՀ քր.օր. 178 հոդ.3-րդ մասի 1-ին կետով , 190 հոդ.3-րդ մասի 1-ին կետով և 205 հոդ. 2-րդ մասով , ՀՀ քր.օր. 66 հոդ. վերջնական պատիժ - ազատազրկում 16 տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ , սակայն ոչ ավելի քան հանցագործությամբ պատճառված գույքային վնասի չափը / վերաբերյալ 02.10.2017թ. դատավճիռը , հռչակել վերջինիս անմեղությունը : Արդարացնելու մասով բողոքը մերժելու դեպքում՝ բեկանել և փոփոխել դատավճիռը պատժի մասով , նշանակել ավելի մեղմ պատիժ կամ ամբողջությամբ բեկանելով ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության :
Բողոքի ստացման կարգը:	Հանձնվել է փոստին
Ամսաթիվ:	02-11-2017
Չափափաս:	Այո
Կայացվել է որոշում:	
Որոշման ամսաթիվը:	
Որոշման բովանդակություն:	
Երկշաբաթյա ժամկետում կրկին ներկայացվել է բողոք:	
Այլ նշումներ:	
Գործը ստացվել է	
Գործի ստացման ամսաթիվ:	16-11-2017
Վիճակագրական տողի համարը:	
Գործը բաղկացած է (հատոր / էջերի քանակ):	
Գործը ստացվել է:	Էրեբունի և Նուբարաշեն
Այլ նշումներ:	
Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ	
Ըստ էության լուծող դատական ակտեր:	Դատավճիռ (արդարացման/մեղադրական)
Ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելու և ... մասին դատական ակտ կայացրած դատավորների ցանկ	
Դատարանի անվանում:	Քրեական վերաքննիչ

Դատավորի անուն:	
Բողոքարկվել է միևնույն դատական ակտը:	
Այլ նշումներ:	
Մակագրել	
Ամսաթիվ:	16-11-2017
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Քրեական վերաքննիչ
Դատավորի անուն:	Անդրանիկ Մնացականյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քրեական վերաքննիչ
Դատավորի անուն:	Նարինե Ռադիկի Հովակիմյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Քրեական վերաքննիչ
Դատավորի անուն:	Կարեն Հենրիկի Մարդանյան
Ընդունվել է վարույթ	
Ամսաթիվ:	17-11-2017
Նշանակվել է դատական քննություն	
Երբ:	12-12-2017
Ուղարկվել է ծանուցագիր:	
Ժամ:	12:30
Այլ նշումներ:	
Նիստերի դահլիճի համարը:	3
Նիստը:	
Պատճառը:	